AZG NEW SHABAT.QXD 04/10/2017 21:25 Page 1

6 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2017 ՈՒՐԲԱԹ 37(5485)

# Ազգ
Azg

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ISSN: 1829-1651

## Ալիեւն ուզում է բանակցել

Ադրբեջանի նախագահ **Իլհամ Ալիեւը** հայտարարել է, որ առաջիկա շաբաթ օրը Բաքվում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հետ քննարկելու է Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հետ հնարավոր հանդիպման հարցը: «Կարծում եմ, որ բանակցային ձեւաչափը պետք է վերսկսվի: Մի քանի օրից ես կհանդիպեմ Մինսկի խմբի համանախագահներին եւ մենք կքննարկենք հետագա բանակցությունները, ինչպես նաեւ նախագահների մակարդակով հնարավոր հանդիպումը», ասել է Ալիեւը:

Նշենք, որ համանախագահները շաբաթ օրը Բաքու մեկնելուց առաջ լինելու են Երեւանում, իսկ ամերիկացի նոր համանախագահ Շեֆերն արդեն տարածաշրջանում է, նա չորեքշաբթի Արցախ էր այցելել` ճանաչողական այցով:

Հ. ԱՓ.

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Քաղցկեղ. մահվան դատավճի՞ռ, թե՞...

Հազվագյուտ են այն մարդիկ, ովքեր այս կամ այն կերպ երբեւիցե չեն առնչվել քաղցկեղային հիվանդությունների հետ– հայր, մայր, քույր, եղբայր, կին, ամուսին, երեխա, ընկեր ու բարեկամ: Սրտանոթային հիվանդություններից հետո քաղցկեղը, կամ բժշկագիտական եզրույթով` չարորակ նորագոյացությունները, ամենատարածվածն ու ամենավտանգավորն են: Թեեւ ՀՀ առողջապահության նախարարության հրապարակած վիճակագրական տվյալներում Հայաստանում քաղցկեղից մահացության թվեր ու տոկոսներ չեն տրվում (տես` moh.am), սակայն մեր երկրում քաղցկեղի տարածման դինամիկան մտահոգիչ է: Պատճառները, որոնց չեմ ուզում անդրադառնալ` հայտնի են– սխալ կամ թերի սննդակարգ, տարբեր տեսակի ստրեսներ, ընկճախտ, նստակյացություն, ալկոհոլի չարաշահում եւ ծխախոտի գործածում: Նաեւ` բուժման երբեմն ոչ արդիական միջոցներ:

Անդրադառնալով համաշխարհային ցուցանիշներին, անգլիական նշանավոր եւ իմ ամենասիրած շաբաթահանդեսը` «Էկոնոմիստը», իր նախավերջին համարում բերում է սարսափազդու թվեր: Միայն 2015 թ.ին աշխարհում քաղցկեղից մահացել է 8,8 միլիոն մարդ, եւ այդ թիվը սպառնում է առաջիկա 5 տարում հասնել 20 միլիոնի: Ըստ նույն թերթի, քաղցկեղով հիվանդների թվի աճը առավել նկատելի է հարուստ երկրներում, թեեւ, ավելացնում է, Աֆրիկյան ցամաքամասում էլ, որտեղ ընդամենը մեկ տասնամյակ առաջ գլխավոր «մարդասպանը» համարվում էր մալարիան, այժմ «առաջնությունը» պատկանում է քաղցկեղին: Այսուհանդերձ, վերադառնալով հարուստ երկրներին, եթե ընդամենը մեկ սերունդ առաջ Մ. Նահանգներում երեքից մեկն էր ախտորոշվել այդ հիվանդությամբ, ապա այսօր այդ հարաբերակցությունը մոտենում է երկուսից մեկին: Վերոհիշյալ թվերի աճի որպես հավելյալ պատճառ պետք է նկատի ունենալ նաեւ երկրագնդի բնակչության աճի ու ծերացման տեմպերը, հասկապես հաշվի առնելով, որ երեխաների ու երիտասարդների մոտ քաղցկեղով հիվանդացության դեպքերը զգալիորեն նվազ են, իսկ հիվանդանալու պարագայում համեմատաբար մեծ է այն հաղթահարելու հավանականությունը: «Ջահելների մոթորը դեռ թարմ է», պիտի ասեր բժիշկ ընկերս:

Այսուհանդերձ «Էկոնոմիստը» մեր ժողովրդային լեզվով ասած` միայն «բայդուշությամբ» չի զբաղվում: Եվ ես ինձ համար ամենեւին անսովոր այս թեմայի մասին գրում եմ հենց այն պատճառով, որ բոլորովին պետք չէ հուսահատվել: Ներկայումս այնքան մեծ ներդրումներ են կատարվում քաղցկեղի ուսումնասիրման, տեսակավորման, ախտաճանաչման, բուժման-վիրաբուժության, քիմոթերապիայի, դեղորայքային բուժման (ըստ անգլիական շաբաթահանդեսի` ներկայումս ավելի քան 600 օնկոլոգիական նոր դեղամիջոցներ են փորձարկվում աշխարհի տարբեր կենտրոններում) եւ հարակից մարզերում, որ ակնկալվում է, օրինակ` Մ. Նահանգներում, քաղցկեղով հիվանդների ապրելիության ցուցանիշների աճ մինչեւ 60 տոկոս եւ առնվազն 5 տարով:

Անշուշտ, քաղցկեղային հիվանդությունների տեսակներն իրարից տարբեր են, նաեւ տարբեր` իրենց բուժելիության կարելիությամբ: Ամենատարածվածն ու դժվարաբուժելին համարվում է թոքերինը, թեեւ ամենաանբուժելին` բայց ոչ տարածվածը (առաջին 10 տեսակների ցուցակում չի գտնվում) համարվում է փայծաղի քաղցկեղը: Տարածվածությամբ 2-րդը կրծքի քաղցկեղն է, որի դեմ պայքարի արդյունքները ողջ աշխարհում տպավորիչ են: 3-րդը հաստ աղիքինն է, 4-րդը` շագանակագեղձինը, այնուհետեւ` ստամոքսինը, լյարդինը, վիզ-պարանոցինը եւ մյուսները: Լեյքեմիան չի մտնում առաջին 10-յակի մեջ եւ համարվում է մեծամասամբ բուժելի, իսկ առավելաբար սեռավարակների մոտ ախտորոշվող Պապիլոմայի վիրուսի (լավորակ նորագոյացություն, որ չբուժվելու դեպքում առաջացնում է արգանդի վզիկի քաղցկեղ) կանխարգելումը այժմ հաջողությամբ իրականացվում է Ռուանդայում` պատվաստման (վաքսինացիա) միջոցով:

Այսուհանդերձ, ինչպես ծանոթ է բոլորին, որեւէ հիվանդության վաղ ախտորոշումը անհամեմատելիորեն հեշտացնում է բուժումը: (Հենց այդ պատճառով է, որ թոքերի քաղցկեղը դժվարաբուժելի է, քանի որ դրա հայտնաբերումը սովորաբար կատարվում է հիվանդության 3-րդ, անգամ 4-րդ հանգրվանին): Այս մարզում մեծագույն դեր կարող է կատարել ընտանեկան բժշկության համակարգը, որը Հայաստանում այդպես էլ դեռ չի կայանում:

Սակայն հիվանդությունների դեմ պայքարի ամենաճիշտ միջոցը կանխարգելումն է, որը պահանջում է նվազ գումարներ եւ ազատում բազում տառապանքներից, ապահովում կյանքի բնականոն ընթացքը: Տարբեր պետություններ տարբեր միջոցներ են ձեռք առնում` ըստ իրենց բնակչության ու երկրի հնարավորությունների: Սակայն բոլորի սկզբունքը նույնն է` շարժունակության խթանում, ճիշտ սննդակարգ, ալկոհոլի չչարաշահում, ծխախոտից հրաժարում: Այժմ զարգացած շատ երկրներում անխախտելի օրենք է, որ սիգարետի ակցիզային հարկը պետք է կազմի գնի 3-4-րդը:

Մեր երկրում կարո՞ղ ենք գոնե ձգտել կանխարգելման այդ եւ մեզահատուկ այլ մեթոդների կիրառմանը: Այնքան ժամանակ, որ մեր ազգաբնակչությունը չի հասել գիտակցության այդ մակարդակին, մեր կառավարությունները առողջապահության ասպարեզում եւս թույլատրում են հասարակության հաշվին գերշահույթ ստանալու մաֆիոզական գործունեությունը, այնքան ժամանակ, որ մեր ամենազանգվածային լրատվամիջոցներն իրենց «առողջապահական» ծրագրերը պահում են գովազդային` այս կամ այն դեղորայքը, այս կամ այն կլինիկան, այս կամ այն մակնիշի յուղի, կարագի, կաթնեղենի կամ այլ ապրանքի պրոպագանդման մակարդակում, մենք չենք հասնի առողջապահության ցանկալի ցուցանիշներին, այդ թվում` քաղցկեղային հիվանդությունների կանխարգելման եւ բուժման ասպարեզում:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

## Անդորրը խախտողները



Հայաստանի քաղաքական դաշտում հարաբերական անդորր է` հիմնական որոշումների կայացման համար դեռ ժամանակ կա` աշնան մնացած մասն ու ձմեռը, դե գոնե հունվարը ներառյալ, երբ հարկ կլինի կողմնորոշվել` ով ում բարեկամն է, միայն կոալիցիա՞ն է երկրի նոր ղեկավար կերտելու գործը գլուխ բերում, թե արտակոալիցիան էլ է ավելի արտոնյալ պայմանների դիմաց այդ նույն գործին կոչում ու հաշվեկշռի բերում վերին պայմանավորվածությունները: Եւ առհասարակ` ո՞վ է մնում, ով է գնում, կամ` ում կթողնեն, որ մնա:

Մի փոքրիկ նորություն կա այս համատեքստում այն վերլուծությունների առումով, որոնց հեղինակները չգիտես ինչու ժամանակին որոշել էին, թե ներկա նախագահը միգուցե ուզում է Ազգային անվտանգության խորհրդի նախագահ դառնալ եւ այդ բեւեռից համակարգել երկրի ղեկավարումը: ԱԺ պատգամավոր **Հրայր Թովմասյանը**, հավանաբար ոչ առանց շարժառիթի, պարզություն մտցրեց այդ հարցում` ԱԱԽ-ը վարչապետի համակարգմամբ է գործելու նոր սահմանադրական փոփոխություններով, այնպես որ`2018 թվականից ով լինի վարչապետը, նա էլ ղեկավարելու ԱԱԽ-ը, հասկացա՞ք: Սահմանադրությունը պետք է շուտ-շուտ կարդալ:

Իսկ առայժմ բացառիկ ոսկե մի ժամանակ է` «վաստակած» հետընտրական անդորրի եւ Գագիկ Սուրենյանի կանխատեսած Հայաստանի ոսկե աշունը վայելելու առումով, հանգիստ մի իրավիճակ, որը հազիվ թե այլեւս կրկնելի լինի, եթե նկատի առնենք, թե արդեն հունվարից հետո ինչեր կարող են տեղի ունենալ, ու ընդհանրապես` հետո իրերի դեֆակտո ինչ դրություն կարող է լինել: Անգամ Արցախի հարցի հետ կապված մանր նորությունները, Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների` սպասվող հանդիպումը, զանազան մանր-մունր ինտրիգները չեն ձգում երկրիս կորիֆեյների անխռովությունը սասանող որեւէ ծանրակշիռ պատճառ ձեւավորելուն: Մեր քաղաքական «էլիտան» մի փոքրիկ անցումային ու հանգիստ ժամանակ է նվեր ստացել ակամա (քանի որ որոշում կայացնողները դեռ կենդանության նշաններ ցույց չեն տալիս) եւ փորձում է վայելել այդ հարաբերականորեն հանգիստ ժամանակը հարսանիքների, կերուխումների մեջ:

Դե իսկ մսի, կարագի եւ այլ առաջին անհրաժեշտության ապրանքների զգալի թանկացումները ի՞նչ են, որ խռովեն մերոնց անշարժությունը, մի քանի հազար դրամ էս կողմ-էն կողմ, նրանց միլիոնների մեջ դա միթե կարող նշմարվել: Իսկ թե սովորական մարդիկ կարագ ու միս ուտում են, թե՞ չեն ուտում`դա չի կարող նրանց համար հոգս լինել, քանի որ կա երկրիս նոր կառավարություն, թող ոնց ուզում է` տակից դուրս գա: Վերջինս էլ իր խնդիրները երեւի որոշել է լուծել գնաճը պակաս զսպելով կամ չզսպելով, պետք չէ խանգարել նրան:Արդեն իսկ օրենսդրորեն 2018 թվականի հունվարի 1-ից շուրջ 900 ապրանքի մաքսատուրքի դրույքաչափերը փոխվելու են, եւ էական թանկացումներ կարող են լինել, դա անխուսափելի գործընթաց է, ու դրա դեմ մեր «էլիտարները» ջանք չեն ուզում գործադրել:

⇨3

## Բաքուն հիշեցնում է աշխարհին, որ նավթ ու գազ ունի

Արեւմուտքում շարունակվող հակաալիեւյան կոռուպցիոն բացահայտումների ֆոնին, երբ փաստարկվում է, որ Ադրբեջանը կաշառում է եվրոպացի տարբեր գործիչների, **Իլհամ Ալիեւը** Բաքվում ԵՄ պատվիրակության հետ հանդիպմանը հիշեցրել է իր երկրի առավելությունների մասին: Անվանելով Ադրբեջանը «Եվրոպայի համար միակ նոր էներգետիկ աղբյուր» ` Ալիեւն ասել է. «Մենք արտահանում ենք նավթ, գազ եւ էլեկտրաէներգիա տարբեր ուղղություններով: Մենք ունենք 7 խողովակաշար, 3-ը` նավթատար, 4-ը` գազատար: Մեզ համար ամենախոշոր շուկան Եվրոպան է, որն ավելի շատ է ունենալու գազի կարիք: Ադրբեջանն էլ նոր աղբյուր է, հեռու չի գտնվոմ, պաշարները մեծ են, եւ ունի տասնամյակների համար բավարար ներուժ»:

Ըստ ամենայնի Բաքու ժամանած ԵՄ պատվիրակները Ալիեւի համար նոր դեմքեր են եղել, եւ մարդն ուղղակի ներկայացրել է նրանց, թե ի՞նչ կարող է հյուրասիրել Ադրբեջանը իր բարեկամներին:



Պետության հաշվին ապրողները էջ 5



Երեք խնձորների փոխարեն էջ Ա




Եվրոպական անջատողականությունն ու դրա սպառնալիքները էջ 6

AZG NEW SHABAT.QXD 04/10/2017 21:25 Page 2



ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

# Եօթ գլխանի հրէշը՝ կաշառքը

Երեւանեան թերթ մը կը մէջբերէ «...աշխատանքի ընդունուելու համար... կաշառք տալու պատրուակով պահանջել է 500 ԱՄՆ դոլար»... Շարունակութեան մէջ կ՛ըսուի, թէ կաշառքը ստացող անձը, որ իւրացուցած է գումարը առանց խոստացածը կատարելու, ձերբակալուած է, ինչպէս նաեւ ձերբակալուած է կաշառք տուողը:

Գործի ընդունուելու համար՝ կաշառք... Տարիներ առաջ, երբ առաջին անգամ լսեցի ծանօթի մը պատմածը, թէ բժշկութիւն աւարտած իր աղջիկէն հիւանդանոցի մը մէջ աշխատանքի ընդունուելու համար 5000 ԱՄՆ տոլար պահանջուած է, չհաւատացի, կարծելով որ հեքիաթային չափազանցութիւն է: Սակայն ուրիշ անգամներ ալ երբ լսեցի եւ հաստատուեցաւ լուրը, զարմանքս զայրոյթի վերածուեցաւ. ի՞նչ կը նշանակէ գործ գտնելու համար կաշառք վճարել, ան ալ շատ սովորական աշխատավարձի մը սիրոյն, որ 200 տոլարը չ՛անցնիր, այսինքն համալսարանաւարտ մը գալիք իր 3-4 տարուան ստանալիք աշխատավարձը կանխիկ պիտի վճարէ, որպէսզի յաջորդ տարիներուն կարենայ օգտուիլ այդ ամսականէն եւ իր ու իր ընտանիքին կարիքները հոգալ: Փաստօրէն մի քանի տարի ձրի պիտի աշխատի...

Անցեալները թաքսիի վարորդի մը հետ կը խօսէի եւ ի միջի այլոց, երբ յիշեցի որ ուսուցիչ եմ, ըսաւ որ իր աղջիկն ալ մանկավարժ է, սակայն դեռ անգործ է, քանի որ ուսուցչութեան պաշտօնի ընդունուելու համար իրմէ 1000 տոլար պահանջած են...

Կաշառքը երեւի սովորական երեւոյթ է շատ երկիրներու մէջ, երբեմն ուղղակի դրամով, երբեմն քողարկուած, երբեմն ալ տարբեր տեսակի նուէրներով: Տասնամեակներ առաջ Խորհրդային Հայաստան ուսանելու եկած արտասահմանցիներ, յաճախ ոսկեղէնով մը, կամ շիշ մը քոնիաքով կը կաշառէին իրենց դասախօսները, ոչ անպայման անյաջողութիւնը յաջողութեան վերածելու, այլ պարզապէս գոհացնելու համար դասախօսը, որ քննութեան լաւ պատասխանող ուսանողին իսկ կրնար ձախողեցնել, եթէ տուեալ անձը ձեռքերը պարապ ներկայացած ըլլար քննութեան: Անշուշտ բացառութիւններ ալ եղած են, անաչառ դասախօսներ եւ ուսանողներ, սակայն կաշառատուութիւնը բացառիկ երեւոյթ մը չէ եղած:

Հասկնալի է. կա՛մ ընչաքաղցութենէ մղուած, կա՛մ մարդոց ստացած աշխատավարձը անբաւարար եղած է եւ ակամայ այդ անազնիւ միջոցին դիմած են եւ դժբախտաբար այս վիճակին իբրեւ հետեւանք, թացն ու չորը միասին քշուած են, սակայն արտասահմանի մէջ այդ ուսանողները, արդէն շրջանաւարտ եղած, երբ գործի ասպարէզ նետուած են, շրջան մը ետք ժողովրդային մաղէն անցած են ոմանք, ոմանք ալ մնացած են... մաղին մէջ: Ժողովուրդին հետ գործ ունեցողը ի վերջոյ գոյնը դուրս կու տայ:

Անցեալին, Հայաստանի համալսարաններու դասախօսներն ու տնօրէնները հաշիւ չեն ըրած, որ իրենց կեղծ գնահատականները ոչ միայն կը գունաթափին, այլեւ Հայաստանի վարկին հետ կը խաղան, եւ պատահեցաւ որ կեղծ վկայականներով ասպարէզ իջնողները պատճառ դարձան որ մարդիկ թերահաւատ դառնան Հայաստանի համալսարաններէն վկայուողներուն նկատմամբ:

- Ո՞ւր ուսաներ է:
- Հայաստան:
- Վազ անցիր...
- Բայց կ՛ըսեն շատ լաւ է:
- Վրաս գրէ, չեմ հաւատար:

Ասիկա անցեալին ընթացիկ երեւոյթ էր: Շատ բան փոխուած է այս օրերուն, դէպի վատթարը: Հայաստանի անկախութեան ու յառաջդիմութեան հետ, սա եօթ գլխանի հրէշին գլուխները կտրող պիտի չըլլա՞յ:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Հակառակ «սահմանափակման» թեզի հեղինակների՝ Հայաստանի արտաքին առեւտուրը ԵԱՏՄ, ԵՄ եւ այլ երկրների հետ

Հայաստանի արտաքին առեւտրի ծավալներն աճում են, ընդ որում՝ թե՛ արտահանման, թե՛ ներմուծման, թե՛ ԵԱՏՄ երկրների, թե՛ ԵՄ երկրների եւ թե՛ այլ երկրների հետ: Սա արձանագրվել է ազգային վիճակագրական ծառայության հրապարակած՝ 2017-ի հունվար-օգոստոս ամսիների Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական ցուցանիշներում: Հետեւաբար, հայտարարություններն այն մասին, թե Հայաստանի անդամակցումը ԵԱՏՄ-ին սահմանափակում է «երրորդ երկրների, այդ թվում անմիջական հարեւաններ Իրանի եւ Վրաստանի հետ Հայաստանի տնտեսական հարաբերությունների զարգացմանը», սովորական կեղծիք է, ինչի վրա կառուցվում է համապատասխան քարոզչությունը: Իրականությունը միանգամայն այլ է, որի որոշ մանրամասներին կանդրադառնանք ստորեւ:



Այսպիսով, 2017-ի առաջին ութ ամիսներին, որը փաստորեն տարվա երկու երրորդը կազմող ժամանակահատվածն է, մեր երկրի արտաքին առեւտրի ծավալները կազմել են 3 մլրդ 880 մլն դոլար, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 24,4 տոկոսով: Այսինքն, առեւտրաշրջանառության, այդ թվում եւ արտահանման եւ ներմուծման ծավալները ոչ միայն աճ են արձանագրել, այլեւ այդ աճը երկնիշ է եւ բավականին բարձր: Նկատի ունենալով հատկապես արտահանման նշանակությունը մեր տնտեսության զարգացման առումով, առավել հանգամանորեն ներկայացնենք այստեղ արձանագրված ցուցանիշները:

Արտահանման ծավալները նշված ութ ամիսներին ավելացել են 247 մլն դոլարով կամ 21,8 տոկոսով, կազմելով 1 մլրդ 383 մլն դոլար: Կարեւոր է, որ արտահանման ծավալների աճը առավելապես պայմանավորված է պատրաստի արտադրանքի եւ հետո միայն հանքահումքային արտադրանքի արտահանման ավելացմամբ: Այսպես՝ պատրաստի սննդի արտադրանքի արտահանումը տարվա ութ ամիսներին ավելացել է 32,1 տոկոսով կամ շուրջ 78 մլն դոլարով, հասնելով 320 մլն դոլարի: Եվս 40 մլն դոլարով կամ 28,9 տոկոսով ավելացել է ոչ թանկարժեք մետաղների եւ դրանցից պատրաստված իրերի արտահանման ծավալները՝ հասնելով 179 մլն դոլարի: Մանածագործական իրերի (թեթեւ արդյունաբերության) արտահանումն աճել է 36,6 տոկոսով կամ մոտ 23 մլն դոլարով: Արտահանման ծավալներն այստեղ կազմել են 87 մլն դոլար: Մեքենաների, սարքավորումների եւ մեխանիզմների արտահանումն աճել է 2,2 անգամ կամ 16 մլն դոլարով եւ կազմել 28 մլն դոլար: Քիմիական արտադրանքի արտահանման ծավալները նույնպես կտրուկ աճել են՝ 73,7 տոկոսով կամ մոտ 7 մլն դոլարով, հասնելով 17 մլն դոլարի: Պատրաստի ապրանքի տեսակներից սրանք արտահանման ամենամեծ աճ արձանագրած ճյուղերն են, եւ միայն այս ճյուղերում արտահանման ծավալները միասին վերցրած աճել են 144 մլն դոլարով:

Հանքահումքային արտադրանքի, հիմնականում պղնձի խտանյութի արտահանման աճը կազմել է 43,1 տոկոս կամ 130 մլն դոլար, որի արդյունքում արտահանման ընդհանուր ծավալն այս ճյուղում կազմել է 430 մլն դոլար: **Այս ցուցանիշների պարզ համադրումը վկայում է այն մասին, որ ավելի շատ ավելացել են պատրաստի ապրանքների, քան հումքային ապրանքների արտահանման ծավալները:** Վերջիններիս համար, ի դեպ, խթանող գործոն է եղել մետաղների միջազգային գների բարձրացումը:

Այժմ, ըստ երկրների արտահանման ցուցանիշները տարբեր ուղղություններով: Դեպի մեր հիմնական շուկա եւ ԵԱՏՄ ամենախոշոր երկիր՝ Ռուսաստան արտահանումն ավելացել է 36,6 տոկոսով կամ 84 մլն դոլարով, կազմելով 310 մլն դոլար: Մեզ համար Ռուսաստանը պատրաստի արտադրանքի արտահանման հիմնական շուկան է: Դեպի ԵՄ երկրներ արտահանումն աճել է 32,6 տոկոսով կամ մոտ 100 մլն դոլարով, կազմելով 407 մլն դոլար: Հիշեցնենք, որ ԵՄ երկրներ հիմնականում արտահանվում է հանքահումքային արտադրանքը:

**Հատկապես ուշագրավ է դեպի այլ՝ ԵԱՏՄ եւ ԵՄ մեջ չմտնող առանձին երկրներ արտահանման ծավալների տպավորիչ աճը:** Ռեկորդային՝ 3,5 անգամ կամ մոտ 122 մլն դոլարով աճել են դեպի Շվեյցարիա արտահանման ծավալները, մոտենալով 170 մլն դոլարի: Միացյալ Արաբական Էմիրություններ մեր արտահանումն այս տարվա ութ ամիսներին ավելացել է 2,2 անգամ կամ մոտ 32 մլն դոլարով, հասնելով գրեթե 61 մլն դոլարի: 16 մլն դոլարով կամ 60,7 տոկոսով ավելացել է արտահանումը դեպի ԱՄՆ, կազմելով 42 մլն դոլար: 13 մլն դոլարով կամ 23,7 տոկոսով աճել է դեպի Չինաստան արտահանումը, կազմելով 64 մլն դոլար: Դեպի Թաիլանդ արտահանման 19,3 անգամ աճը գումարային առումով կազմել է մոտ 7 մլն դոլար՝ նախկինում մի քանի հարյուր հազար դոլար կազմող ցուցանիշի փոխարեն:

Ինչ վերաբերում է ներմուծմանը, ապա, դարձյալ, աճել են ինչպես ԵԱՏՄ եւ ԵՄ, այնպես էլ՝ անհամեմատ ավելի մեծ ծավալներով այլ երկրներից Հայաստան ներմուծման ծավալները:

ԵԱՏՄ հիմնական երկիր Ռուսաստանից ներմուծումը Հայաստան ավելացել է 18,3 տոկոսով, ԵՄ երկրներից՝ 18,6 տոկոսով, իսկ այլ երկրներից՝ 35,8 տոկոսով: Ընդ որում, ներմուծման ամենամեծ ծավալներն ունենք հենց այլ երկրներից, որոնց մեջ, որքան էլ ցավալի եւ երկրի անվտանգության համար մտահոգիչ լինի, նաեւ մեր հանդեպ թշնամաբար վերաբերվող Թուրքիան է: Զգիտես ինչու, ԵԱՏՄ-ից մրմուռ զգացողներին առանձնապես չի մտահոգում այս հանգամանքը եւ այն, որ այս տարվա ութ ամիսներին Թուրքիայից Հայաստան ներմուծման ծավալները անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են գրեթե 61 տոկոսով կամ մոտ 54 մլն դոլարով, հասնելով 141 մլն դոլարի:

**Մեր անմիջական հարեւանների հետ հարաբերությունների մասին ի վերջո:** Փաստենք, որ արտահանումը Հայաստանից Իրան աճել է 11,2 տոկոսով եւ կազմել 54 մլն դոլար, ներմուծումը՝ 9,1 տոկոսով եւ կազմել 118 մլն դոլար: Մյուս հարեւանի՝ Վրաստանի հետ պատկերը հետեւյալն է. արտահանումը դեպի այդ երկիր աճել է 3,4 տոկոսով, հասնելով 101 մլն դոլարի, ներմուծումը նվազել է 6,7 տոկոսով, կազմելով 64 մլն դոլար: Հաշվի առնելով սեզոնային գործոնը, որ Վրաստանից Հայաստան արտահանվող հիմնական ապրանքները Հայաստան են ներմուծվում տարեվերջին, ներմուծումն այս երկրից նույնպես առաջիկա ամիսներին կավելանա: Չմոռանանք նաեւ, որ Հայաստանն ու Վրաստանը միմյանց հետ ունեն ազատ առեւտրային ռեժիմ, որի շնորհիվ վերջին տարիներին փոխադարձ ապրանքաշրջանառությունը էապես ավելացել եւ հասել է մեծ ծավալների:

Մի խոսքով, քաղաքական մեկ ուժի ցանկությունները, որոնք ներկայացվում են որպես իրականություն, ինչպես երեւում է վիճակագրական ցուցանիշներից՝ իրականության հետ կապ չունեն: Իրականությունը, բարեբախտաբար մեր բոլորիս եւ մեր երկրի համար, տրամագծորեն հակառակն է:

# Հայաստանի հարեւանները հարեւանություն են անում

Անցնող շաբաթ Թուրքիայի նախագահ Էրդողանը մեկնեց Իրան: Նախագահ Ռոհանիի հետ հանդիպմանը **Էրդողանը** հիմնականում խոսել է քրդերի եւ Սիրիայի մասին: **Ռոհանին** շեշտել է, որ «Թուրքիան եւ Իրանը տարածաշրջանի անվտանգության սյուներն են», ճիշտ է ավելի ուշ **Ռոհանին** իր խոսքը խմբագրել է ու տարածաշրջանում անվտանգության սյուների թվում նշել նաեւ Ռուսաստանին:

Ի դեպ, նույն ընթացքում Ադրբեջանի ռազմածովային ուժերից մի քանի ռազմական նավեր Կասպից ծովով գնացել են Իրան, ինչպես Բաքվում են նշում՝ «բարեկամական այցով»:

Ամեն դեպքում, հարեւաններին առաջարկում ենք, եթե հանկարծ սուրճ ցանկանաք, կարող եք այցելել նաեւ Երեւան: Միայն Ադրբեջանի ռազմական նավերը կարող են դժվարություններ ունենալ, նախ Հայաստան գալ չեն կարող, բացի այդ դժվար թե այդ այցը համարվի բարեկամական:

Հ. ԱՓ.

AZG NEW SHABAT.QXD 04/10/2017 21:25 Page 3



# Անդորրը խախտողները

⇨1 Անգամ տեսական նշանակության այնպիսի հարցերը, որոնք այս շաբաթ խորհրդարանում էին քննարկվում՝ իրավականացնելով հայ-ռուսական ռազմական համագործակցությունը, մեծ հաշվով՝ նաեւ Հայաստանի մոտիկ ապագայի գործընթացները, չէին կարող երկրիս «բարձր» խավի խռովքի պատճառ դառնալ եւ մեծ ակտիվության մղել: Իսկ խորհրդարանը, արձանագրենք, հայ-ռուսական ռազմական եւ ռազմատեխնիկական համաձայնագրերի վավերացմամբ իրականում իրավական կնիքներ դրեց հայ ռուսական ռազմական համագործակցության՝ արդեն տարիներ առկա դեֆակտո վիճակին, եւ երկար ժամանակով՝ լավ է դա, թե՞ վատ:

ԶԼՄ-ները արդեն լայնորեն լուսաբանել են՝ ով ինչ ասաց խորհրդարանում հայ-ռուսական միացյալ զորախմբի ստեղծման եւ ռազմատեխնիկական փոխգործակցության համաձայնագրերի վավերացման առիթով քննարկումների ժամանակ, ում մտքի թռիչքը մինչեւ ուր էր ձգում:

Համաձայնագրերից ամենաբուռն քննարկվածը՝ հայ-ռուսական միացյալ զորախումբ ստեղծելու մասին, արդեն վավերացվել է ընդամենը յոթ «դեմ» ձայներով, դրանով Հայաստանը կօգտվի ռուսական այն զինատեսակներից, որոնք միացյալ զորախմբի համատեղ գործողությունների խնդիրներն են լուծելու, ընդ որում՝Հայաստանի պետական սահմանի հանդեպ ոտնձգության կամ ագրեսիայի կանխումն այս համատեքստում է:

Մենք ուղղակի արտահայտված մի քանի մտահոգություններին անդրադառնանք, որ բերում էին փոքրաթիվ ընդդիմադիր պատգամավորները, բայց մինչ այդ միջանկյալ ընդմիջենք մեր խոսակցությունը:

### Ծեծն Ազգային ժողովում

Մի երկրում, որտեղ ծեծն ու կրակոցները դարձել են հարց լուծելու ամենաուղիղ ճանապարհը, ինչու պիտի Ազգային ժողովի մթնոլորտը տարբերվի ընդհանուր մթնոլորտից, սա զարմանալի կլիներ: Այնպես որ **Նիկոլ Փաշինյանի**՝ իր քննադատական խոսքում **Արտաշես Գեղամյանի** անունը հիշատակելուց հետո ԱԺ միջանցքի ծեծկռտուքում հայտնվելը խիստ համաչափ է երկրի տարբեր բնակավայրերում առկա ծեծի դոզային: Այ, մի փոքր բովանդակությունն է այլ, այն էլ այն պատճառով, որ միջադեպի մի կողմը (նախաձեռնողը, հարձակվողը՝ ինչպես կուզեք անվանեք) ծանրակշիռ տնտեսագիտական գրքեր գրող եւ ծանրակշիռ տարիքի տղա է՝ Արտաշես Գեղամյանը, իսկ մյուս կողմը մի ողջ խմբակցության ղեկավար («Ելքի») եւ նախկին լրագրող: Ծեծկռտուքի մասին բողոքի խոսքով հայտարարեց «Ելքի» պատգամավոր **Գեւորգ Գորգիսյանը** ԱԺ խոսափողից, իսկ Փաշինյանն իր ֆեյսբուքի էջից էր անդրադարձել դրան՝ բազմիմաստ գրելով.«Հենց նոր ԱԺ միջանցքում Ա. Գեղամյանը բռունցքներով հարձակվեց ինձ վրա: Հաջողությամբ պաշտպանվեցի: Մի երկու անգամ էլ կոշիկներս փայլեցրի իրենով: Ներողություն եմ խնդրում հանրությունից, որ ստիպված եմ աշխատել այս պայմաններում»: Հա՜,հա՜, հա՜: Մեծ տղերք եք, չեք ամաչում՝ բռնունցքներով հասնում եք իրար վրա:

Եթե սա հերթական շեղոցին չի Հայաստանի համար կարեւոր հերթական թեմայից, ապա, բռավո, Հայաստանի Ազգային ժողովում չեն ուզում անտեր թողնել հին ավանդույթներից մեկը: Չնայած՝ երկու դեպքում էլ բռավո, գլխավոր թեմաները թողած՝ հիմա լրագրողները կզբաղվեն այս թեմայով:

***

Դե իսկ ԱԺ այս շաբաթվա քառօրյայում, իրոք, դիմակայություն կար՝ հայ-ռուսական ռազմական եւ ռազմատեխնիկական համագործակցության մի շարք պայմանագրերի, հայ-ռուսական միացյալ զորախումբ ստեղծելու համաձայնագրի, ինչպես նաեւ «Ելքի» նախաձեռնած ԵՏՄ-ից դուրս գալու առաջարկի քննարկումների առիթով, երբ Գեղամյանը եւ առհասարակ՝ մեծամասնության ներկայացուցիչները կրծքով պաշտպանում էին հայ-ռուսական համաձայնագրերի բովանդակությունն ու Հայաստանի՝ ԵՏՄ-ում մնալու անհրաժեշտությունը, իսկ հիմնականում «Ելքի» պատգամավորները, ընդհակառակը, խոսում էին կաթիլ-կաթիլ ինքնիշխանությունը զիջելուց, սա էր ինտրիգը: Այդպիսով՝ վերադառնանք մտահոգությունների թեմային:

### Ինչ բան է միացյալը

Մտահոգություններ ունենալը, կարծում ենք, բնական է, դա պետք է հատուկ լինի ամեն մտածող մարդու, այլապես գլխով անվերջ համաձայնության նշան անելիս վզի ցավի պրոբլեմ, իրոք, կարող է առաջանալ, իսկ եթե այդ մտահոգություններն արտահայտելն իր վրա է վերցրել մի փոքրիկ խմբակցություն միայն, սրա համար անգամ մեծամասնությունը պետք է շնորհակալ լինի, իր դեմքն է փրկում ինքնամոռաց տրվելու ու վտանգները չնկատելու ոչ դիվանագիտական կեցվածքից:

Օրինակ՝ մարդիկ չհարցնե՞ն բա, թե եթե Ադրբեջանն իրական սպառնալիք գոյացնի Հայաստանի սահմաններին, եւ ի պատասխան հայ-ռուսական միացյալ զորախումբը պատրաստվի կրակելու, ինչ դեր է ունենալու այստեղ ռուս-ադրբեջանական ռազմական գործակցությունը, որը տվյալ դեպքում զենքի վաճառքի տեսքով է: Այս դեպքում միթե կարեւոր չի լինի, թե ով է հայ-ռուսական միացյալ զորախմբի հրամանատարը, եւ միթե ռուսները, թեկուզ համաձայնագրի պարտավորվածությանը, կկանգնեցնեն իրենց ռազմական մի այլ գործակցի ագրեսիան, մանավանդ՝ պատմական հակառակ փորձի դառնահամը եթե հիշենք: Կազուս է, թե՞ ոչ: Որքան էլ պաշտպանության փոխնախարար եւ մեր լավ բարեկամ **Արտակ Զաքարյանն** այդտեղ խնդիր չտեսնի:

Կամ որ այդպես էլ հասկանալի չդարձավ, թե ո՞րն է ներքին ռազմական սպառնալիքը, որի առկայությամբ եւս գործի է գցվելու միացյալ զորախումբը: Իսկ բացատրությունը, թե երկրի ներսում ահաբեկչության մասին է խոսքը, տարընթերցումներ չի կարող չունենալ՝ հայտնի օրինակները եթե նկատի առնենք: Արդյոք «Սասնա ծռերի» պարագայում, երբ դեռ որակումը իրավական ձեւակերպման չէր հասել, այլ լրատվամիջոցներով բանավոր շրջող ձեւակերպումների մակարդակում էր, կարող էր հայ-ռուսական միացյալ զորախմբի միջամտության առիթ լինել: Չէ՞ որ շատերը պնդեցին՝ ահաբեկչություն է: Ի՞նչ, պիտի խնդրեինք ռուսական միջամտությու՞ն: Կամ Մարտի մեկին ընդդիմության դիմակայությունը կարո՞ղ էր ռազմական ներքին սպառնալիք անվանվել (իսկ միգուցե անվանվե՞լ է, Ռոբերտ Քոչարյանը չէ՞ր ակնարկում, որ կար ոստիկանության վերահսկողությունից դուրս մնացած տարածք, որտեղ տեղի ունեցածի համար մեր իրավապահները պատասխանատու չէին): Համանման դեպքում, որը երբեք էլ չի կարելի բացառել, էլի հանգիստ կարող է երկկողմանի հրամանատարության որոշմամբ ներքին ռազմական սպառնալիք անվանվե՞լ կատարվածը եւ միջամտության կարիք առաջացնե՞լ, կամ սա հենց երկրի ինքնիշխանությանը սպառնալիք միթե չի՞ կարելի համարել:

Չնայած համաձայնագիրը ներկայացնողները պնդում էին, թե միացյալ զորախումբ մտած հայկական զորաբաժանումներն իրենց ինքնությույնությունը չեն կորցնի, մինչեւ հիմա էլ գործել են ինքնուրույն, ուղղակի համատեղ գործողությունները համադրելու համար գործելու է ընդհանուր հրամանատարություն, անգամ այս պահին հայ գեներալ է հրամանատարը: Եւ էլի պնդում են, թե մեր ներքին խնդիրներն ինքներս կարող ենք կարգավորել, ու բանը դրան չի հասնի:

Իսկ ընդհանրապես՝ արդեն տասնհինգ տարուց ավել ՀՀ-ում գործում են հայ-ռուսական զինված միացյալ ուժերը, խորհրդարանը համաձայնագրի վավերացմամբ ընդամենը նորմատիվային կարգավորում իրականացրեց, ինչ աղմուկ է՝ ըստ համաձայնագիրը ներկայացնողների: Փաստորեն տասնհինգ տարի միացյալ զորախումբը ենք ունեցել դեֆակտո, այժմ միայն իրավական հիմքերի վրա ենք դնում, ու ակամա հնչում է հարցը՝ այդ դեպքում ինչո՞ւ հայկական կողմը չի տիրապետել միացյալ զորախմբի օպերատիվ այն տվյալներին, որոնք ապրիլյան պատերազմի ժամանակ պետք է չեզոքացնեին անսպասելիության գործոնը, այդ ի՞նչ միացյալ է, որ թշնամու առաջխաղացման կամ դիվերսիայի տվյալները հայկական կողմին չի տրամադրում, իսկ եթե չի ունեցել՝ առավել եւս միացյալի իմաստն անհասկանալի է: Այդ հարցերն, իհարկե, մեր ղեկավարությունն էլ անշուշտ բարձրացնում է, ու անգամ գիտե դրա պատասխանները, բայց հանրությունը տեղյակ չէ այդ բոլորից:

Համաձայնագրով նաեւ կանխարգելիչ գործողություններ են նախատեսված անհրաժեշտության դեպքում, իսկ սա զսպիչ ազդեցություն միգուցե կունենա հատկապես մեր անհանգիստ հարեւանի պարագայում:

Իսկ որ Ռուսաստանի բացի՝ անվտանգության երաշխավոր այլ պետություն-դաշնակից չենք տեսնում եւ մի դաշտում ենք խաղում, այ դա իրական սպառնալիք է պետականությանը, այլընտրանք միշտ պետք լինի: Մնացածն՝ ըստ պատկերացումների ու կողմնորոշումների:

### «Ելքի» առաջարկած ելքը չուզեցին

Ազգային ժողովի «Ելք» խմբակցությունն իր նախագծով առաջարկում էր Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցության դադարեցման նախագծի ձեւավորման համար ժամանակավոր հանձնաժողով ստեղծել: Ռուսամետների համար բոլոր առումներով սարսափելի այս նախաձեռնությունն, իհարկե,Ազգային ժողովը քվեարկությամբ մերժեց, այդպիսով նաեւ ԵՏՄ-ում լինելու տնտեսական նպատակահարմարության այլընտրանքային ուսումնասիրությունը մերժելով: Կարկառուն ԵՏՄ-իստներն ասում էին, որ ԵՏՄ ներուժն ընդամենը լավ չենք օգտագործում հայերս, իսկ դրա համար ոչ թե պիտի այսպիսի նախագծեր առաջարկել, այլ լավ աշխատել:

«Ելք» խմբակցության այս առաջարկի քննարկումն ու մերժումը խորհրդարանում մի քանի շերտանի խնդիր բացահայտեց. նախ՝ Ռուսաստանին չզայրացնելու մշտական վախը, որ սպրդում էր ելույթներից, փաստորեն ավելի գերակա է, քան խնդիրները պետական շահի տեսակետից քննարկելու հրամայականը. երկրորդ՝ իրենց խղճի առաջ պատասխանատու եւ բարձրորակ ոլորտային մասնագետների բացակայությունը խորհրդարանում, որոնք հարցի տնտեսական կողմն առանց քաղաքական շիրմայի կդնեին սեղանին, եւ այս դեպքում այս քայլը ոչ թե միայն քաղաքական քայլ կընկալվեր, ինչ որ է իրականում «Ելքի» պարագայում, այլ խիստ հիմնավորված տնտեսական միջոցառում կդառնար: Եւ երրորդ՝ այս քայլը, քաղաքական նպատակներ հետապնդելուն զուգահեռ , ակամա մատնեց բոլորի մոտեցումները, հատկապես քվեարկությամբ: «Կողմ» 9՝ ընդդեմ 79 «դեմի», 1/ 8 հարաբերակցություն: Դե, թող էլի մերժվեր նախագիծը, բայց գոնե 49 «դեմով» մերժվեր, քանի որ ԵՏՄ-ն ի վերջո ընկալվում է որպես ինքնիշխանության նեղացում, որը հայ խորհրդարանականներին փաստորեն չի անհանգստացնում գոնե ձեւի տեսակետից. ասենք՝ եթե նախագծի քննարկումը դիտվեր արմատական անկախականների եւ չափավոր անկախականների մրցակցություն՝ արմատականների զգալի «դեմ» քվեներով, միգուցե արտաքին ցուցափեղկ պահպանվեր եւ արժանապատվության բարձրության խնդիր լուծվեր: Բայց... Է՞ս խորհրդարանից պետք է պահանջենք այդպիսի մոտեցում՝ խոնարհ հարս ա՛յս խորհրդարանից, որի միակ ընդդիմախոսը մնացել է նշանակովի ընդդիմությու՞նը:

## Գեղամյանը՝ բռունցքներով, Փաշինյանը՝ ոտքերով

**ԱԺ պատգամավոր, «Ելք» խմբակցության ղեկավար Նիկոլ Փաշինյանը հինգշաբթի օրը ֆեյսբուքի իր էջում գրել էր, որ ԱԺ հանրապետական խմբակցության պատգամավոր Արտաշես Գեղամյանը խորհրդարանի միջանցքում հարձակվել է իր վրա. «Հենց նոր ԱԺ միջանցքում Ա. Գեղամյանը բռունցքներով հարձակվեց ինձ վրա:**

**Հաջողությամբ պաշտպանվեցի: Մի երկու անգամ էլ կոշիկներս փայլեցրի իրենով:**

**Ներողություն եմ խնդրում հանրությունից, որ ստիպված եմ աշխատել այս պայմաններում»:**

**Արտաշես Գեղամյանն իր հերթին ասել է, որ եթե ինքը բռունցքներով հարձակվեր Փաշինյանի վրա, ապա վերջինիս հիվանդանոց կտանեին: Լրագրողների դիտարկմանն էլ, թե Փաշինյանի դեմքը կարմրած է եղել, Գեղամյանն արձագանքել է՝ «Երեւի ամոթից է կարմրել. մարդը անհեթեթ հարցադրումներ է անում, խիղճը տանջել է, կարմրել է»:**

**Իսկ, թե ինչո՞ւ են փայլում Փաշինյանի կոշիկները, Գեղամյանին չեն հարցրել:**

## Շենավանի գյուղապետը որսի է գնացել

**Արմավիրի Շենավան համայնքի ղեկավար 1980-ին ծնված Արթուր Մկրտչյանը օրերս որսի էր գնացել: Որսը բավականին հաջող է անցել, քանի որ դրա ավարտից հետո գյուղապետն ու իր որսորդ ընկերները հրապարակել են լուսանկար՝ իրենք եւ խոցված երկու անգղները: Հա, լուսանկարում նաեւ սպիտակ «Նիվա»-ն է երեւում՝ 04 LS 048 պետհամարանիշներով:**

**Բայց, որքան էլ նեղանա մեզանից Շենավանի գյուղապետ Արթուրը, որն, իմիջիայլոց հանրապետական է, այս պատմության մեջ կարեւորը անգղներն են: Բանն այն է, որ դրանք սպիտակագլուխ անգղներ են, որը կենդանու վտանգված տեսակ է համարվում: Գրանցված է Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակում, նախկին ԽՍՀՄ եւ Ռուսաստանի, ինչպես նաեւ Հայաստանի Կարմիր գրքերում: Հայաստանում սպիտակագլուխ անգղները հանդիպում են խոշոր ժայռագոյացություններով լեռնազանգվածներում՝ Սյունիքի, Լոռիի, Տավուշի մարզերում:**

**Իհարկե գյուղապետ Արթուրը կարող էր չիմանալ այս ամենի մասին, բայց շենավանցիները հո պե՞տք է իմանան, թե ո՞ւմ են ընտրում իրենց գյուղապետ:**

## Շատ մարդասեր Դոնալդ Թրամփը

**ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը անցնող շաբաթ այցելել է Պուերտո Ռիկո եւ հանդիպել «Մարիա» ահեղ փոթորկից զոհվածների եւ տուժածների ընտանիքներին: Հանդիպմանը Թրամփը անձեռոցիկներ է նետել Պուերտո Ռիկոյի ահաբեկված քաղաքացիների ուղղությամբ եւ բղավել՝ «Բռնեք դրանք, դրանց մեջ սեր կա»: Հանդիպման վերջում էլ Թրամփը «բարի ժամանց» է մաղթել փոթորկից զոհվածների եւ տուժածների ընտանիքների անդամներին ու հեռացել:**

**Ամերիկյան ԶԼՄ-ներն այս առիթով նշում են, թե «Թրամփը Պուերտո Ռիկոյում իրեն տարօրինակ է պահել»: Բայց ինչո՞ւ միայն Պուերտո Ռիկոյում...**

Պատրաստեց՝ ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆԸ

# Կարեւոր գիրք՝ արժանի բծախնդիր մոտեցման

**ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ**




Հայաստան-Սփյուռք 6-րդ համաժողովի նախօրեին լույս տեսավ եւ օրերս շնորհանդեսով հանրությանը ներկայացվեց ՀՀ Սփյուռքի նախարար **Հրանուշ Հակոբյանի «Հայկական սփյուռքը հարափոփոխ աշխարհում»** գիրքը՝ անոտացիայում «աշխատություն-ուսումնասիրություն» բնորոշմամբ: Եվ իրավամբ, հեղինակը ծանոթ է իր զարմանալի աշխատասիրությամբ եւ անսպառ եռանդով, որի դրսեւորումներին ականատես ու վկան ենք ահա արդեն 8 տարուց ի վեր, երբ նա ստանձնեց Սփյուռքի նորաստեղծ նախարարության կազմավորման եւ զարգացման գործը:

Արդարեւ, առանց այդ աշխատասիրության անհնար պիտի լիներ 650 էջ հաշվող այս գիրքը հրատարակել, այն էլ՝ իսկապես բազմազբաղ առօրյայի հեւքի մեջ: Հեշտ բան չէ մեկ գրքում ամփոփել նախարարության կազմակերպած բազմաթիվ գիտաժողովների, համաժողովների եւ նմանատիպ ձեռնարկների եւ ուսումնասիրությունների արդյունքները՝ համապատասխան ընդհանրացումներով, ամփոփիչ աղյուսակներով եւ համեմատական սյունակներով, ներկայացնել վիճակագրական տվյալներ, կազմակերպությունների, լրատվամիջոցների, հիմնարկների, հաստատությունների եւ գործիչների ու գործարարների երկար ցանկեր, տեղ-տեղ հայկական սփյուռքին վերաբերող տվյալները բաղդատելով այլազգի սփյուռքների հետ, իսկ գրքի սկզբում բացատրել սփյուռք հասկացության վերաբերյալ օտար ուսումնասիրողների սահմանումներն ու սփյուռք երեւույթի առաջացման, այդ թվում հայկական սփյուռքի, պատճառներն ու հետեւանքները, եւ այս բոլորը՝ գլոբալիզացիայի պարտադրած փոփոխությունների՝ հեղինակի խոսքով՝ հարափոփոխ աշխարհի պայմաններում:

Ակնհայտ է հեղինակի ձգտումը հնարավորինս գիտական աշխատություն ներկայացնելու: Գնահատելի այդ ձգտումը, սակայն, տեղ-տեղ մնացել է անկատար: Իմ տպավորությամբ՝ հեղինակին խանգարել է քարոզչականությունը, սեփական նախարարության եւ կառավարության քաղաքականությունը ամեն գնով, կրկնում եմ՝ ամեն գնով արդարացնելու միտումը:

Մյուս կողմից, նման աշխատությունը, գրված գործող իշխանության գործող անդամի գրչով, պիտի՛ ունենար իր գաղափարախոսությունը, որն այս պարագայում տարբեր չէր կարող լինել ազգային գաղափարախոսության հիմնադրույթներից- առկա պայմաններում Հայկական պետության հզորացման կարեւորագույն գրավականներից է հզոր սփյուռքի գոյությունը, եւ վերջինիս անմիջական մասնակցությունը համահայկական տեսլականի իրագործմանը՝ իբրեւ մեկ եւ միասնական ամբողջություն՝ ի խնդիր Մայր հայրենիքի հզորացման: Ասացի՝ ընդունելի գաղափար, որը դժբախտաբար կարգախոսի կարգավիճակում: Ճիշտ է, հեղինակը փորձել է ցուցաբերել ավելի խորքային մոտեցումներ՝ հասկանալու հին, նոր եւ նորագույն սփյուռքների խնդիրները, ճանաչել ու գնահատել նրանց ներուժը, առկա կարողականությունը, համաշխարհայնացման վտանգներին դեմ դնելու նրանց պատրաստակամությունը, սակայն իմ կարծիքով նրան չի հաջողվել ներթափանցել հարցերի խորքը եւ մատը դնելով վերքի վրա բացատրել, թե, օրինակ, ինչո՞ւ են մարդիկ մեկնում հայրենիքից, դատարկվում են գյուղեր, ավաններ, քաղաքներ, իսկ մեկնելուց անմիջապես հետո ձգտում ինտեգրվել տվյալ երկրին եւ հասարակությանը՝ հրաժեշտ տալով ամեն հայկականին:

Կամ՝ ինչո՞ւ չենք կարողանում առավել արդյունավետ միջոցներ գտնել սփյուռքահայ երիտասարդությանը հայությանը եւ Մայր հայրենիքին կապելու համար: Հայաստանից Ամերիկա եւ այլուր գաղթած հարյուր հազարավորները ինչո՞ւ չեն մերվում տեղի՝ վաղուց կազմավորված համայնքներին: Նույնը, որոշ չափով, վերաբերում է նաեւ Ստամբուլից, Լիբանանից, Պարսկաստանից գնացած հայերին, որոնք առավել կամ նվազ չափով ապրում են մեկուսի, ինքնամփոփ: Եվ կամ՝ իր գոյության 25 տարում ինչո՞ւ է «Հայաստան» համահայկական հիմնադրամը հանգանակել ընդամենը 235.800.000 դոլար, այսինքն միջին հաշվով տարեկան 9 մլն դոլարից էլ պակաս:

Անշուշտ այս եւ նման «ինչուների» սպառիչ պատասխանը չենք ակնկալում գրախոսվող գրքից, սակայն ցանկալի պիտի լիներ նման հարցադրումների հանդիպել գրքի էջերում՝ որպես խթանիչ նյութ հետագա հետազոտությունների համար:

Նորընծա գրքին անդրադառնալով ըստ բովանդակության, պետք է շեշտել դրա օգտակարությունը տեղեկատվական առումով, հատկապես ինչ վերաբերում է սփյուռքահայ գաղթօջախների հակիրճ պատմությանը, հայերի թվաքանակին, ազգային հաստատություններին եւն, ու եւս առավել՝ առանձին՝ համահայկական մասնագիտական կառույցներին, սփյուռքահայ թանգարաններին ու գրադարաններին, հայագիտական կենտրոններին եւ լրատվամիջոցներին՝ որոնց ամբողջական ցուցակը ներկայացվում է առանձին հավելվածների տեսքով:

Գրքում խիստ թերի է ներկայացված սփյուռքի հետ պետական հարաբերությունների ողջ պատմությունը՝ հատկապես խորհրդային շրջանում եւ մասնավորաբար Սփյուռքի հետ մշակութային կապի կոմիտեի շուրջ 30-ամյա գործունեության տարիներին: Ինչ-որ խանդոտ վերաբերում է նշմարվում այդ հիմնարկի գործունեությանը անդրադառնալիս, մի տեսակ՝ հարեւանցիություն: Այնինչ, իմ կարծիքով, պետք էր կարեւորությամբ շեշտվեր 60-ական թթ.ից մինչեւ անկախ պետականության հաստատում Խ. Հայաստանի պետական եւ կուսակցական ղեկավարության մի շարք կարեւորագույն նախաձեռնությունները սփյուռքահայության նկատմամբ, այն էլ՝ այլամերժության, նեղմիտ եւ միահեծան կուսակցականության, վերջապես՝ ամբողջատիրության պայմաններում: Այն՝ ինչ որ Կոմիտեի միջոցով նշյալ տարիներին արվեց սփյուռքահայության համար,- այն կոչենք արտաքին քարոզչություն թե այլ բան,- սկսած վտանգված որոշ գաղութների ֆիզիկական անվտանգության, ավելի քան երկու հազար սփյուռքահայ երիտասարդների մասնագիտական կրթություն ստանալու, գաղթահայությանը հնարավորինս կազմակերպ պահելու, կրթության օջախների հանդերձավորման, ազգային մշակույթով ու հայկական ժառանգությամբ գաղթօջախներին նոր լիցք ու ոգի ջամբելու եւ այլ տեսակետներից պատմական արժեք ունի: Հետեւաբար, անհրաժեշտ էր այդ նախաձեռնություններն ընդունել որպես մեծագույն ներդրում հայապահպանության ու հայրենասիրության գործում: Առանց այդ նախաձեռնությունների, սփյուռքահայությունը որպես ամբողջություն, գոնե հին եւ միջին սերունդների մասով, ավելի պակաս հայ կլիներ, վստահաբար:

Գրախոսվող հատորի հաջորդ թերությունը վերաբերում է «Համահայկական մասնագիտական կառույցներ» վերնագրված գլխին, որտեղ ներկայացված են մեր կուսակցությունները, բարեգործական, մշակութային, մարզական, կանանց, առողջապահական եւ մասնագիտական գլխավոր կազմակերպությունները՝ հակիրճ բնութագրումներով: Եվ անակնկալների անակնկալը՝ այս գլխի առաջին «կազմակերպությունը» լինելու «պատիվը» տրված է Հայ առաքելական եկեղեցուն: Հայ եկեղեցին կազմակերպությո՞ւն, այն էլ մասնագիտակա՞ն: 1716 տարի գոյատեւող, երբեք ու բնավ չընդհատվող ազգային մեր այդ կառույցը, ազգային հիմնաքար հանդիսացող Հայոց եկեղեցին կազմակերպությո՞ւն: Նույնիսկ establishment բառը չի պատշաճում բնորոշելու մեր եկեղեցին. դա ազգային ինքնության խարիսխն է, որին նույնիսկ Ստալինը չկարողացավ անտեսել, եւ ազգը «բռնելու» համար հանդուրժեց ազգային եկեղեցու գոյությունը: Անհրաժեշտ էր առանձին գլխի տակ ներկայացնել այն, ավելի խորը թափանցումներով, ի հարկին կցելով դրան հայ կաթոլիկությունը եւ հայ բողոքականությունը, նաեւ, որոնք վերջին 300 տարվա ընթացքում, այնուամենայնիվ, կարեւոր ներդրումներ են արել ազգային ինքնության պահպանման գործում:

Ավելին, հեղինակը խիստ հարեւանցի է անդրադարձել Մայր աթոռին՝ նրան հավասար տեղ տալով Տանն Կիլիկիո կաթողիկոսությանը, անտեսելով պատմական ճշմարտությունը- դրանք հավասարազոր աթոռներ չե՛ն, Անթիլիասը մասնակի աթոռ է, որը, սակայն, հավակնում է ներկայանալ իբրեւ ողջ Սփյուռքը ներկայացնող, եւ ՀՀ սփյուռքի նախարարության ու կառավարության վերաբերումը նրա այդ հավակնության նկատմամբ քաջալերական է: Սա ոչ միայն պատմական, այլեւ դատապարտելի քաղաքականություն է, ոտնձգություն նաեւ ազգի միասնականության, Հայ եկեղեցու մեկության դեմ. միասնականություն՝ որի պաշտպան են ներկայանում մեր կառավարությունը, սփյուռքի նախարարությունը:

Եվս առավել, Անթիլիասին հատկացված էջում տիկին Հակոբյանը գրում է. «Ներկայումս Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունն ունի 12 թեմ եւ 1 հոգեւոր տեսչություն»: Հարց՝ ազգային կամ պետական ո՞ր ատյանում է հաստատվել բռնագրավումների, ահաբեկչությունների, օտարերկրյա ծառայությունների միջամտությունների հետեւանքով ստեղծված այդ իրողական վիճակը: Մեր Սահմանադրությունը անջատել է Եկեղեցուն Պետությունից, եւ ճիշտ է արել: Եկեղեցին որպես ինստիտուտ չի կարող միջամտել պետության գործերին: Սակայն, միաժամանակ, ինչպես պարզվում է գրախոսվող գրքից, Պետությունը փաստորեն միջամտո՛ւմ է Եկեղեցո՛ւ գործերին, երբ որպես իրողություն է ընդունում, ավելին՝ օրինականացնում է թեմերի բռնազավթման, զուգահեռ «թեմերի» ստեղծման, եւ այդպիսով՝ մեր ժողովրդին առավել բաժանելու, հատվածականությունը քաջալերելու ընթացքը: Եվ իշխանության կեցվածքը ոչ մի կերպ չի արդարանում քաղաքական կոնյունկտուրայի, կոալիցիոն գործընկերության պահանջներով, ինչպես որ Անթիլիասի աթոռը կուսակցական մականի ներքո պահելու Հ.Յ.Դաշնակցության ընթացքով: Վերջինս 70 տարի ոտնձգությունների իր քաղաքականությունը պատճառաբանում էր Մայր աթոռի «Կրեմլի մականին տակ» գտնվելու կարգախոսով: Իսկ թե հայկական անկախ պետության վերականգնումից հետո ի՞նչ է նույն կուսակցության պատճառաբանությունը, հայտնի չէ: Սակայն նրա փոխարեն, ահա՛, պետական իշխանավորն է այդ տխուր փաստը ներկայացնում որպես «կատարված եւ ընդունելի իրողություն», առաջին հարվածը տալով ազգային միասնականության իր եւ մեր բոլորի ցանկությանը, փաստորեն:

Վերեւում ասվեց, գնահատանքի խոսքերով, որ գրախոսվող գրքի մատուցած կարեւոր ծառայություններից մեկը սփյուռքում գործող կառույցների եւ անձնավորությունների թվարկումն է, ցուցակներն ու ցանկերը՝ համապատասխան տվյալներով: Սակայն կարծում եմ, որ այդ ցուցակներն ու տվյալները պետք է ենթարկվեն մանրակրկիտ ու բծախնդիր վերստուգման, ճշգրտումների, մանավանդ որ երկուշաբթի օրը ԳԱԱ-ում կայացած շնորհանդեսի ժամանակ մասնակիցներից մեկը առաջարկել-խոստացել է գիրքը հրատարակել անգլերեն լեզվով:

Օրինակ՝ սփյուռքահայ թանգարանների շարքում մոռացվել է մեր ամենաարդիական, օրինակելի եւ գեղեցիկ թանգարանը Դետրոյթում՝ Ալեք Մանուկյանի անունը կրող, որը հայկական քաղաքակրթությունը հայերին եւ օտարներին ներկայացնելու գործում ծանրակշիռ ավանդ ունի եւ ներկայություն: Իսկ, ընդհակառակը, թանգարանների այդ ցուցակում չգիտես ինչու ներառվել է Լիսաբոնում Գ. Գյուլբենկյանի անձնական հավաքածոների՝ թեեւ հրաշալի, սակայն ամենեւին էլ ոչ հայկական թանգարանը: Եվ ընդհանրապես, հայկական ցուցակներում պետք չէ ընդգրկվի Գ. Գյուլբենկյան հիմնարկությունը, այլ միայն՝ հայկական ծրագրերին աջակցող օտարերկրյա կազմակերպությունների կամ ֆոնդերի ցուցակում, քանզի այդ հիմնարկությունը, ցավոք, հայկական չէ, այլ՝ պորտուգալական:

Նմանապես, սփյուռքահայ լրատվամիջոցների ցանկում կան բազմաթիվ անճշտություններ: Օրինակ՝ «Ամերիկայի ձայնը» ներկայացված է որպես հայկական: Այդ պարագայում ցուցակում ինչո՞ւ չի ընդգրկված «Ազատությունը», կամ՝ տարբեր երկրների ռադիո-հեռուստատեսությամբ տրվող հայերեն հաղորդումները, ծրագրերը: Դրանց կարելի էր այլ ցուցակներում տեղադրել: Անճշտության մեկ այլ օրինակ է «Նայիրի» շաբաթաթերթի խմբագրի՝ Ժիրայր Թոսունյանի (Ժիրայր Նայիրի) ներկայությունը ցուցակում, մինչդեռ այդ շաբաթաթերթը վաղուց դադարել է լույս տեսնելուց, իսկ Ժ. Թոսունյանը մահացել է 5 տարի առաջ:

Ցավոք, խի՛ստ ցավոք հարց է սփյուռքահայ անձնանունների անսկզբունք տառադարձությունը: Ամենաարտառոց անունների, ավելի ճիշտ՝ տառադարձությունների կարելի է հանդիպել այդ ցուցակում, անգլերենից եւ ֆրանսերենից տառադարձությունների որպես հետեւանք, ինչպես՝ Վարանթ Կորթմոյան, Կլոդ Դոնաբեդյան, Սարկսյան Ռոսելին, Հաջիբողոսյան Պոլ, Տերձագիան Կրիստել, Գարմիրյան Մարսել, Համպարսումյան Մարլեն, Դերդերյան Ֆիլիպ, կամ՝ գլուխգործոցը՝ Չաբլաքյան Ա. Դիքրան, իսկ լրատվամիջոցների ցանկում՝ Կիպրոսում գործող «Գիբրահայեր» կայքէջի անունը:

Անշուշտ տառադարձական այս խառնաշփոթի մեղավորը գրքի հեղինակը չէ, այլ մեր երկրի այժմյան ու նախորդ կառավարությունները, որոնք չկարողացան կամ չկարեւորեցին նախկին տերմինաբանական կոմիտեի նման բարձրագույն մի մարմին ստեղծելու եւ լեզվական առկա հարցերը պետականորեն կանոնակարգելու խնդիրը:

Վերջում տեղեկացնեմ, որ գրքի խմբագիրը բանասիրական գիտությունների դոկտոր, Լեզվի ինստիտուտի տնօրեն Վիկտոր Կատվալյանն է, իսկ գրախոսողները՝ ակադեմիկոս, Պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը եւ ՀՅԴ Հայ դատի գրասենյակի պատասխանատու Կիրո Մանոյանը: Տպարանը՝ «Տիգրան Մեծ» հրատարակչատուն:

AZG NEW SHABAT.QXD 04/10/2017 21:25 Page 5



ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Պետության հաշվին ապրողները

Ազգային ժողովի հանրային կապերի վարչությունը ներկայացրել է այն պատգամավորների ցուցակը, որոնք ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով, դիմել են եւ ստանում են Երեւան քաղաքում բնակարանի վարձին համարժեք փոխհատուցում: Այսինքն մի խումբ պատգամավորներ, ավելի կոնկրետ` 10 պատգամավոր, դիմել են պետությանը, որպեսզի ստանան Երեւան քաղաքում վարձով բնակարանում ապրելու փոխհատուցում: Այդ պատգամավորներից է Մանուկյան Սուրենը` ՀՅԴ-ից: Մարդը ծնվել է Իջեւանում, երկու տարի աշխատել է Կոնվերս բանկի Իջեւանի բաժանմունքում որպես վարկային մասնագետ, եղել է Իջեւանի ավագանու անդամ, Իջեւանի փոխքաղաքապետ, Հայանտառի Իջեւան մասնաճյուղի տնօրեն: Նա, կրկնում եմ, դիմել է պետությանը, որպեսզի ամեն ամիս ստանա գումար, որ կարողանա վճարել Երեւան քաղաքում իր բնակարանի վարձը:

Հաջորդը, Մանուկյան Ռոմիկ, նորից դաշնակցական է: Մարդը 2003-07-ը եղել է Շիրակի մարզպետը, իսկ 2000-03-ը եղել է Շիրակի փոխմարզպետը: Ծնվել է Շիրակի մարզի Սարատակ գյուղում, հավանաբար այնտեղ տուն ունի, շատ հավանական է, որ ոչ միայն այնտեղ, բայց դիմել է պետությանը, որպեսզի կարողանա վճարել Երեւանում իր բնակարանի վարձը:

Մարուքյան Էդմոն, դաշնակցական չէ, Լուսավոր Հայաստան կուսակցության հիմնադիրն է, ծնվել է Վանաձորում, այնտեղ տուն ունի: Մարզպետ չի եղել, փոխմարզպետ` նույնպես, բայց աշխատավարձից կամ եկամուտներից երբեք չի դժգոհել: Նույնպես դիմել է պետությանը, որ կարողանա վճարել Երեւան քաղաքում իր բնակարանի վարձը:

Հաջորդը` Կյուրեղյան Արմենուհի: Նորից դաշնակցական է: Ինչպես Մարուքյանը, ծնվել է Վանաձորում: Կյուրեղյանը 1993-2000-ը եղել է ՀՀ սոցիալական ապահովության պետական ծառայության Վանաձորի տարածքային բաժնի նպաստների բաժնի վարիչ: 2016-2017-ին` Վանաձորի ավագանու անդամ:

Նա նույնպես դիմել է պետությանը, որ կարողանա վճարել Երեւան քաղաքում իր բնակարանի վարձը:

Միխայլով Արսեն. Հանրապետական է, ծնվել է Արզնիում: 1997-2017-ը եղել է Արզնու համայնքապետի տեղակալ: 1994-2001-ին եղել է Հայաստանի «Աթուռ» ասորական ասոցիացիայի փոխնախագահ, 2001 թվականից` նախագահ: 2001-ից համաշխարհային ասորական միության (A) վարչության անդամ է, Արեւելյան Եվրոպայի ասորական կազմակերպությունների պատասխանատու քարտուղար: 2007 թվականից` ՀՀ նախագահի աշխատակազմին կից ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների համակարգող խորհրդի անդամ:

Նա էլ դիմել է պետությանը, որ կարողանա վճարել Երեւան քաղաքում իր բնակարանի վարձը:

Հասանով Կնյազ. ծնվել է Կոտայքի մարզի Աստղաբերդ գյուղում, հանրապետական է: 1970-1973-ին եղել է Աբովյանի շրջխորհրդի գործկոմի ճարտարագետ-հողաշինարար, պլանային հանձնաժողովի նախագահ: 1973-1997-ին` Աբովյանի կինոցանցի տնօրեն, 1977-2014-ին` «Կոտայքի շրջկինոցանց» ՍՊԸ տնօրեն: 1995-ից` «Քուրդիստան կոմիտե» ՀԿ անդամ, ապա` փոխնախագահ: 2000-ին` ՀՀ նախագահի աշխատակազմին կից ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների համակարգող խորհրդի անդամ: 2007-ից «Հայաստանի քրդական ազգային խորհուրդ» ՀԿ խորհրդի նախագահն է:

Կնյազ Համիդովիչը եւս դիմել է պետությանը, որ կարողանա վճարել Երեւան քաղաքում վարձով բնակարանի համար:

Հաջորդը Միքայելյան Տատյանան է: Տիկինը ներկայացնում է Ծառուկյան դաշինքը: Ծնվել է Թաթարստանում, իսկ Հայաստանում աշխատել է 1988-1991-ին` «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ գլխավոր հաշվապահի տեղակալ: 1991-2000թթ.` «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ գլխավոր հաշվապահ: 2000-2009-ին` Ինեկոբանկ ՓԲԸ Գյումրիի մասնաճյուղի գլխավոր հաշվապահ: 2009-2014-ին` Ինեկոբանկ ՓԲԸ գլխամասի վարկերի ձեւակերպման գլխավոր մասնագետ: 2014-2017-ին` Ինեկոբանկ ՓԲԸ Գյումրիի մասնաճյուղի գլխավոր մասնագետ:

Միքայելյան Տատյանան նույնպես դիմել է պետությանը, որ կարողանա Երեւանում վարձով ապրել:

Պողոսյան Կարինեն հաջորդն է: Տիկինը առաջ հանրապետական էր, հետո երբ Հովիկ Արգամիչը դուրս եկավ ՀՀԿ-ից, ինքն էլ դարձավ անկուսակցական: Պատգամավոր է ընտրվել Ծառուկյան դաշինքի կազմում: Ծնվել է Մխչյան գյուղում: 1994-2004-ին Արտաշատի թիվ 6 միջնակարգ դպրոցում աշխատել է ֆիզիկայի ուսուցչուհի, 2004-2009-ին` փոխտնօրեն: 2009-2011-ը եղել է Արտաշատի թիվ 1 միջնակարգ դպրոցի տնօրեն:

Նա նույնպես դիմել է պետությանը, որ կարողանա վարձով ապրել Երեւանում:

Ասատրյան Վանիկ, սպիտակցի է, ներկայացնում է Ծառուկյան դաշինքը: 1994-1995-ին եղել է Սպիտակի կարի արտադրական միավորման գլխավոր տնօրեն, 1995-2017-ին` «Վանուհի» ԲԲԸ նախագահ, 2002-2008-ին` Սպիտակի քաղաքապետ, 2009-ին` Լոռու մարզպետի օգնական, 2009-2011-ին` Լոռու մարզպետարանի ՏԻ եւ ՀԳՄ հարցերով վարչության պետ, 2012-2016-ին` Լոռու փոխմարզպետ: ՀՀ քաղաքացիական ծառայության 1-ին դասի խորհրդական է: Նա էլ է դիմել պետությանը, որ Երեւան քաղաքում վարձով ապրելու համար փոխհատուցում ստանա:

Եւ վերջապես Կարապետյան Անդրանիկ: Էջմիածնեցի է, անկուսակցական, բայց ՀՅԴ խմբակցությունից: 2010-2012-ին եղել է Վերահսկիչ պալատի իրավաբանական վարչության մասնագետ: 2015-2017-ին` «Մոնոլիտ գործարան» ԲԲԸ գործադիր տնօրեն: Մարդը դիմել է պետությանը, որ կարողանա Երեւան քաղաքում վարձով ապրել:

Մի հոգի էլ կա, Վարդան Ղուկասյանը, Գյումրիի նախկին հանրահայտ քաղաքապետը: Մարդը նույնպես դիմած է եղել, որ պետությունն իրեն օգնի` Երեւանում ապրելու հարցում, պետությունն էլ, մինչեւ 2017-ի սեպտեմբերի 25-ը օգնել է, այդ օրը, սակայն, Ղուկասյանը դիմում է գրել, որ էլ պետք չէ, պետությունն էլ դադարեցրել է օգնությունը Ղուկասյանին:




Ի դեպ, օգնությունը կազմում է ամեն ամիս 100 հազարական դրամ: Այսինքն բացի պատգամավորական աշխատավարձից հիշյալ մարդիկ ստանում են հավելյալ 100 հազարական դրամ` Երեւան քաղաքում վարձով ապրելու համար:

Չէ, ես չեմ ասի, որ Երեւան քաղաքում բազմաթիվ մարդիկ են վարձով ապրում, որոնք պատգամավոր չեն, որ չեն կարող օգտվել ՀՀ համապատասխան օրենքի 9-րդ հոդվածից, ոչ էլ կարեւոր է այն, թե ինչո՞ւ է Կնյազ Հասանովն, օրինակ, անպայման ուզում Երեւանում ապրել, այն պարագայում, երբ Աբովյանից Երեւան 20 րոպեի ճանապարհ է, ու ինքը Աբովյան քաղաքի կնյազն է (չխառնել թագավորի հետ): Նույնը վերաբերում է Էջմիածնում բնակվող Կարապետյան Անդրանիկին: Սակայն ինձ այլ բան է հետաքրքրում. ինչո՞ւ է պարոն Վարդան Ղուկասյանը հետ վերցրել իր` փոխհատուցում ստանալու դիմումը. ամաչել է Գյումրիում տնակներում ապրողների՞ց, թե՞ պետական միջոցները սկսել է խնայել: Գուցե այլ պատճառ կա...Ամեն դեպքում պետության բյուջեից ամեն ամիս 1 միլիոն դրամ գնում է, որպեսզի տասը պատգամավոր կարողանա վարձով ապրել Երեւան քաղաքում:

Ի դեպ, ապրո՞ւմ են, թե՞ պարզապես փողն են ստանում...

***Հ. Գ. Սոցիալական ապահովության եւ աշխատանքի նախարար Արտեմ Սարգսյանը օրերս հայտարարեց, որ վերանայվում է երկրում նպաստառուների ցուցակը, որպեսզի բացառվի նպաստի հատկացումը նրանց, ովքեր դրա կարիքը չունեն:***

# Քրդերի մեծ բլեֆը

Քրդերի անկախության հանրաքվեից անցել է 10 օր: Հիշեցնեմ, Իրաքյան Քրդստանում անկախության հանրաքվեն կայացավ սեպտեմբերի 25-ին, քվեարկության մասնակիցների շուրջ 93 տոկոսը «**Այո**» պատասխանեց «**Ցանկանո՞ւմ եք ստեղծել անկախ Քրդաստան պետություն**» հարցին, Բարզանին գոհ է, Բաղդադն ու մյուսները անցել են պատժամիջոցների, Իրաքի իշխանություններն անգամ որոշ առաջարկներ են արել քրդերին, որոնք, սակայն Բարզանին մերժել է` հավատարիմ մնալով անկախության սկզբունքին: Այսպես խոսում են...

Բայց անցնող տասը օրերի ընթացքում ոչ Բարզանին, ոչ էլ որեւէ քուրդ չասաց, թե ի՞նչ պետք է հիմա արվի քուրդ ժողովրդի ձայնի հետ: Չնայած հանրաքվեում ավելի քան վստահ հաղթանակին, անկախ Քրդստանի ստեղծման մասին որեւէ մեկը դեռ չի հայտարարել ու կարծես թե չի էլ պատրաստվում հայտարարել: Որտե՞ղ կամ ո՞վ պետք է այս մասին հայտարարվի կամ հայտարարի, քրդերը պետական, կիսապետական, պետականին մոտ ի՞նչ մարմին ունեն, որը կարող է Քրդստանը հռչակել անկախ պետություն` հիմք ընդունելով քուրդ ժողովրդի ձայնը: Եթե ունեն, ապա ի՞նչ են մտածում, բանակցում են Բաղդադի հե՞տ, ինչի՞ շուրջ, անկախությա՞ն, այն վիճարկելո՞վ, մի՞թե անկախությունն այլեւս փաստ չէ քրդերի համար: Քանի որ պետության ստեղծման մասին հանրաքվեից տասն օր անց անկախ պետություն ստեղծելու հայտարարություն չկա, անգամ խոսք չկա այն մասին, թե երբ է լինելու. կնշանակի քրդերը վիճարկում են անկախությունը, կամ չգիտեն ի՞նչ են անում նման դեպքերում: Հասկանալ կարելի է. մարդիկ երբեք անկախ չեն եղել. առաջին անգամ են պետություն ստեղծում:

Բայց այստեղ քուրդ ժողովուրդն ասելիք չունի՞: Նրանց ներկայացրեցին, ինչպես Մասուդ Բարզանին է ասում` **քուրդ ժողովրդի դարավոր երազանքը**, նրանց խնդրեցին քվեարկել, համոզեցին, որ հենց հիմա է եկել այն պահը, երբ կարելի է պետություն ստեղծել, ու քուրդ ժողովուրդը գնաց քվեարկության եւ քվեարկեց: Փաստորեն իզո՞ւր, խաբեցի՞ն, խաբեցին ու նրանք լռե՞լ են: Իհարկե հասկանալի է, որ Իրաքի հետ կան վիճելի տարածքներ, մասնավորապես Քիրքուկը, որի նավթի հույսով էլ Բարզանին գնաց անկախություն խաղին, հասկանալի է եւ այն, որ անկախ պետություն հռչակելու համար պետք է հստակ լինեն դրա սահմանները, եւ գուցե հիմա քրդերն ու Բաղդադը նստած քննարկում են, թե ո՞ր գծով պետք է անցնի քուրդ-իրաքյան սահմանը, ու այս հարցը հստակեցնելուց հետո Բարզանին հայտարարելու է անկախ Քրդստանի ստեղծման մասին: Բայց նման բանակցությունների մասին, եթե դրանք ընթանում են, ինչո՞ւ որեւէ մեկը չի խոսում. Ուրեմն բանակցություններ չե՞ն ընթանում, թե՞ ընթանում են, պարզապես այլ օրակարգով:

Ամեն դեպքում քուրդ ժողովուրդն իրեն չի պահում այնպես, կարծես թե հասել է իր դարավոր երազանքի իրականացմանը: Գուցե դա է՞լ է խաբեություն, դե այն, որ քուրդ ժողովուրդը դարեր շարունակ երազել է անկախ պետականության մասին: Համաձայնեք, որ եթե դա իրոք այդպես լիներ, ապա նույն Բարզանին չէր ասի, թե «**Մենք չենք պատրաստվում անկախ պետություն հռչակել անկախության հանրաքվեից անմիջապես հետո. մենք երկար տարիներ եղել ենք կայունության գործոն եւ այդպիսինը կմնանք**»: Այսի՞նքն, բա ինչո՞ւ քուրդ ժողովրդին չեք հարցրել, թե դուք ցանկանո՞ւմ եք մնալ կայունության գործոն, ինչպիսինը եղել եք տարիներ շարունակ: Գուցե քուրդ ժողովուրդն այլեւս չի ցանկանում այդ գործոնը մնալ: Կամ եթե ուզում եք կայունության գործոն մնալ, ինչո՞ւ եք քուրդ ժողովրդին խնդրում, որ քվեարկի անկախության օգտին, իսկ երբ քվեարկում է, ասում եք, թե չեք պատրաստվում հռչակել անկախ պետություն, խաբո՞ւմ եք, փաստորեն խաբում եք:

Ամեն դեպքում քրդական հանրաքվեին մասնակցել է ավելի քան 3 միլիոն մարդ, ճիշտ է վավեր է ճանաչվել 2մլն 385 հազար քվեաթերթիկ, բայց անվավեր քվեաթերթիկների առատությունը հավանաբար պատմական պահին քրդերի հուզմունքից է եղել: Ու այսքան մարդու խաբել են, տարել են անկախության հետեւից ու խաբել են: Գուցե մի օր Քրդստանը հռչակվի անկախ պետություն, բայց առայժմ քրդերը մնում են կայունության գործոն:

Բարզանին սեփական ժողովրդի հանդեպ հանցագործություն է գործել, եթե իհարկե քրդերն իրոք անկախ պետություն են ուզում:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

AZG NEW SHABAT.QXD 04/10/2017 21:25 Page 6



# Եվրոպական անջատողականությունն ու դրա սպառնալիքները

ԱՐՄԵՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ

**դ.գ.թ., Էներգետիկ աշխարհաքաղաքականության եւ միջազգային անվտանգության մասնագետ**

Ինչու է կատալոնյան հանրաքվեն սարսափի մատնել ողջ Եվրոպան: Եվրոպայում անկախության ձգտող ազգերը եւ ժողովուրդները քանդում են տարիներ շարունակ ձեւավորված այն կարծրատիպերը, որ անջատողականությունը կամ սեպարատիզմը հատուկ է միայն տնտեսական ու հատկապես քաղաքական հետապնդումների ենթարկվող ժողովուրդներին ու կրոնա-էթնիկական փոքրամասնություններին, իսկ տնտեսապես ծաղկող Եվրոպայում այն կարելի է գնահատել միայն որպես թյուրիմացություն, որի թիկունքում կանգնած են ազգայնամոլությամբ տառապող մարգինալ խմբերը եւ կառույցները, որոնք, ըստ այդ տեսության կողմնակիցների, չեն վայելում բնակչության մեծամասնության աջակցությունը: Միեւնույն մարդիկ նաեւ պնդում էին, որ ազգայնական, իմա՝ անջատողական շարժումները թուլանում են կյանքի տնտեսական մակարդակի աճի հետ միասին, եւ եթե այն նաեւ զուգորդվում է ինքնավարության, թեկուզ եւ միայն մշակութային որոշակի տարրերով, ապա անջատողականության մասին կարելի է մոռանալ:

Ահա այս համոզմունքն է, որն այս օրերին ոչնչանում է իրական կյանքով, որն ապացուցում է, որ կյանքի որակի լավացումը ոչ միայն չի թուլացնում անջատողական շարժումները, այլեւ ընդհակառակը՝ երբեմն կարող է հակառակ ազդեցությունն ունենալ եւ ժամանակի ընթացքում մեծացնել այդ շարժման կողմնակիցների թիվը: Վերը նշված տեսության կողմնակիցները նաեւ համոզված էին, որ պատմությունը՝ հատկապես ազգային-ազատագրական, ֆինանսական ու տնտեսական բարգավաճման պայմաններում երկրորդական պլան է մղվում եւ դառնում է լոկ հիշողություն, որով զբաղվում են միայն պատմաբանները: Սակայն բարգավաճող Եվրոպայում անջատողականությունը, այդ աշխարհամասի հարստացման հետ միասին չկորավ եւ ընդամենը այլ երանգներ ու ձեւաչափեր ստացավ՝ դառնալով սկզբում լուրջ գլխացավ, իսկ հետագայում՝ սպառնալիք Եվրոպայի միասնության համար:

Նախաձեռնելով Եվրոմիության ստեղծումը, դրա հեղինակները համոզված էին, որ միավորման ընդհանուր էյֆորիայի ազդեցության պայմաններում փոքր ազգերի անջատողականությունը կդիտարկվի միայն որպես հետադեմ ու գավառական երեւույթ, որը կդատապարտվի, այսպես կոչված, առաջադեմ մարդկության կողմից: Այս տեսությունը ընդունվում ու պաշտպանվում էր Եվրոպական ինտելեկտուալ ներկայացուցիչների կողմից, որոնք, հատկապես ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, համոզված էին, որ Արեւմուտքի հաղթանակը «սառը» պատերազմում կնպաստի սեփական դիրքերի ամրապնդմանը, այդ թվում նաեւ ազգային փոքրամասնությունների խնդիրների լուծման հարցում, օրինակ հանդիսանալով այլ միավորումների համար, իսկ Եվրոմիության շարքերի ընդլայնումը կնպաստի անջատողականության վերջնական մարգինալացմանը այդ միության սահմաններում:

«Իռլանդական հանրապետական բանակի», բասկերի ու դրանից առաջ Կորսիկայի ազատագրության համար մարտնչող զինված խմբավորումների դեմ հաջողված պայքարն ստիպեց Եվրոմիության չինովնիկներին, ինչպես ժամանակին ԽՍՀՄ կոմունիստ ղեկավարներին, հայտարարել, որ ազգային հարցը վերջնականապես լուծված է այդ միության անդամ երկրների համար: Վերջիններս համոզված էին, որ իրադարձությունների զարգացման նոր լույսի ներքո էթնիկ պետությունների ժամանակաշրջանը արդեն անցյալում է եւ հետագայում կստեղծվեն միայն միջպետական միավորումներ, որոնց համար հիմք կծառայեն բիզնես կապիտալը, եւ փող աշխատելու մոլուցքը կլռեցնի ազգային շարժումն ու գաղափարախոսությունը:

Սակայն ժամանակը եւ իրադարձությունները եկան ապացուցելու հակառակը, որ սեփական, առանձին, զուտ ազգային պետության ստեղծման գաղափարները ոչ միայն չեն մահացել, այլեւ ձեռք են բերել այլ երանգներ ու զուտ ռազմական պայքարի ձեւից վերածվել են քաղաքացիական շարժումների, որոնց կողմնակիցները միայն կրկնապատկվել ու եռապատկվել են: Այս պայքարի հիմքում ազգերի ազատ ինքնորոշման իրավունքն է, որի իրականացումը դեկլարատիվ կերպով հայտարարված է Եվրոմիության կողմից, սակայն դրա իրականացումը նրանք տեսնում էին միայն այդ միության սահմաններից դուրս այլ պետություններում, այն էլ եթե այն բխում է զուտ իրենց քաղաքական շահերից: Սա է պատճառը, որ, մի դեպքում, ինչպես օրինակ Կոսովոյի, նրանք այն պաշտպանում են, իսկ այլ դեպքերում, հատկապես նախկին ԽՍՀՄ տարածքում, դրա դեմ են հանդես գալիս:




Ինչեւէ, կատալոնյան հանրաքվեն եկավ ապացուցելու, որ ազգային պետությունների մահվան մասին բարձրագոչող արեւմտյան տեսաբանների հայտարարությունները ոչ միայն վաղաժամ էին, այլեւ սխալ, քանի որ էթնիկ-ազգային պետականությունների ստեղծման շարունակականությունը շատ մեծ ներուժ ունի թե՛ բուն Եվրոպայում եւ թե ընդհանրապես ամբողջ աշխարհում: Բարսելոնայում տեղի ունեցած իրադարձությունները կարող են խթան հանդիսանալ անկախության համար շարժումների ակտիվացմանը եվրոպական շատ պետություններում, որտեղ դրա համար պարարտ հող կա եւ որտեղ այդ շարժումները թուլացել են, բայց չեն մահացել եւ իրենց «հնարավորությանն» են սպասում ակտիվանալու ու քաղաքական ասպարեզ դուրս գալու համար:

Եվրոմիության անդամ շատ պետություններում, մասնավորապես Չեխիայում, Դանիայում, Ֆինլանդիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում, Նիդերլանդներում, Բելգիայում, Լեհաստանում, Ռումինիայում, Սլովակիայում, Սլովենիայում, Շվեյցարիայում եւ Մեծ Բրիտանիայում կան անկախության համար պայքարող ուժեր եւ կազմակերպություններ: Այդ շարժումները տարբեր երկրներում որպես կանոն ներկայացնում են ազգային փոքրամասնություններին եւ միշտ չէ, որ վայելում են տեղի բնակչության ամբողջական աջակցությունը, սակայն նույնիսկ ամենաթույլ շարժումը որոշակի պայմաններում կարող է վերածվել հզորագույն անկախական պոռթկման՝ հանգեցնելով այս կամ այն պետության կազմաքանդմանը:

Հենց Իսպանիայում անկախության համար պատրաստ են պայքարել բասկերը, անդալուսիացիները, Գալիցիայի, Կաստիլիայի ու Վալենսիայի բնակչությունը, ինչը կարող է վերջնականապես քանդել Իսպանիա պետությունը: Ֆրանսիայում Կորսիկայի անկախականներից բացի, նմանատիպ շարժում գոյություն ունի նաեւ Բրիթոնում եւ այլ նահանգներում: Իտալական Սարդինիա ու Սիցիլիա կղզիներում միշտ էլ գոյություն են ունեցել անկախական շարժումներ, սակայն դրանք հատկապես հզոր են եղել հարուստ հյուսիսում, որտեղ որոշակի աջակցություն ունեին այն կուսակցությունները, որոնք կոչ էին անում առանձնանալ Իտալիայից, որ դադարեն կերակրել աղքատ հարավի նահանգները:

Անջատողական շարժումները միշտ էլ աջակցություն են վայելել Բելգիայի մի շարք շրջաններում, որտեղ մասնավորապես իրար հետ լեզու չէին գտնում ֆրանսախոս Վալոնը եւ Ֆլանդրիան, որոնք առանձին պետական միավոր ստեղծելու ձգտումներ էին դրսեւորում: Սակայն անկախական շարժումները հատկապես հզոր են Մեծ Բրիտանիայում, որտեղ Շոտլանդիան արդեն մեկ անգամ փորձել է անկախանալ՝ անցկացնելով հանրաքվե ու, չնայած այն ժամանակ չնչին տարբերությամբ անկախության կողմնակիցները տանուլ տվեցին, սակայն Բրեքսիթը եւ Կատալոնիայի օրինակը կարող է վարակիչ լինել շոտլանդացիների համար եւ նրանք նորից կփորձեն հանրաքվե կազմակերպել Բրիտանիայի կազմից դուրս գալու նպատակով: Անկախական շարժումները միշտ էլ ուժեղ են եղել նաեւ Հյուսիսային Իռլանդիայում, եւ հնարավոր է, որ այնտեղ էլ ականատեսը լինենք այդ շարժման հզորացմանը, ինչը կարող է վերջ դնել Մեծ Բրիտանիա թագավորության գոյությանը:

Ինչեւէ, Կատալոնյայի հանրաքվեն անկախության հարցի շուրջ նոր քննարկումների, բանավեճերի եւ հետազոտությունների առիթ է տվել: Սակայն այն նաեւ օրինակ է ծառայել անկախության համար ձգտող ժողովուրդներին, թե ինչպես է պետք պայքարել դրա համար, եւ սա կարող է նոր էջ բացել Եվրոպայի պատմության մեջ՝ վտանգելով նաեւ բուն Եվրոմիության գոյությանը:

## Լույս է տեսել գիտակենսագրական հանրագիտարան




Լույս է տեսել «Հայ տնտեսագիտական մտքի երկու դարը» գիտակենսագրական հանրագիտարանը: Այս գիրքը, որի ծավալը կազմում է 464 էջ, արտացոլում է հայ տնտեսագետների համայնքի հետազոտական պարագծերը՝ սկսած XIX դարի կեսերից:

Գրքի հեղինակներին՝ Ռ.Ն.Սարինյան եւ Վ.Լ. Հարությունյան, հաջողվել է ստեղծել հանրագիտարանային մեծ արժեք ներկայացնող աշխատություն:Այն երաշխավորել է հրատարակության ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական խորհուրդը: Հարկ է նշել, որ գրքի հեղինակները մեծ վաստակ ունեցող անվանի գիտնականներ են:Նրանց գիտական աշխատությունները մեծ ճանաչում են ստացել ոչ միայն Հայաստանում, այլեւ արտասահմանում:

Գրքում ներկայացված են տնտեսագիտության բնագավառի մեծ վաստակ ունեցող գիտնականների կենսագրականները իրենց լուսանկարներով: Աշխատությունն ունի նաեւ աղբյուրագիտական նշանակություն: Աշխատությունը նախատեսված է ոչ միայն մասնագետների, այլ նաեւ ընթերցող լայն շրջանների համար:

**Ստեփան ՊԱՊԻԿՅԱՆ**
***Ժուռնալիստների միջազգային ֆեդերացիայի անդամ***

## Ռուսաստանը պաշտպանում է Բյուլբյուլօղլուին

Հոկտեմբերի 9-ին կայանալիք ՅՈւՆԵՍԿՕ-ի տնօրենի ընտրություններում Ռուսաստանը պաշտպանում է Փոլադ Բյուլբյուլօղլուի թեկնածությունը: Այս մասին հայտարարել է ՌԴ փոխարտգործնախարար **Գենադի Գատիլովը**:

Քանի որ մենք այս պաշտոնում թեկնածու չունենք, իսկ ռազմավարական դաշնակցի ընտրության հետ համաձայնվել չենք կարող (երեւի), մնում է հուսալ, որ արեւմտյան երկրները այս ընտրություններում եւս կառաջնորդվեն «ընդդեմ Ռուսաստանի» սկզբունքով եւ Բյուլբյուլօղլուն կշարունակի միայն երգել:

AZG NEW SHABAT.QXD 04/10/2017 21:25 Page 7



ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆ

# «Հայ բանկիրները Օսմանյան կայսրությունում»

*Հեղինակ՝ Մկրտիչ Պուլտուքյան*

Բեյրութի (Լիբանան) Պաքլայան հրատարակչությունը անգլերեն լեզվով լույս է ընծայել 58 երկար տարիներ միջազգային բանկային հաստատություններում գործունեություն ծավալած, 1985-1990 թվերին Լիբանանի կենտրոնական բանկի փոխկառավարիչ դարձած Մկրտիչ Հակոբի Պուլտուքյանի (M.H. Bouldoukian) «**Հայ բանկիրները Օսմանյան կայսրությունում**» (Armenian Bankers in the Ottoman Empire) գիրքը, որը հեղինակը ձոնել է իր նախնիներին՝ Պուլտոխենց ընտանիքին, ինչպես նաեւ աշխարհում սփռված Ուրֆալյան, Չատրիկյան, Գույումճյան, Շատարեւյան, Ունճյան, Բոյաջյան, Լուսարարյան, Եղիայան, Ռեյմարյան, Քեհյայան, Բաքալյան, Առաքելյան, Սեֆերյան եւ Սերոբյան ընտանիքների նախնիներին, որոնք կողք-կողքի ապրել են ժամանակին՝ Ռուբինյան թագավորության օրոք, պաշտպանել Կիլիկիայի սահմանները եւ բազում բարեգործություններ կատարել:



Գեղեցիկ տպագրությամբ, գունավոր եւ սեւ ու սպիտակ լուսանկարներով հարուստ 272 էջանոց հատորը պատմում է գործարարների հետ Մերձավոր Արեւելքում ավելի քան երկու հազար տարի համագործակցած հայ բանկիրների վարպետության եւ հավատարմության մասին: Նաեւ նրանց արժեքավոր ներդրման մասին՝ միջազգային շուկայում:

«Թուրքիայից փոխհատուցման մեր պահանջները չպետք է սահմանափակվեն հողային տարածքների վերադարձով, այլ պետք է ընդգրկեն նաեւ անթիվ-անհամար ունեցվածքի եւ բանկային հաշիվների փոխանցումները, որոնց մասին ընդարձակ ուսումնասիրություն է հրատարակել **Պետրոս Տեր-Մաթոսյանն իր «Տաբուն Տաբուների մեջ: Հայկական կապիտալի ճակատագիրը Օսմանյան կայսրության վերջին շրջանում»** (The Taboo Within the Taboo: The Fate of Armenian Capital at the End of the Ottoman Empire) գրքում: Հույսով եմ արխիվային փաստաթղթերով հագեցած իմ այս հատորը կծառայի որպես պատմական ուսումնասիրություն՝ տեղեկացնելու հայ, թուրք եւ այլազգի երիտասարդ սերունդների ներկայացուցիչներին այն մասին, թե ինչ դեր են ունեցել հայերը միջազգային տնտեսագիտության եւ գործարարության զարգացման գործում եւ թե ինչքանով է նրանց ազդեցությունը տարածվել Մերձավոր Արեւելքից դեպի Հեռավոր Արեւելք եւ Արեւմուտք, Հարավային Կովկասից, Ջուղայից, Հնդկաստանից եւ Սինգապուրից մինչեւ Ռոստով, Մոսկվա եւ եվրոպական այլ երկրներ:

Ինչպես Երուսաղեմի ավագ սերունդի հայերն են նշում՝ «Նրանք (հայերը) ոտաբոբիկ եկան եւ մարդ դարձան»: Այո, նրանք՝ ցեղասպանությունից մազապուրծ ոտաբոբիկ եկան նաեւ Լիբանան եւ Սիրիա, եւ սկսեցին զբաղվել դրամափոխանակությամբ... վերականգնելով իրենց նախնիների ժառանգությունը եւ հեղինակությունը: Նրանց կոչում էին «բանկիրներ» կամ «սառաֆներ»: Այդ ընտանիքներից ոմանք մինչեւ այժմ շարունակում են իրենց գործունեությունը», գրում է հեղինակը իր գրքի առաջաբանում, որի համար ընտրել է ամերիկացի վիպասան Ջոն Դոս Պասոսի խոսքերն այն մասին, թե «դուք կարող եք մարդկանց պոկել իրենց երկրից, բայց չեք կարող երկիրը պոկել մարդկանց սրտերից»:

Առաջաբանից առաջ հեղինակը երախտագիտական խոսքեր է ուղղել բոլոր նրանց, ովքեր օժանդակել են, այս կամ այն ձեւով, գրքի լույս ընծայմանը: Նրանց թվում են Է. Դուզենճյանը, պատմաբան Լեոն (Առաքել Բաբախանյանը), դոկտ. Հակոբ Պարսումյանը, դոկտ. Պետրոս Տեր-Մաթոսյանը, Խաչատուր Տասայանը, Հայկարամ Գալընճյանը, Հայկազյան համալսարանի գրադարանավար Սոնա Սիսլյանը եւ նրա օգնականներ Վերա Կոստանյանն ու Հուրի Ավետիքյանը, Լիբանանի կենտրոնական բանկի նախկին կառավարիչ դոկտ. Էդմոն Նահիմը, «Ազդակ», «Զարթոնք» եւ «L'Orient-Le Jour» թերթերը, ինչպես նաեւ տարբեր լեզուներից անգլերենի թարգմանիչները (Լոնդոնի Նաիրի թարգմանչական ծառայությունների կենտրոնը, Մարի-Հելեն Գասպարը (Սիցիլիայից), Ռաֆայել Ումուդյանը, Կատիա Օնեիսին եւ Ժոզեֆ Էսքիճյանը (Բեյրութից), Նուբար Գուզելդովլաթյանը (Ստամբուլից) եւ դոկտ. Անի Բաքալյանը (Նյու Յորքից):

Հատորի առաջին գլխում, վերնագրված՝ «Խոջաների, չելեպիների եւ ամիրաների՝ Կոնստանդնուպոլսի հայերի նախնիների կապիտալը (փողը)», չափազանց մատչելի լեզվով եւ հստակ տրված են վերոնշյալ պատվանուններին արժանացած հայ մեծահարուստ առեւտրականների բնորոշումները, ինչը հատորին տալիս է նաեւ բուհական ձեռնարկի նշանակություն: Սահմանումներ տրված են նաեւ երկրորդ «Օսմանյան շրջանի հայ առեւտրականների եւ բանկիրների վերաբերյալ գործնական տեղեկություններ» գլխում, որը 11 ենթաբաժիններից է բաղկացած, որոնցում խոսվում է փողի փոխանակման, առեւտրային գործունեությունների եւ պայմանագրերի ստորագրման մասին: Երրորդ գլուխը նվիրված է «Տաբուն Տաբուների մեջ: Հայկական կապիտալի ճակատագիրը Օսմանյան կայսրության վերջին շրջանում» բաժնին:

Հաջորդող գլուխներում ներկայացվում են «Սփյուռքում գործող ճանաչված հայ բանկիրները», որտեղ մասնավորապես անուն առ անուն նշված են Լիբանանում եւ Եգիպտոսում գործող բանկիրները, «19-րդ դարի Օսմանյան կայսրության փողային համակարգը», որտեղ խոսվում է դրամափոխանակման կանոնների մասին, «Հայկական բիզնես ձեռնարկությունները 15-րդ դարից մինչեւ 1915 թվականը», որի 4-րդ ենթաբաժնում աղյուսակի ձեւով ընթերցողին է առաջարկվում հայ ամիրաների ցանկը ըստ Հ. Բարսումյանի «Ստամբուլի հայ ամիրաների դասակարգը» ուսումնասիրության, եւ «Համառոտ ակնարկ 19-րդ դարում Օսմանյան կայսրության մեջ գործող բոլոր փոքրամասնությունների բանկիրների»:

«Եզրափակիչ գլխում» հեղինակը հաստատում է, որ իրենց անաչառ գործունեության շնորհիվ հայ բանկիրները վստահություն են ձեռք բերել ֆինանսական շուկայում եւ նույնիսկ մասնակցել երկրի դրամահատության գործընթացներին ոչ միայն Օսմանյան կայսրությունում, այլեւ Իրանի արքայական դինաստիաներում, ցարական Ռուսաստանում եւ Ռումինիայում՝ մինչեւ Առաջին աշխարհամարտի սկիզբը: Նրանց շնորհվել է ազնվականության եւ արիստոկրատիայի պատվավոր կոչումներ: Նրանց է վստահվել տնտեսական կարեւոր գերատեսչությունների պատասխանատու պաշտոններ:

Դժբախտաբար, հայկական կապիտալի այդ տերերը, ամբողջ հայ ժողովրդի հետ, ենթարկվեցին եղեռնական բնաջնջման եւ բոլորի ունեցվածքը համարվեց «լքված գույք» եւ սեփականությունը դարձավ այդ բնաջնջումը կազմակերպած պետության: Դա անօրինական սեփականություն է, որին «մալ ու հարամ» պիտակն է տրվում: Եգիպտացի պատմաբան դոկտ. **Մոհամեդ Ռիֆաաթ էլ Իմամն** իր «**Հայերի պարագան Օսմանյան կայսրությունում**» (The Case of Armenians in the Ottoman Empire) գրքում նշում է, որ ժամանակակից Թուրքիան հիմնված է հայկական պատմական հողերի մոխիրների եւ թալանված հայկական կապիտալի վրա:

Բայց, ավարտում է Պուլտուքյանը, ամեն ինչ, որ «մալ ու հարամի» վրա է հիմնված, երկար կյանք ունենալ չի կարող:




Հատորն ունի նաեւ իտալերեն, օսմաներեն, ֆրանսերեն եւ հայերեն լեզուներով փաստաթղթերի հավելված եւ անշուշտ օգտագործված գրականության ցանկ:

Այս խիստ արժեքավոր գրքի հեղինակ Մկրտիչ Պուլտուքյանը մագիստրոսի գիտական աստիճան է ստացել 1964-ին Բեյրութի ամերիկյան համալսարանից: Հիսունութ տարվա աշխատանքային գործունեության ընթացքում ծառայել է 4 միջազգային (Bank of America, Chemical Bank, UBAF Bank, London (BACB) եւ HSBC Geneva) եւ 3 լիբանանյան բանկերում (BLF (Indosuez, Credit Agricole), Bank of Beirut եւ Credit Libanais): Որպես լիբանանյան կենտրոնական բանկի փոխկառավարիչ (1985-1990) նա Լիբանանն է ներկայացրել Կորեայում 1985-ի IMF/WB, եւ Ամմանում (Հորդանան) 1989-ի AMF-ի հանդիպումներում: Կոմերցիոն բանկային գործունեության մասին դասախոսություններով հանդես է եկել չորս համալսարաններում: Հիմնել է եւ առաջին դեկանն է եղել (1969-74) Հայկազյան համալսարանի Տնտեսագիտության եւ բիզնեսի կառավարում ֆակուլտետի:

Մասնակցել է նաեւ եվրոպական միության (բրյուսելյան) TACIS ծրագրին: Մրցանակակիր գրող է, հեղինակ չորս լեզուներով գրված տասնհինգ գրքերի, որոնցից «The Management of Correspondent Banking-ի» չորրորդ հրատարակությունը Սինգապուրում 2015 թվին իտալացի բանկիրների կողմից համարվել է «հեռակա բանկային գործունեության աստվածաշունչը»:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

## Վերջապես՝ Հովհաննես Շիրազ, «Հուշարձան հայրիկիս»

Հովհաննես Շիրազի Գյումրու տուն-թանգարանի բակը անցած կիրակի կեսօրին իր հյուրընկալ գիրկն էր կանչել բանաստեղծի արվեստի բազմաթիվ երկրպագուների, մշակույթի, արվեստի ու այլ ոլորտների ճանաչված մարդկանց նաեւ մայրաքաղաք Երեւանից ու արտերկրից: Այդ օրը նշվող «Գյումրու օրը» սկսվեց այստեղ մի կարեւոր ձեռնարկի՝ **Հովհաննես Շիրազի** նոր լույս տեսած «**Հուշարձան հայրիկիս**» բանաստեղծական ժողովածուի շնորհանդեսով: Թանգարանի աշխատակազմն ինքը մասնակցություն է ունեցել գիրքը հրատարակության պատրաստելու աշխատանքներին:

Շիրազյան տաղանդի շատ արգասիքներ լույս են տեսնում բանաստեղծի մահվանից տարիներ հետո, եւ սա դրանցից մեկն է: 1968 թվականին 50 000 տպաքանակով հրատարակված եւ գրախանութներում շատ արագ սպառված, այնուհետեւ էլի ոչ մեկ վերահրատարակություն ունեցած «Հուշարձան մայրիկիս» հայտնի ժողովածուից հետո, կյանքի վերջին տարիներին, ինչպես գրում է ներկա գրքի խմբագիր, ծանոթագրող եւ առաջաբանի հեղինակ **Սամվել Մուրադյանը**, Հովհաննես Շիրազը հոր մասին իր բանաստեղծություններով կազմել է նաեւ «Հուշարձան հայրիկիս» ժողովածուն եւ անվանի գրականագետ **Սուրեն Աղաբաբյանի** «Երկու խոսք» առաջաբանով ներկայացրել հրատարակման: Ի դեպ, նա ինչպես «Հուշարձան մայրիկիս», այնպես էլ այս ժողովածուն անվանել է պոեմ՝ բանաստեղծություններով: Սակայն սա էլ իր այլ գրքերի նման հանդիպել է արգելքների ու լույս չի տեսել...

Ներկա հրատարակության համար հիմք են ծառայել ժամանակին բանաստեղծի ներկայացրած մեքենագիր օրինակներից միակ պահպանվածը, թեեւ բավական վատ ընթեռնելի վիճակում, ու 200-ի չափ բանաստեղծություններից շուրջ 100-ի տպագրված օրինակները Շիրազի երկերի վերջին ժողովածուի 4-րդ հատորում, 1986 թ., հենց «Հուշարձան հայրիկիս» ընդհանուր խորագրով: Ցավոք, այդ հատորը եւս, թեկուզ կազմված լինելով հեղինակի կողմից, տպագրվել է նրա մահվանից երկու տարի անց:

«Հուշարձան հայրիկիս» ժողովածուն լույս է տեսել բանաստեղծի ծննդավայր Գյումրու քաղաքապետ **Սամվել Բալասանյանի** հոգածությամբ: «Հայրապետ» հրատարակչությունում տպագրված գրքի շապիկին **Արա Շիրազի** «Թադեւոս պապը» քանդակի լուսանկարն է:

«Տարիների հեռավորությունից,- ժամանակին իր «Երկու խոսք» առաջաբանում գրել է Սուրեն Աղաբաբյանը,- բանաստեղծը դառնում է իր հոր՝ բոստանչի Թադեւոսի... կերպարին եւ նրա սովորական կենցաղի, առօրյա զբաղմունքի, ապրումների ու մտքերի, երազների ու հույսերի, օրհնանքների ու աղոթքների, նրա գեղջկական յուրօրինակ՝ «հողային» բարոյախոսության, հայրենասիրական դասերի միջոցով վերստեղծում է մի ամբողջական կենսագրություն, որն անպայման կրթիչ նշանակություն կունենա ժամանակակից սերնդին այնպիսի բարոյական արժեքներով զինելու գործում, ինչպիսիք են արդարամտությունը, խիղճը, ազնվությունը, հողի պաշտամունքը, բնության, մարդու, հայրենիքի սերը, հոգու ասպետական վեհությունը»...

ԳՈՀԱՐ ԲՈՏՈՅԱՆ
Մոսկվայում «Ազգ»-ի հատուկ թղթակից

# «Բաժանվում ենք Մայր հայրենիքը շենացնելու պատրաստակամությամբ»

## Ասում են համաժողովի մասնակիցները

*Հայրենիքը կրկին իր գիրկն էր կանչել աշխարհասփյուռ զավակներին: Նրանց մեջ միշտ էլ եղել են եւ այսօր էլ կան մեծ թվով շնորհալի, տաղանդավոր եւ արժանապատիվ մարդիկ, ովքեր կարողանում են ոչ միայն պահպանել հայ մարդու դիմագիծը, այլեւ ուժերի ներածին չափով ձեռք մեկնել Հայրենիքին:*

Ահա հենց այսպիսի մարդկանց հանդիպեցի Հայաստան-Սփյուռք 6-րդ համահայկական համաժողովի ընթացքում: Հեռուներում իրենց հայրենանպաստ բազմաթիվ գործերով աչքի ընկած մեր հարգարժան հայրենակիցներից այս տարի համաժողովին իրենց մասնակցությունն էին բերել նաեւ ԱՊՀ Միջխորհրդարանական ասամբլեայի Խորհրդի գլխավոր քարտուղարի տեղակալի խորհրդական, հասարակական գործիչ եւ բարերար Հրաչյա Պողոսյանը՝ Ռուսաստանի հյուսիսային մայրաքաղաք Սանկտ Պետերբուրգից, եւ Ռուսաստանում շատ հայտնի ու մեծ ճանաչման արժանացած բժիշկ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌԴ բժշկական ակադեմիայի ակադեմիկոս Բագրատ Ալեքյանը: Հենց այս պատվարժան մարդկանց էլ խնդրեցի իրենց տպավորությունները կիսել համաժողովից՝ միաժամանակ ներկայացնել նաեւ այն ծրագրերը, որոնք առաջիկայում պետք է իրականացնեն Հայրենիքում:

Հրաչյա Պողոսյանն արդեն երկար տարիներ հայ-ռուսական բարեկամության եւ երկկողմ հարաբերությունների ամրապնդման ու սերտացման ջատագովն է, նրա հասարակական ու բարեգործական գործունեությունը լայնորեն հայտնի է ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Հայաստանում: Հրաչյան առանձնակի վերաբերմունք ունի հոգեւոր արժեքների եւ հոգեւոր խորհրդանիշների հանդեպ: Նրա բարեգործական գործունեության մեջ մեծ տեղ են զբաղեցնում Հայրենական մեծ պատերազմի հերոսների հիշատակին նվիրված հուշարձանները, նաեւ՝ Մեծ եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող խաչքարերը: Հրաչյա Պողոսյանի ջանքերով ստեղծվել են 80-ից ավելի մշակույթի, հոգեւոր եւ պատմական նշանակության կառույցներ ու հուշակոթողներ: Դրանցից 24 հուշարձան նվիրված է Հայրենական մեծ պատերազմին, 7-ը՝ Հայոց ցեղասպանությանը, որոնք տեղադրված են տարբեր քաղաքներում:


Հրաչյա Պողոսյան

Նրա մեկենասությամբ տպագրվել են տասնյակ գրքեր եւ ամսագրեր, ինչպես նաեւ տարբեր թեմաներով վավերագրական ֆիլմեր: Հրատարակված գրքերից առանձնահատուկ է Սանկտ-Պետերբուրգի ծագումով հայ մարշալների, ծովակալների, գեներալների մասին ծավալուն ժողովածուն:

- Յուրաքանչյուր մարդ պետք է իր ունեցածի չափով բարեգործ լինի,-ասում է Հրաչյա Պողոսյանը: Աստվածահաճո գործ կատարելը ինձ համար սրտի ցանկություն է, ուրախության մի անբացատրելի պոռթկում: Ես չափազանց կարեւորում եմ Հայրենիքի հետ շփումը, նաեւ համոզվում, որ ամեն մի այց մեծացնում է սերը Հայաստանի հանդեպ:

Հայաստան-Սփյուռք 6-րդ համահայկական համաժողովը մինչ այդ եղածների գագաթնակետն էր բոլոր առումներով,- ասաց Հրաչյա Պողոսյանը: Հաճելի էր տեսնել հատկապես Սփյուռքի նախարարության աշխատակիցների պրոֆեսիոնալ, եվրոպական չափանիշներին հարիր աշխատանքը՝ համեմված հայկական հյուրասիրության բոլոր կանոններով:

Ուզում եմ ընդգծել նաեւ, որ համաժողովը հիանալի առիթ է ընձեռում ոչ միայն առնչվելու մեր երկրի պատմությանը, այլեւ ծանոթանալու եւ շփվելու, օրինակ, երկրի նախագահի եւ վարչապետի հետ: Մարդիկ, ովքեր մտահոգ են Հայաստան երկիրը ծաղկուն եւ բարգավաճ տեսնելու համար:

Ավելացնեմ նաեւ, որ ես մասնակցել եմ մի շարք կարեւոր նիստերի, եւ չափազանց գոհ եմ համաժողովի արդյունքներից: Քննարկումներն ընթացել են փոխադարձ վստահության մթնոլորտում, եւ հույս ունեմ, որ իմ հայրենակիցների խոստացված ներդրումները առաջիկայում կյանքի կկոչվեն եւ կբարգավաճի Հայաստանը: Ես նույնպես դատարկաձեռն չէի եկել Հայրենիք եւ ուրախ եմ, որ իմ առաջարկած ծրագիրը կարեւորեցին ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը եւ Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը: Այն կյանքի կկոչվի Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում՝ «Էրեբունի-Երեւանի» 2800-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում եւ կներկայացնի Ցեղասպանության զոհերի՝ Սուրբ նահատակների պատկերներով խճանկար: Վիգեն Սարգսյանը եւ Տարոն Մարգարյանը առաջարկեցին նաեւ, որպեսզի իմ ներկայացրած ծրագրի առնչությամբ իր հեղինակավոր կարծիքը հայտնի նաեւ Հայ եկեղեցին...

Ես լիահույս եմ, որ 2018 թվականը Երեւանի հոբելյանական տարին լինելուց բացի, մեր մայրաքաղաքի պատմության մեջ կնշանավորվի նաեւ որպես մեծ նախաձեռնությունների եւ նշանակալի ձեռքբերումների տարի: Եվ մեծագույն երջանկություն է, երբ մասնակիցն ես Հայրենիքիդ հզորացման սուրբ գործին...

Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌԴ բժշկական ակադեմիայի ակադեմիկոս Բագրատ Ալեքյանը ծնվել է Երեւանում, 1974-ին ավարտել է Երեւանի բժշկական ինստիտուտը, 1975-ից Մոսկվայում է: Փայլուն տիրապետում է սրտանոթային հիվանդությունների բուժման մեթոդաբանությանն ու գաղտնիքներին, հարյուրավոր վիրահատությունների հեղինակ է, այդ թվում՝ աշխարհում առաջին անգամ սրտի մի շարք կարեւոր վիրահատությունների: 2007-ից անվանական կրթաթոշակներ է տրամադրում Երեւանի Մ. Հերացու անվան բժշկական համալսարանում:

- Նախ ուզում եմ շնորհակալություն հայտնել համաժողովի կազմակերպիչներից՝ ջերմ ընդունելության համար: Ամեն ինչ արված էր հավուր պատշաճի, դրական մեծ լիցքեր ստացանք, համաժողովը մեզ ուժ ու ոգի հաղորդեց: Մենք բոլորս մեծ առաքելություն ունենք՝ Հայաստանի կողքին լինել, օգտակար լինել Հայրենիքին: Ես մասնագիտությամբ բժիշկ եմ եւ Ռուսաստանում ինձ հետ աշխատող գործընկերներիս հետ, բնականաբար, մեծ անելիքներ ունենք Հայաստանում եւ Արցախում՝ մեր պարբերաբար այցելություններով օգնության ձեռք մեկնելու եւ բժշկելու մեր հայրենակիցներին: Ես նաեւ կողմնակից եմ հայ-ռուսական դարավոր բարեկամությունը էլ ավելի սերտացնելուն եւ խորացնելուն, ուստի իմ այցելությունների ընթացքում ինձ հետ կլինեն նաեւ ռուս բժիշկներ, ովքեր սիրով պատրաստակամություն են հայտնել ընկերակցելու մեր թիմին...


Բագրատ Ալեքյան

Այո, մեր սփյուռքահայ հայրենակիցները համաժողովից հեռանում են իրենց խոստումներն ու ծրագրերը կյանքի կոչելու եւ Հայրենիքը շենացնելու պատրաստակամությամբ: Ես առավել քան վստահ եմ, որ նրանք իրականություն կդարձնեն իրենց խոստումները, եւ ամենեւին էլ չզարմացա, երբ համաժողովի նիստերից մեկի ժամանակ այդ մասին ինձ ասաց նաեւ կողքիս նստած ռուս կինը, որը, ինչպես պարզվեց, Սեւծովյան-կասպյան տարածաշրջանի քաղաքական եւ սոցիալական հետազոտությունների ինստիտուտի գիտաշխատող է. «Դուք հայերդ արժանապատիվ մարդիկ եք, եւ իմ տարիների փորձով եւ դիտարկումներով կարող եմ ասել հետեւյալը. եթե հայը խոստանում է, ուրեմն վստահ եղեք՝ կկատարի...»:

Այս գնահատականի հետ ես լիովին համաձայն եմ, ուստի բարի ճանապարհ եւ բարի վերադարձ եմ ցանկանում իմ հայրենակիցներին...

# ՄԱԿ-ի նոր ճամբարը՝ Թալ-Աֆարից տեղահանվածներին

Մոսուլի մոտ գտնվող Թալ-Աֆարից տեղահանված քաղաքացիների համար ՄԱԿ-ը նոր ճամբար է կառուցել, որին «Նիմրուդ» անունն են տվել: Թուրքմեններով հիմնականում բնակեցված Թալ-Աֆարը ԻՊ-ի ահաբեկիչների ձեռքն էր անցել երեք տարի առաջ: Մոտ 40 հազար քաղաքացիներ տեղահանված են: Այժմ շրջանը գտնվում է իրաքյան բանակի վերահսկողության տակ: Թալ-Աֆար քաղաքից մոտ 55 կմ հեռավորության վրա գտնվող կառավարության կառուցած ճամբարը կարող է ընդունել մոտ 3.600 ընտանիքների կամ 22 հազար անհատների: ՄԱԿ-ի փախստականների գործակալության անունից ճամբարի կառավարումը հանձնվել է «Իրաքի փրկության» մարդասիրական կազմակերպությանը: «Սա պալատ է նման, մենք երջանիկ ենք եւ հույս ունենք, որ մեր փորձությունները վերջ կգտնեն այլեւս», նշել է ճամբարում հաստատված 6 երեխաների մայր Խոդեյրան:


Հովիկ Էթյեմեզյան

Իսկ ՄԱԿ-ի փախստականների գործակալության Մոսուլի գրասենյակի ղեկավար Հովիկ Էթյեմեզյանը ճամբարի բացման արարողության ժամանակ ասել է, որ տեղավորման գործով զբաղվող անձնակազմը ամեն ինչ անում է նախ ամենախոցելիներին հայտնաբերելու համար: «Ցանկանում ենք, որ այստեղ նրանք արժանապատիվ կյանք վարեն: Փորձում ենք տեղահանվածներին ապահովել կենսական պայմաններով», շեշտել է նա: ՄԱԿ-ի փախստականների «UNHCR» գործակալության ներկայացուցիչն էլ հավելել է, որ ճամբարը համագործակցության հիանալի օրինակ է:

Հ. Ծ.

# «Ժխտողականության ճարտարապետները» ֆիլմի հեղինակները Կապիտոլ Հիլում

**Միջազգայնորեն ճանաչված հասարակական գործիչ Դին Կեյնն ու «Ժխտողականության ճարտարապետները» (Architects of Denial) վավերագրական ֆիլմի գործադիր պրոդյուսեր Մոնտել Ուիլյամսը Կապիտոլ Հիլում միացել են Ամերիկայի Հայ դատի (ANCA) հանձնախմբի անդամների կոչին՝ ուղղված ամերիկացի օրենսդիրներին՝ մերժելու Թուրքիայի ժխտողականությունը եւ բռնաշիրական քաղաքականությունը եւ ընդունելու «H.Res.220 եւ S.Res.136» բանաձեւերը, որոնք Հայոց ցեղասպանության դասերից օգտվելով կոչ են անում խուսափել հետագա վայրագություններից: Այս մասին տեղեկացնում է ANCA-ի հոկտեմբերի 2-ի հաղորդագրությունը:**



**Հավաքին, որը տեղի է ունեցել Մ. Նահանգների ռազմածովային հուշահամալիրում վերոնշյալ ֆիլմի վաշինգտոնյան ցուցադրման շրջանակներում, ներկա են գտնվել ինչպես հանրապետական, այնպես էլ դեմոկրատական կուսակցության պատգամավորներ, որոնց թվում են եղել Ջիմ Կլայբըռնը (Ներկայացուցիչների պալատի դեմոկրատների առաջնորդի օգնական), Էլիոտ Էնգելը (ներկ. պալատի արտաքին գործերի հանձնախմբից), Քեյվին Քրամերը, Դեն Դոնովանը, Տրենթ Ֆրանքսը, Ջոդի Հայսը, Դունկան Հանտերը եւ ուրիշներ:**

**Սեպտեմբերի 27-ին Կեյնը Fox News-ի հաղորդավար Տակեր Կառլսոնի հետ է զրուցել ֆիլմի ցուցադրմանը խոչընդոտող երեւույթների մասին: Դրանից առաջ Ուիլյամսին է հյուրընկալել CBS-ը:**

**«Ժխտողականության ճարտարապետները» փաստավավերագրական ֆիլմը ցուցադրվելու է այսօր, հոկտեմբերի 6-ին, Ամերիկայի ավելի քան 10 քաղաքներում:**

Հ. Ծ.

ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍՅԱՆ

պգդ

# Մտորումներ Հայաստան-Սփյուռք համաժողովից հետո

19-րդ դարի 80-ական թվականներին միմյանց հետեւից ծնվեցին ու ասպարեզ իջան հայ քաղաքական կուսակցությունները՝ Արմենականը, Հնչակյանը եւ Դաշնակցությունը: Բոլոր երեք կուսակցությունների ծրագրերում էլ որպես ռազմավարական նպատակ հայ ժողովրդի ազատագրումն էր օսմանյան դաժան տիրապետությունից եւ կյանքի բարեկեցիկ պայմանների ապահովումը: Այդ ծրագրերի տարբերությունը սոսկ ազատությանը հասնելու միջոցների մեջ էր, այսինքն՝ մարտավարական: Այդ ժամանակաշրջանը հայոց պատմության ընդհանուր խորապատկերի վրա դիտարկելով հստակ երեւում է, որ բոլոր կուսակցություններն ունեին որոշակի քաղաքական նպատակ եւ ծրագրեր:

Հանգամանքներն այնպես դասավորվեցին, որ 19-րդ դարավերջին առաջին երկու կուսակցությունները զգալիորեն թուլացան եւ ասպարեզում հիմնական գործող ուժը դարձավ ՀՅԴ-ն: Արմենականների գրեթե բոլոր կարող ուժերը 1896 թ. Վանի Մեծ դեպքի ժամանակ հերոսաբար կռվելով թուրք բարբարոսների դեմ՝ պաշտպան կանգնեցին անզեն ժողովրդին եւ խաբեությամբ զոհվեցին ս. Բարդուղեմիոս վանքի մոտ: Բավականին ընդգրկուն գործունեություն ծավալած ու հզորացած հնչակյաններն էլ սոցիալիզմի վարդապետության պատճառով գժտվեցին, իսկ կուսակցությունը տարափեղկվեց երկու մասի եւ կտրուկ թուլացավ:

20-րդ դարի առաջին երկու տասնամյակները հայ ժողովրդի համար փոթորկալից եղան: Երիթուրքերի կազմակերպած Մեծ եղեռնով հայ ժողովուրդը ցեղասպանվեց, իսկ նրա աշխարհասփյուռ հատվածներից գոյացավ Սփյուռքը: Աշխարհի չորս կողմերը նետված կոտորակված հայությունն իր կամքից անկախ հայտնվեց քաղաքական, տնտեսական, հոգեբանական, իրավական, լեզվական ու մշակութային տարաբնույթ պայմաններում: Ամենատարբեր պատմություն, ավանդույթներ, սովորույթներ ու կենցաղային բարքեր ունեցող ժողովուրդների ծոցում հայտնված հայության այդ հատվածների վիճակը նմանվեց խմոր, բետոն կամ ասֆալտ շաղախող ամանի բաղկացուցիչ նյութի: Իսկ հայտնի է, որ այդ միախառնման արդյունքում որպես կանոն ստացվում է շաղախ, որի բաղկացնող մասերի ինչ լինելը երբեմն մեծ ցանկության դեպքում էլ հնարավոր չի լինում պարզել:

Այլ խոսքով ասած, ջրից ջրհեղեղում հայտնված հայությունը կանգնեց կորսվելու իրական վտանգի առջեւ: Իսկապես, եթե օսմանյան տիրապետության եւ հատկապես երիտթուրքերի կառավարման շրջանում հայությունը «կարմիր» վտանգի մեջ էր, այսինքն՝ ֆիզիկական բնաջնջման էր ենթարկվում, ապա Եղեռնի սպանդից մազապուրծ եղած հայության հատվածների համար ոչ պակաս սպառնալիք էր եւ է «սպիտակ եղեռնը», այսինքն՝ ձուլման վտանգը:

Առաջացած նոր պայմաններում բնականաբար կուսակցություններն այլեւս չէին կարող իրենց պայքարը հին ձեւերով ու մեթոդներով շարունակել: Այդ պատճառով էլ նրանք իրենց առջեւ ծառացած նոր խնդիրները լուծելու համար արմատապես փոխեցին գործելաձեւերն ու մեթոդները: Մեր խորին համոզմամբ, ստեղծված այդ նոր պայմանների ու հայությանն սպառնացող վտանգի դեմ պայքարելու գլխավոր խնդիրը լուծելու առաքելությամբ էլ 1921 թ. ծնվեց ու հրապարակ իջավ Ռամկավար Ազատական կուսակցությունը: Այն նախկինում հայոց մեջ զգալի գործունեություն ծավալած մի քանի կուսակցությունների համախմբման արդյունք էր եւ օրվա անհրաժեշտություն: Այդ կուսակցությունների գաղափարական ընդհանրությունները, կուսակցական կարող բոլոր ուժերի միակամությունը, ստեղծված իրավիճակի ու սփյուռքահայության առջեւ ծառացած խնդիրների ճիշտ եւ խորությամբ ընկալումը հնարավոր դարձրեց այդ միավորումը: Միանշանակ իրենց առջեւ դրված նպատակներն ու գործելաձեւերը փոփոխության ենթարկեցին նաեւ Հնչակյան եւ Դաշնակցություն կուսակցությունները:

Ժամանակը ցույց տվեց, որ «սպիտակ ջարդը» պակաս վտանգավոր չէր, քան «կարմիրը»: Այսպես, եթե օսմանյան սուլթանները պարբերաբար կոտորածներ կազմակերպելով, իսկ երիտթուրքերը Մեծ եղեռն իրականացնելով չկարողացան հայությանը բնաջնջել, ապա ընդամենը 40-50 տարի անհրաժեշտ եղավ մի շարք երկրներում հայտնված հայության նոր սերունդներից խլել նրա սովորույթներն ու հոգեկերտվածքը, հայոց լեզուն, նույնիսկ ուծացնել նրա հոգին կամ աղավաղել այն:

«Կարմիր ջարդի» դեպքում թշնամին հայտնի էր եւ տեսանելի: Այսինքն՝ ճանաչելով թշնամուն հնարավոր էր դառնում լավ կամ վատ նաեւ պաշտպանվել, անհրաժեշտության դեպքում զենքը նրա կրծքին ուղղել: Իսկ «սպիտակ ջարդի» ժամանակաշրջանում թշնամին անտեսանելի էր, աներեւույթ ու անգո: Ավելին, նա մոտենում էր նույնիսկ «բարեկամաբար», քաղաքակիրթ ձեւերով, նրբանկատորեն ու ժպտալով, հետեւապես շատ դժվար էր նրան դիմակայել, մատաղ սերնդին ասել, որ հեռու մնան այդ բարեկամությունից, չտարվեն այդ բարիքների չարիքներից:

Շատ լավ հասկանալով ստեղծված նուրբ ու վտանգավոր այդ կացությունը մեր քաղաքական առաջնորդներն ընտրեցին իմ կարծիքով այդ ամենից պաշտպանվելու լավագույն ձեւը. կուսակցությունները Սփյուռքի տարբեր օջախներում հիմնեցին դպրոցներ, հայեցի ակումբներ, հայկական թերթեր, քաջալերեցին ու տարածեցին հայկական մշակույթ եւ այլն: Հայ առաքելական եկեղեցին, որ հայ ժողովրդի ողջ պատմության ընթացքում հայկականության պահպան կռվաններից մեկն էր եղել, սատար կանգնեց այդ ձեռնարկներին, օգնեց եւ օժանդակեց այդ բարեհաջող ընթացքին: Արդյունքում աշխարհասփյուռ հայությունը կարողացավ աստիճանաբար ուղղել մեջքը եւ ոչ միայն պահպանել իր էությունն ու հայեցի դիմագիծը, այլեւ ստեղծել նոր արժեքներ: Աննախադեպ հզորացան հատկապես հայրենիքին մոտ գտնվող երկրներում (Սիրիա, Լիբանան եւ այլն) ծվարած հայության հատվածները, որոնք աստիճանաբար դարձան հայկականության հզոր հոգեւոր-մշակութային կենտրոններ:

Այդ ամենում անուրանալի դերակատարություն ունեցած հայ ավանդական կուսակցությունները կարողացան կատարել տվյալ պահին իրենց առաջնորդողի, ղեկավարի եւ ուղղություն տվողի առաքելությունը՝ ոչ միայն օգնել ու առողջ մեծացնել սփյուռքահային, այլեւ դաստիարակել նրան որպես իսկական հայ: Որովհետեւ սովորաբար լավ հայը նախ պիտի լավ մարդ լինի: Աննկարագիր, շահամոլ եւ նենգ հոգով մարդը չի կարող իսկական հայ կոչվել, քանի որ Սփյուռքում հայ լինել նշանակում է միշտ պատրաստ լինել դժվարությունների եւ զոհողություններ կատարել, անձնական շահը ստորադասել ընդհանրականին: Այլ կերպ ասած՝ քաջություն ունենալ եւ նույնիսկ վստահությամբ թիավարել տարաբնույթ հոսանքների դեմ: Իսկ հայ ավանդական կուսակցությունները տասնամյակներ շարունակ նպաստել են, որ առողջ ու համարձակ թիավարողներ ունենանք:

Մեր օրերում շատ բան է փոխվել. արդեն ունենք մեր երազանքի մարմնացում անկախ պետականությունը, գիտատեխնիկական ուժեղ պոտենցիալով հարուստ հայրենիք, ունենք հաղթանակած արցախյան պատերազմ, հարյուրամյակներ շարունակ զիջելու փոխարեն ունենք նաեւ առայժմ փոքր, բայց շատ կարեւոր հողակտոր Արցախի վերադարձի փաստ: Նախկին ընկճված, ցեղասպանված զոհի հոգեկերտվածքի փոխարեն ունենք հաղթողի, պահանջատիրոջ ու աշխարհի ամենազարգացած ժողովուրդների շարքում հպարտ ու հավասար քայլելու իրավունք, սակայն կարծում ենք, որ Սփյուռքում նաեւ կուսակցությունների կարիքը ունենք:

Նշենք, որ կուսակցությունները դասական բնույթով չենք պատկերացնում, այլ այնպիսին, ինչպիսին իրականում նրանք կան այժմ: Այսինքն՝ ոչ թե որեւէ գաղափարախոսության կրքոտ հետեւորդներ, այլ որպես թիմային ու համախմբող կառույցներ, բարեկամների ու համախոհների ակումբ, որոնց հիմնական ու գլխավոր նպատակը հայապահպանությունը պիտի լինի նաեւ այժմ: Իսկ հայապահպանության դժվարին առաքելությունն իրականացնելու կարեւորագույն գործոններ են Հայրենիքի հետ ամուր կապի պահպանումը, կրթաքարոզչական ու կազմակերպական գործառույթների շարունակական իրականացումը, բազմալեզու լրատվամիջոցների ստեղծումը եւ այլն: Անչափ կարեւոր է նաեւ կուսակցությունների եւ Հայ եկեղեցու փոխսատարումը, որը շատ օգտակար է:

Մեր օրերում այլեւս պիտի համաչափ ու միասնական լինի նաեւ խոսքի եւ գործի համապատասխանությունը, անտարակույս խոսքին պիտի անպայման հետեւի գործը: Շատ կարեւոր է նաեւ այն, որ երբ որեւէ էական խնդիր առաջանա, բոլոր կուսակցությունները միասնաբար հանդես գան եւ բոլոր միջոցներով աշխատեն այդտեսակ խնդիրները հօգուտ հայությանը լուծել:

Փորձը ցույց է տվել, որ մեր երկարամյա գոյապայքարի ընթացքում չեզոք մնալը կամ հատվածական շահերով առաջնորդվելը մեծ վնասներ է հասցրել ազգին, իսկ խաղաղ տարիներին՝ առավել, քանի որ մշտարթուն ուծացում հրեշը ակնդետ հետեւում է յուրաքանչյուր նման իրավիճակում պատրաստ վճռական հարվածի: Հարկավոր է նաեւ մեկընդմիշտ գիտակցել, որ կուսակցական լինելը բնավ էլ չի նշանակում ազգի վերնախավը լինել: Ընդհակառակը, կուսակցականը միշտ պետք է քայլի ժողովրդի առջեւից, առաջնորդի նրան, ճիշտ ու անսխալ ուղիներ մատնանշի: Ինչը նշանակում է նաեւ հարվածն առաջինն ընդունել սեփական մարմնին, պատնեշել, որ այն ազգին չհասնի: Այսինքն՝ լինել զինվոր-հրամանատարի դերում եւ միայն այդ դեպքում ազգը կհետեւի նրանց, քանի որ չեզոք մնալը պարզապես ամոթաբեր կդառնա ու կդիտվի դասալքություն:

Կուսակցությունների պահպանումը նաեւ ենթադրում է մեկ այլ ոչ պակաս կարեւոր առաքելություն. երիտասարդ սերնդի հայեցի դաստիարակությամբ արժանի հերթափոխ ապահովել: Հակառակ դեպքում կուսակցությունները կհայտնվեն պատեհապաշտ եւ գործից անտեղյակ մարդկանց ձեռքում եւ ոչ միայն հարցականի տակ կդրվեն դրանց գործունեությունը, այլեւ գոյությունն ընդհանրապես: Գաղտնիք չէ, որ կուսակցությունների ղեկին հայտնված պատահական մարդիկ չեն կարող արագ արձագանքել ազգին վերաբերող հրատապ հարցերին եւ համապատասխան լուծումներ գտնել ու պատվար դառնալ օտար ու ներքին ոտնձգությունների դեմ:

Մեր գոյապայքարի պատմությունն իսկապես ապացուցել է կուսակցությունների գոյության անհրաժեշտությունը: Կարծում եմ, դա այսօր էլ օրակարգային խնդիր է: Հատկապես Սփյուռքում, որտեղ կուսակցություններն ունեցել են նաեւ իսկայական դաստիարակիչ դերակատարություն: Մի առաքելություն, որն ավելի դժվար է, քան եկեղեցի ու դպրոց կամ գերեզմանատուն պահելը: Մի կարեւոր հանգամանք էլ կա. հայրենի իշխանությունները Սփյուռքի հետ մեծ մասամբ հարաբերվում են կուսակցությունների միջոցով, հետեւաբար որքան դրանք ուժեղ ու համախմբված լինեն, լավ տիրապետեն իրավիճակին ու ազգին վերաբերող հարցերին, այնքան հեշտ ու արդյունավետ կլինեն այդ հարաբերությունները: Հետեւությունը մեկն է. հայրենի իշխանությունները եւ Հայաստանյայց առաքելական եկեղեցին շարունակաբար ու հետեւողականորեն քայլեր պիտի ձեռնարկեն Սփյուռքում կուսակցություններին ավելի համախմբելու ու ուժեղացնելու ուղղությամբ եւ ոչ թե հակառակը:

**25.09-02.10.2017**

*«Ազգ»ի նախորդ համարում (22.09.17) հրապարակել էինք դոկտոր Սուրեն Սարգսյանի հոդվածը «Բոլո՞ր սփյուռքահայերն են Հայաստանի Հանրապետությունը համարում իրենց հայրենիքը» վերնագրի ներքո: Ինչպես եւ սպասվում էր, հոդվածում արծարծված հարցերը առաջացրել են ընթերցողների սուր հետաքրքրությունը եւ արժանացել ոմանց արձագանքին: Առանձնացնում ենք պատմաբան-բանասեր Գեւորգ Յազըճյանի արձագանքը՝ որոշ հապավումներով:*

## Արձագանքում են մեր տպագրածին

# Հայրենիք հասկացության մասին

**Մեծ գոհունակությամբ կարդացի ԱԶԳ-ի վերջին համարում Սուրեն Սարգսյանի հոդվածը, եւ համաձայն եմ այնտեղ արտահայտված մտքերին: Ավելին ասեմ, ՀԱՅՐԵՆԻՔ հասկացությունը տարբեր ըմբռնումներ ունի ողջ հայության մեջ եւ ոչ միայն սփյուռքահայության մեջ: Վերջին 20 տարիներին հսկայաքանակ նյութ եմ հավաքել հայոց հայրենիք, հայկական ինքնություն, Հայ դատ, հայրենադարձություն ու հարակից հասկացությունների եւ թեմաների մասին: Միայն հայ հեղինակներից եւ հայկական մամուլից արտագրել եմ հայոց հայրենիք հասկացության 50 - ՀԻՍՈՒՆ - տարբեր սահմանում, ինչը ԱՂԵՏ է պարզապես: Դուրս է գալիս, թե մենք չգիտենք, թե ո՞րն է կամ ի՞նչ է մեր հայրենիքը: Ի դեպ, 50-րդ սահմանումը պարզապես սարսափելի է. պարզվում է, որ հայությունն այսօր ունի ԵՐԿՈՒ ՀԱՅՐԵՆԻՔ: Չենթադրեք, որ դրանք Հայաստանն ու արտասահմանի տվյալ երկիրն է, ուր ծնվել է, ապրում է եւ/կամ քաղաքացիությունն ունի տվյալ հայը: Ոչ: Երանի՜ պիտի տայի, եթե այդպիսին լիներ: Պարզվում է, որ այդ երկու հայրենիքներն են Հայաստանը եւ ՂԱՐԱԲԱՂԸ: Այս ԿՈՐԾԱՆԱՐԱՐ գյուտի հեղինակն է լիբանանահայ ԱՐԾԻՒ թերթը - շատ հավանաբար նրա խմբագիր Վարուժան արք. Հերկելյանը, իսկ կուտը կուլ է տվել ՀՅԴ Լիբանանի երիտասարդական միության ՌԱԶՄԻԿ թերթի խմբագրությունը:**

**Շատ ճիշտ է այն նկատումը, թե գաղափարների այս խառնաշփոթի հստակեցումը ՀՈՒՅԺ ԾԱՆՐ ԱՇԽԱՏԱՆՔ է: Մեր մտավորականությունը ինչով ասես զբաղվում է, քան այս հույժ կարեւոր հարցով:**

**Ողջունում եմ մանավանդ հոդվածի հետգրությունը, որն ունի վիթխարի նշանակություն. բոլոր ախմախները, իշու համառությամբ առանձնացնում են Հայաստանն ու Արցախը: Սա իրականում, ազգի պառակտման քաղաքականություն է տեղեկատվական-հոգեբանական ոլորտներում:**

**Մի խոսքով՝ շատ բան կա ասելու: Ամեն դեպքում, լավ արեցիք, որ այս հարցը արծարծեցիք:**

ԳԵՎՈՐԳ ՅԱԶԸՃՅԱՆ

# Մաստարայի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում հայտնաբերվեցին ու վերականգնվեցին 7-րդ դարի որմնանկարներ

ԱՐԱ ԶԱՐՅԱՆ

Իտալիա



Արագած լեռան փեշերին սփռված հայկական վաղ միջնադարյան եկեղեցիներում որմնանկարների ուսումնասիրության, դրանց մնացորդների հայտնաբերման ու հնարավորի սահմաններում վերջիններիս մաքրման ու պահպանական վերականգնման ծրագրի ներքո, վերականգնող ճարտարապետ, իտալաբնակ **Արա Զարյանի** ու որմնանկարի վերականգնող մասնագետ, իտալաբնակ, ազգությամբ բելգիուհի **Քրիստին Լամուդէն**, անցյալ տարի, Արագածոտն մարզի Մաստարա գյուղի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում ուսումնասիրություններ կատարելու ընթացքում, տեղ-տեղ պահպանված ավազակիրային սվաղի շերտի տակ, հայտնաբերեցին որմնանկարի մնացորդներ: Նկարչական հորինվածքի գունային մնացորդները ուսումնասիրելու ու դրանք պահպանելու, վերականգնելու միտումով, 2016 թվականին հարցում արվեց ՀՀ Մշակույթի նախարարություն ու Հայ եկեղեցու Արագածոտնի թեմի առաջնորդարան: Համապատասխան համաձայնություն ու թույլտվություն ստանալուց հետո, այս տարի ամռանը, վերականգնող մասնագետները իրենց հաշվին եկեղեցու ներսում կազմակերպեցին շին. հրապարակ Իտալիայից բերված տախտակամածով, գործիքներով ու անհրաժեշտ նյութերով:

Որմնանկարի պահպանված հետքերը գտնվում են եկեղեցու արեւմտյան մուտքի վրա, 1930-ական թվականներին փայտյա օթյակի հրվ-արմ անկյան պատին, հատակից մոտ 3,5 մ բարձրության վրա: Տարեց մաստարացիների վկայությամբ, օթյակը հավանաբար երգչախմբի համար է կառուցվել գյումրեցի ֆրանկների կողմից Ի դարի սկզբներին, որի հյս եւ հրվ պատերին հոված, փայտե աստիճաններ կան վեր բարձրանալու համար: Փայտե օթյակը կառուցելու ժամանակ, եկեղեցու ներսը ամբողջովին սվաղված է եղել, ուստի որմնանկարի հետքերը ծածկված էին: Այդ իսկ պատճառով օթյակի կառուցման համար անհրաժեշտ փայտե գերաններն ու հատակը, դժբախտաբար կառուցվել են որմնանկարի պատը մասնակի փչացնելով ու ծածկելով նկարազարդ մեծ հատվածը: Եկեղեցու որմնանկարված ու առանց որմնանկարի սվաղված բոլոր պատերը սուր գործիքով ծակոտվել են այնպես, որ նոր սվաղը ավելի ամուր հպվի պատին: Սվաղը իրենից ներկայացնում է մանրահատիկ մոխրագույն ավազի ու փոքր հարաբերության կրային մասի շաղախ, որի վրա անցեկացվել տեղ-տեղ կապույտ եւ համատարած դեղին ներկաշերտ:

Մաստարացիների վկայությամբ, 1992 թվականին, խորհրդային կարգերի փլուզումից հետո, եկեղեցու ներսը դատարկվել է նախկին պահեստի ապրանքներից ու պատերը մաքրելու նպատակով, զանազան սուր գործիքներով՝ կացին, ուրաք, բրիչ, հեռացրել են սվաղը՝ կրկին փչացնելով ու նահատակելով արդեն վատ պահպանված որմնանկարների հետքերը եւ հին սվաղը: Այսօրվա իրավիճակով, գրեթե ամենուր պահպանվել է վերջին մոխրագույն սվաղի բարակ շերտը, որը ծածկում է եկեղեցու հին բնօրինակ սվաղը: Սվաղը քանդել են այնպիսի վայրագությամբ, որ հին պատի զանազան հատվածներում տուֆե քարերը ծակծկել ու փչացրել են: Կենտրոնական գմբեթն ու թմբուկը, որոնք 20 մ բարձրության վրա են, պահպանում են դեռեւս վերջին սվաղի ու ներկի ընդարձակ հատվածներ: Գմբեթը շուտափույթ վերանորոգման կարիք ունի, քանզի ներս թափանցող անձրեւաջրերը ողողում են գմբեթի սվաղի հատվածները, որոնք կամաց-կամաց ցած են ընկնում եկեղեցու հատակին՝ վերացնելով պատմական հատվածի վկայությունները:

Մեզ հետաքրքրող որմնանկարի հատվածի մաքրման աշխատանքները սկսվեցին 2017 թվականի հուլիսի 5-ին ԺԹ դարի սկզբի սվաղի՝ նայլոնի խոզանակով ու նշտարով հեռացման աշխատանքներով: Հասնելով որմնանկարի պահպանված հատվածին, այն մաքրվել է դեմիներալիզացված ջրի ու թեթեւ բազիկ լուծույթի թրջոցներով, մինչդեռ որմնանկարի թաղանթը պաշտպանվել է Palaroid B72 համապատասխան լուծույթի քսուկով: Աշխատանքների ընթացքում պարզվեց, որ որմնանկարը իրականացվել է կրկնակի սվաղի ցեփի վրա: 4-5 մմ հաստությամբ սվաղի առաջին շերտը իրականացվել է հղկված քարերին լավ սեղմված, իսկ նրա վրա անցկացված երկրորդը, որն ավելի բարակ է ու նուրբ, արվել է որմնանկարի բնական պիգմենտների ու հավանաբար օրգանական կապակցվող տարրը կլանելու համար: Նմուշի մասնիկը հանձնվել է Վիչենցայի «Պալլադիո» մասնագիտական կենտրոն լաբորատոր անալիզների համար:

Մաքրելուց ու ամրակայելուց հետո որմնանկարի պահպանված հատվածը այնքան նահատակված ու կցկտուր էր, որ եկեղեցու հատակից կամ օթյակից նայելով անընթեռնելի էր: Ուստի որոշում կայացվեց, լցակայել պակասող սվաղի հատվածները եւ ամբողջացնել նկարչական հորինվածքը ըստ պահպանված հատվածների այնպես, որպեսզի որմնանկարի պահպանված մասերը ստանան հստակ ու ընթեռնելի պատկերագրություն: Որմնաանկարի բնական սվաղի կործանված հատվածները ու անհավաս վայրագների խազերով փչացրած մասերը լցակայվեցին նույն հարթությամբ իրականացված եւ հնի որակին ու գույնին համապատասխան ավազակիրային նոր սվաղով՝ լավ հարթեցնելով ու հղկելով այն փոքր ծեփիչով: Նկարչական հորինվածքը իրականացվել է բնական պիգմենտների միջոցով, որոնք անց են կացվել բարակ շղարշների տեսքով այնպես, որ լրացվի նկարչական մանրամասնի հորինվածքը, սակայն նոր մասը հնից տարբերվի ու ընթեռնելի մնա: Սեւ, զուգահեռ գծերի մեջ ամփոփված կարմիր ու սպիտակ շեղանկյունների երկրաչափական հորինվածքով շրջանակը ամբողջացվել ու վերականգնվել է այն հատվածներում, ուր այն այլեւս չէր պահպանվել: Պահպանական վերականգնման ու ամբողջացման աշխատանքների ավարտին, որմնանկարի ամբողջ մակերեսը պատվեց Palaroid B72 համապատասխան լուծույթի պաշտպանիչ շերտով:

Վերոհիշյալ միջամտությունները հնարավոր դարձրին բացահայտել որմնանկարում պատկերագրված կերպարը՝ թուրը պատյանի մեջ ամփոփված հեծյալ անձի առկայությունը, որ ամենայն հավանականությամբ պատկերագրում է Ս. Գեւորգ զորավարին: Շատ վատ երեւացող ու վայրագորեն վնասված որմնանկարի հերոսի դեմքը ամբողջովին ջախջախվել է, ձիու ոտքերը խազվել ու վնասվել, ձիավորի մարմինը դարձել անճանաչելի: Որմնանկարները վնասվել ու ավերվել են երկու անգամ: Առաջինը սվաղով ծածկելու ժամանակ, երկրորդը այն հեռացնելու ժամանակ: Օթյակի հորիզոնական հենարանի գերանը ընկնում է որմնանկարի պատկերագրության ձիավոր հերոսի ձիու վզի վրա, իսկ օթյակ տանող աստիճանը, որ բարեբախտաբար միայն հենված է որմնանկարին, ծածկում է ձիու հետեւի ոտքը (ՀՀ Մշակույթի նախարարությանը դիմել ենք աստիճանի այս հատվածը ձեւափոխել այնպես, որպեսզի որմնանկարը ամբողջությամբ ընկալելի ու տեսանելի լինի): Նկարիչը վարպետորեն եւ մանրամասն նկարազարդել է ձիավորի հագուստի ելեւէջները, ձիու եզրագիծը իրականացրել կարմիր ներկով, զորավարի թուրը, դրա կոթն ու պատյանը արված են շատ մանրամասն: Այս ամենը արտահայտիչ ու պատկերագրական է: Հետաքրքրական են ձիավորի թիկնոցի հատվածը, լայն տաբատի մանրամասները եւ գոտու նուրբ լուծումները:

Աշխատելով եկեղեցու ներսի պատերի այս հատվածի վրա, հրվ-արմ տրոմպի տակի ուղղանկյուն պատի անկյունում, երկու լուսամուտների արանքում, նկատվեցին հնարավոր որմնանկարի այլ հետքեր: Մանրամասն ուսումնասիրելուց ու փորձնական «պեղումներից» հետո պարզ դարձավ մեկ այլ պատկերազարդման առկայություն հարավային անկյունի լուսամուտի մոտակայքում: Անկյան արլ հատվածում, սրբապատկերի աջակողմում, պահպանվել է հայատառ անվան մի մասը, որի վերակազմությունը թույլ տվեց ընթերցել «Ս. Գաբրիել հրեշտակապետ», որից քիչ հեռու, մեկ այլ սրբի եզրագիծն է լուսապսակով հանդերձ: Այս երկու սրբապատկերների միայն եզրագիծն է պահպանվել, բացառությամբ Ս. Գաբրիել հրեշտակապետի գլխի գանգուրի փնջի հատվածը: Վերջինիս պատկերագրությունը Մաստարայի եկեղեցում պատահական չէ, քանզի Ղուկասի Ավետարանի համաձայն, Մկրտիչը որդին էր Եղիսաբեթի ու քահանա Զաքարիայի, որոնք պատկառելի հասակում որդի են ունենում: Հովհաննեսի ծնվելու լուրը Զաքարիան ստանում է Աստծուց՝ Գաբրիել հրեշտակապետի միջոցով, Տաճարում ծիսական խնկարկության ժամանակ: Այս հատվածի որմնապատկերները փչացվել են առանց խնայելու նրանց գեղեցկությունն ու վսեմությունը: Նկարչական հատվածի ամբողջ մակերեսը ծածկված է խազերով ու փոսիկներով: Այս որմնանկարը նույնպես ունեցել է առաջին որմնանկարի հորինվածքով շրջանակ:

Եկեղեցու այս հատվածում որմնանկարների վնասված հետքերի վրա աշխատելու ընթացքում մտածեցինք, որ եկեղեցին չէր կարող ունենալ միայն այս որմնանկարված պատերի հատվածները, եւ սկսեցինք փնտրել այլ հետքեր ներքին պատերի զանազան հատվածներում: Շուտով մեր ենթադրությունները ստացան ցանկալի արդյունք եւ եկեղեցու զանազան պատերին հայտնաբերվեցին որմնանկարի տարբեր մնացորդներ: Այս հանգամանքը վկայում է այն մասին, որ ի սկզբանե եկեղեցին ամբողջությամբ որմնանկարված է եղել: Որմնանկարի այլ հետքեր կան գլխավոր խորանում, հրվ-արլ տրոմպատակ անկյան պատին, հարավային խորանի արլ պատին: Այս վերջինը մեծ հայտնագործություն եղավ, քանզի զետեղված լինելով հատակից մոտ 3 մ բարձրության վրա, եկեղեցու հատակից բոլորովին անտեսանելի էր ու մնացել էր սվաղի տակ: Այն իրենից ներկայացնում է երկու ֆիգուրների ներքեւի հատվածները մինչեւ գոտկատեղ: Հետաքրքրականը այն է, որ այս երկու պատկերները նույնպես շրջանակված են առաջին որմնանկարի հորինվածքին համապատասխան շրջանակով՝ սեւ զուգահեռ գծերի մեջ ամփոփված կարմիր ու սպիտակ շեղանկյունների շարք: Այս հանգամանքը վկայում է նույն նկարչի ձեռքը եւ նույն ժամանակահատվածի կատարումը: Ֆիգուրներից ձախինը աշխարհիկ է, հագին սանդալ, ոտքի եզրագիծը կարմիր է, հագին սպիտակ, երկար զգեստ, իսկ ձախինը՝ բարձր հոգեւորական է, ոտքերին տրեխներ ունի ու վստահաբար ավելի կարեւոր անձ է, քանզի հագուստը ավելի պաշտոնական է: Այս պատկերագրությունները նույնպես շատ վնասվել են հարվածներից ու խազերից: Սրբապատկերների ներքեւի հատվածում հայատառ արձանագրություն է պահպանվել, որն անընթեռնելի է: Եկեղեցու այս հատվածի որմնանկարի վրա իրականացվել են նախորդի նման մաքրման, ամրակայման ու պահպանական վերականգնման միջոցառումներ այնպես, որպեսզի շատ վատ պահպանված ու բազմիցս վնասված որմնանկարի հատվածը ընթեռնելի վերադառնա եկեղեցու հատակից: Բազմաթիվ մանրամասներ ուսումնասիրվել ու վերականգնվել են տարբերակելով դրանք հին, անընթեռնելի փոքր հատվածներից:

Որմնանկարի հետքեր հայտնաբերվեցին նաեւ հրվ-արլ անկյունի պատին, որից հասկանալի է միայն մի սրբապատկերի լուսապսակի աղոտ հետագիծը: Այս հատվածում իրականացվել եմ միայն մաքրման ու ամրակայման աշխատանքներ:

Հակված ենք եզրակացնելու, որ հայ ճարտարապետության գլուխգործոց Մաստարայի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին, տվյալ ժամանակաշրջանի հայկական եկեղեցիների շարքում մտահղացվել, նախագծվել, կառուցվել է նկատի ունենալով նրա լուսավորության խորհրդավորությունն ու որմնանկարների հիասքանչ պատկերագրությունը որպես արվեստի կատարյալ պատկերի ամբողջական ու նախնական մտահղացումով կերտված գանձ, որը ավելի է արժեքավորում հայ վաղ քրիստոնեական գեղարվեստական աշխարհընբռնումը ու տիեզերական մտահղացումը: Քրիստոնյա հայ մարդը ձգտել է դեպի գմբեթ, դեպի կատարյալ պատկերագրություն ու հավերժություն: Սրա վկաներն են նույն ժամանակաշրջանին կառուցված եւ մեր կողմից վերականգնված Լմբատավանքի Ս. Ստեփանոս Նախավկա, Կարմրավորի Ս. Աստվածածին, Արթիկի Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցիների որմնանկարները:

2017

# Մոսկվա - Էր-Ռիադ. ավելին քան նավթը

## *Սալման թագավորը գալիս է Մոսկվա*

ՌԴ նախագահի մամլո քարտուղար Դմիտրի Պեսկովը ԶԼՄ-ներին հայտնել է Սաուդյան Արաբիայի թագավոր Սալման իբն Աբդուլ-Ազիզ Ալ Սաուդի Մոսկվա կատարելիք այցի մասին: Նրա խոսքերով՝ սպասվում է, որ այդ այցելությունը նոր, հուժկու խթան կդառնա երկկողմ հարաբերությունների զարգացման համար: Ռուսաստանը շահագրգռված է Մերձավոր Արեւելքի տարածաշրջանում եւ մասնավորապես Սիրիայում երկխոսության շարունակմամբ: Դա բանակցությունների գլխավոր թեմաներից մեկն է:

Ուրիշ, օրինակ՝ ամերիկյան աղբյուրների համաձայն, թագավորը մտադիր է պաշտպանություն հայտնել Աստանայում Սիրիային նվիրված բանակցությունների գործընթացին, քննարկել Քաթարի հարցը, էներգետիկ անվտանգությունը եւ նավթահանույթը կրճատելու եւ OPEC-ի շրջանակներում նավթի գները պահպանելու հարցերը: Դա կլինի Սալմանի՝ որպես թագավորի առաջին այցը Ռուսաստան:

Երկու երկրներն ունեցել են տարբեր մակարդակի շփումներ, որոնց ընթացքում գնահատական է տրվել ինչպես Սիրիայի, այնպես էլ ամբողջ Մերձավոր Արեւելքի իրադրությանը: Բայց այժմ, ինչպես նշում է «Ռեգնում» գործակալությունը, բացի էներգետիկ համագործակցությունից, Մոսկվան եւ Էր-Ռիադը ունեն նաեւ քաղաքական մերձեցման այլ պատճառներ: Թագավորի եւ նախագահ Պուտինի հանդիպումը կարող է դրական ազդեցություն ունենալ ամբողջ Մերձավոր Արեւելքի իրադրության հետագա զարգացման վրա:



2015թ.

Այս կապակցությամբ հարկ է ուշադրություն դարձնել հետեւյալ կարեւոր գործոններին: Այցը տեղի կունենա այն պահին, երբ արդեն Անկարա է այցելել նախագահ Պուտինը, որից հետո սկսեցին ուրվագծվել Անկարայի ու Մոսկվայի հնարավոր մարտական դաշինքի հիմնական գծերը:

Ամերիկյան Newsweek շաբաթահանդեսը (այժմ՝ համացանցային) նշում է, որ չնայած մերձեցմանը, տարածաշրջանում երկրներից յուրաքանչյուրն ունի իր երկարաժամկետ շահերը: Սիրիայի ուղղությամբ ակտիվորեն համագործակցում է Ռուսաստան-Թուրքիա-Իրան եռյակը, իսկ Քաթարի ճգնաժամի պատճառով ի հայտ է եկել նաեւ Թուրքիա-Քաթար-Իրան դաշինքը: Տեսականորեն որեւէ խոչընդոտ չկա այդ երկու դաշինքների միջեւ համագործակցություն հաստատելու համար, ինչը նկատելիորեն կբարելավեր Սաուդյան Արաբիայի շուրջը տիրող իրավիճակը:

Էր-Ռիադը խնդիրներ ուներ Բարաք Օբամայի վարչակազմի հետ, որը օժանդակել էր Իրանի միջուկային ծրագրին նվիրված Վիեննայի բանակցություններին: Երբ այս տարվա մայիսի 21-ին Էր-Ռիադում նախագահ Թրամփը գլխավոր թշնամի անվանեց Իրանին, սաուդցիներից շատերին սկսեց թվալ, թե հակադիր իրավիճակ է ստեղծվում: Բայց հետո պարզ դարձավ, որ Վաշինգտոնը փորձում է միմյանց ընդհարել տարածաշրջանի սուննի եւ շիա գլխավոր պետություններին: Շուտով ծագեց նաեւ Քաթարի հետ կապված հակամարտությունը, որը լարվածության գոտի ստեղծեց Պարսից ծոցում՝ ուժեղացնելով Իրանի ազդեցությունը: Թեեւ Սաուդյան Արաբիան, Եգիպտոսը, ԱՄԷ-ն եւ Բահրեյնը խզեցին հարաբերությունները Քաթարի հետ, դա սկզբունքորեն ոչինչ չփոխեց:

Իրանի դեմ Վաշինգտոնի ծրագրած նոր հարձակումը ձախողվեց, Սպիտակ տունը խճճվեց դիվանագիտական ցանցերում: Իսկ Սաուդյան Արաբիան հասկացավ, որ իրեն նոր լուծումներ են հարկավոր իշխող գահատոհմում ուժերի վերադասավորման պայմաններում, սկսվեց երկրի ոչ այնքան բացահայտ վերակողմնորոշումը իր ավանդական ամերիկամետ կեցվածքից: Ռուս-սաուդյան հարաբերությունների համար դա շատ բան էր նշանակում: Մինչեւ վերջերս երկկողմ կապերի հիմքը համագործակցությունն էր էներգետիկայի ոլորտում, որը ոչ միշտ էր փոխակերպվում մերձավորարեւելյան խնդրների դրական լուծումների: Սակայն նոր պայմաններում անհնար է հարաբերությունները սահմանափակել միայն նավթային հարցերով:

Հարկ է լինում հաշվի առնել նաեւ քաղաքականության եւ անվտանգության խնդիրները: Բացառված չէ, որ Մոսկվան որպես միջնորդ հանդես գա Էր-Ռիադի եւ Թեհրանի հարաբերությունների կարգավորման գործում: Սաուդցիների համար դա կարող է դրական լինել, եթե սաուդցի պաշտոնյաներից մեկի խոսքերով ասած, «Վաշինգտոնը երես թեքի Սաուդյան Արաբիայից»: Ամեն դեպքում, կասկած չի հարուցում, որ Ռուսաստանը եւ Սաուդյան Արաբիան պատրաստ են հաղթահարել երբեմնի տարաձայնությունները եւ գործել հանուն ընդհանուր շահերի: **Պ. Ք.**

# Ոչ միայն հանուն անկախության, այլեւ ընդդեմ միապետության

## *Կատալոնացիների ինքնորոշումը միջազգային իրավունքի տեսանկյունից*

Հոկտեմբերի 1-ին Կատալոնիայում անցկացված անկախության հանրաքվեի նախնական արդյունքների համաձայն, քվեարկության մասնակիցների մոտ 90 տոկոսը արտահայտվել է անկախության օգտին: Մադրիդի իշխանությունների արձագանքը բավական կոպիտ էր ու կտրական:

Իսպանիայի վարչապետը հրաժարվեց ընդունել, որ Կատալոնիայում անկախության հանրաքվեն կայացել է: Կատալոնացիների նկատմամբ Մադրիդի իշխանությունների գործադրած բռնությունները կարելի է ներկայացնել որպես օրինապահություն: Կենտրոնական իշխանությունները ամեն ինչ արեցին, որպեսզի կատալոնացիների տրամադրությունները դառնան էլ ավելի հակամադրիդյան:




Հանրաքվեի հարցը հետեւյալն էր. «ուզո՞ւմ եք արդյոք, որ Կատալոնիան դառնա անկախ պետություն՝ կառավարման հանրապետական ձեւով»: Այլ կերպ ասած, իրենց հանրապետական ավանդույթներին հետեւող կատալոնացիները հոկտեմբերի 1-ին քվեարկեցին ոչ միայն հանուն անկախության, այլեւ ընդդեմ միապետության:

Կատալոնիայի ղեկավարությունը Իսպանիայի իշխանությունների գործողությունները դեմ են համարում միջազգային իրավունքի նորմերին եւ բոլոր հիմքերն ունեն դրա համար, կարծում է միջազգայնագետ Միխայիլ Դեմուրինը:

Բանն այն է, որ 1966 թ. ՄԱԿ-ի հաստատած Միջազգային, տնտեսական ու մշակութային իրավունքների պակտի եւ Քաղաքական ու տնտեսական իրավունքների միջազգային պակտի հենց առաջին հոդվածում առկա հետեւյալ դրույթները.

1. Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքի բերումով նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը եւ ազատորեն ապահովում են իրենց տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը:

3. Սույն դաշնագրի մասնակից բոլոր պետությունները ... Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության դրույթներին համապատասխան պետք է խրախուսեն ինքնորոշման իրավունքի իրականացումը եւ հարգեն այդ իրավունքը:

Նույն սկզբունքներն ամրագրված են 1970 թ. ՄԱԿ-ի հաստատած Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագրում, Հելսինկիում 1975 թ. անցկացված Եվրոպայի անվտանգության ու համագործակցության խորհրդակցությունում, ինչպես նաեւ դրա վրա հիմնված եվրոպական մյուս վերջին փաստաթղթերում:

Ժողովուրդների ինքնորոշման իրավունքը կապված է որոշ հակասությունների հետ: Առավել էական հակասությունը կապված է միջազգային իրավունքի մյուս կարեւոր սկզբունքի՝ պետությունների տարածքային ամբողջականության հետ: Սակայն դա դիալեկտիկական հակասություն է եւ չպետք է խանգարի երկու սկզբունքների փոխկապակցված իրականացմանը՝ հաշվի առնելով կոնկրետ հանգամանքները եւ միջազգային իրավունքին համապատասխանությունը:

Արդ, որո՞նք են այդ փոխկապակցվածության առանձնահատկությունները, մասնավորապես Կատալոնիայի պարագայում: Վերջին պարագայում դրանք երկուսն են:

Առաջինն այն է, որ թե՛ ՄԱԿ-ի կանոնադրությունը, թե՛ Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագիրը պարունակում են դրույթներ, որոնց համաձայն պետությունները պարտավոր են ձեռնպահ մնալ ուրիշ պետությունների տարածքային ամբողջականության դեմ ուղղված գործողություններից: Հենց պետությունները, այլ ոչ թե տվյալ երկրի ներսում գործող քաղաքական կուսակցություններն ու միավորումները կամ ժողովրդական շարժումները:

Երկրորդ դրույթը հատկապես կարեւոր է: Այս դեպքում հեղինակը նշում է նաեւ դրա կարեւորությունը Ուկրաինայի ճգնաժամի համատեքստում: Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագրից հետեւում է, որ տարածքային ամբողջականությունը կամ քաղաքական միասնությունը չխախտելու սկզբունքը գործում է այն պետությունների նկատմամբ, որոնք իրենց գործողություններում պահպանում են ժողովուրդների իրավահավասարության եւ ինքնորոշման սկզբունքը: Տվյալ դեպքում ակնհայտ է, թե որ սկզբունքն է առաջին տեղում, եւ, այդուհանդերձ, վերջին տարիների քաղաքական կյանքը ցույց է տալիս, որ տարածքային ամբողջականության սկզբունքը վեր է դասվում ժողովուրդների ինքնորոշման իրավունքից:

Այդ սկզբունքով առաջնորդվելով՝ Եվրամիության ղեկավարությունը հավանություն տվեց կատալոնացիների ինքնորոշման նկատմամբ Մադրիդի իշխանությունների բացասական վերաբերմունքին: Այստեղ եւս գործ ունենք միջազգային իրավունքի ակնհայտ խախտման հետ, քանզի վերոհիշյալ հռչակագրում սեւով սպիտակի վրա գրված է.

«Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության մեջ ամրագրված ազգերի իրավահավասարության եւ ինքնորոշման սկզբունքի ուժով, բոլոր ժողովուրդները իրավունք ունեն առանց արտաքին միջամտության որոշելու իրենց քաղաքական կարգավիճակը եւ իրականացնելու իրենց տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքները, եւ յուրաքանչյուր պետություն պարտավոր է հարգել այդ իրավունքը՝ համաձայն Կանոնադրության դրույթների:

Յուրաքանչյուր պետություն պարտավոր է համատեղ եւ անհատական գործողությունների միջոցով ժողովուրդների իրավահավասարության եւ ինքնորոշման իրավունքին օժանդակել՝ ըստ Կանոնադրության դրույթների»:

Պարզ շարադրված այդ պարտավորություններին հետեւելու փոխարեն Եվրամիության պաշտոնյաները Կատալոնիային նախազգուշացնում են, որ անկախություն ստանալու դեպքում նա չի կարող լինել ԵՄ անդամ: Ի՞նչ է սա, եթե ոչ տնտեսական ճնշման անմիջական սպառնալիք: Ի դեպ, հանրաքվեի նախօրեին, Ռուսաստանի նախագահի մամլո քարտուղարը հայտարարեց, որ դա Իսպանիայի ներքին գործն է:

Ժողովուրդների ինքնորոշման եւ տարածքային ամբողջականության սկզբունքները չպետք է կիրառվեն կամայականորեն ու միակողմանիորեն:

**Պ.Ք.**

AZG NEW SHABAT.QXD 04/10/2017 21:25 Page 12



# Նոր արեւային էլեկտրակայան Հայաստանում

ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ
Տեխնիկական գիտությունների թեկնածու

Հայաստանն ունի արեւային էներգիայի օգտագործման մեծ հնարավորություն: 1մ2 հորիզոնական մակերեւույթի վրա արեւային էներգիայի հոսքի միջին տարեկան արժեքը կազմում է 1720 կՎտժ/մ2: Հանրապետության տարածքի մեկ քառորդն օժտված է տարեկան 1850 կՎտժ/մ2 ինտենսիվությամբ արեւային էներգիայի պաշարներով:

Ներկայումս Հայաստանում արտադրվում են արեւային ջերմային կոլեկտորներ (ջրատաքացուցիչներ) 1.38-4.12 մ2 չափերով: Ջրատաքացուցչի 2.75 մ2 մակերեսով կարող է օրական արտադրել 120-160 լիտր տաք ջուր:Հայաստանի Ամերիկյան համալսարանում տեղադրված են հովացման եւ օդափոխման արեւային համակարգեր, որոնց արեւային մասի հզորությունը կազմում է 50 կՎտ, իսկ ֆոտոէլեկտրական մասի հզորությունը, որն ապահովում է ամբողջ համակարգի անխափան աշխատանքը, 5 կՎտ:

Ծաղկաձորում սեպտեմբերի 29-ին գործարկվեց 434,72 կՎտ հզորությամբ առաջին համակարգային «Արեւէկ» արեւային էլեկտրակայանը: Արեւային կայանն իր հզորությամբ առաջինն է Հայաստանում:Արեւային կայանների կառուցման համար տրվել է 11 լիցենզիա 10 մեգավատտ գումարային հզորությամբ:Այն իրականություն կդառնա առաջիկա երկու տարիների ընթացքում:Կայանի կառուցման համար ծախսվել է մոտ 250 միլիոն դրամ:Այն տարեկան կարող է արտադրել ավելի քան 700 հազար Կվտժ էլեկտրական էներգիա: Այսքան էներգիա ջերմային էլեկտրակայաններում ստանալու համար անհրաժեշտ կլիներ օգտագործել ավելի քան 200 տոննա վառելիք կամ 200 հազար խորանարդ մետր գազային վառելիք, շրջակա միջավայր արտանետել ազոտի օքսիդներ եւ այլ վտանգավոր նյութեր:



Կայանում տեղադրվել է գերմանական «Ռեկոմ» ընկերության պանելներ եւ ABB ընկերության ինվենտորներ եւ մոնիթորինգի համակարգեր: «ԱրԷկ» արեւային էլեկտրակայանը կառուցվել է Տաշիր ընկերությունների խմբին պատկանող «Էներգո Ինվեստ Հոլդինգ» ընկերության կողմից: Տարածքի լուսավորության համար նախատեսված են 6մ բարձրությամբ 12 լուսարձակներ: Կայանի տարածքը ցանկապատված է 2մ բարձրությամբ մետաղացանցով:

Հարկ է նշել, որ Հայաստանում առաջին էլեկտրակայանը կառուցվել է 1903 թվականին 10 Կվս հզորությամբ, Դիլիջան քաղաքում:

# Ավետիք Չթչյանի ստեղծագործությունների ցուցահանդեսը

Հայաստանի Նկարիչների միությունում սեպտեմբերի 11-ին բացվեց Ավետիք Չթչյանի ստեղծագործությունների երկար սպասված ցուցահանդեսը: Օրը կրկնակի տոն էր, քանի որ ընտանիքի անդամները վերջապես կարողացել էին տպագրել Ավետիք Չթչյանի պատկերագիրքը, որտեղ ընդգրկված էին նկարչի 30-ամյա գործունեությունից որոշակի ստեղծագործություններ:



Գիրքը տպագրվել է սփյուռքահայ բարերար Րաֆֆի Քյուրքչյանի կողմից: Գրքի հրատարակման համար իր ներդրումն է ունեցել նաեւ Ավետիք Չթչյանի մտերիմ ընկեր Հակոբ Գույումճյանը:



Ցուցահանդեսի պատրաստման աշխատանքներին իրենց մասնակցությունն են ցուցաբերել նաեւ «Արամե» պատկերասրահի անձնակազմը:

Այսօրինակ մտերիմների շրջանակին եւ նրանց նվիրվածության համար, Ավետիք Չթչյանի ընտանիքի անդամները հայտնում են իրենց խորին շնորհակալությունը երախտագիտության ու գնահատանքի ջերմ զգացմունքով:



Նկարչի ծննդյան 55-ամյակի եւ մահվան 5-րդ տարելիցի առթիվ կազմակերպված հետահայաց այս ցուցադրությունը Ա. Չթչյան արվեստագետի եւ անհատի յուրօրինակ դիմանկարն է, որը ներկայացվեց արվեստասեր հանրությանը, նրանց՝ ովքեր ճանաչում էին իրեն, եւ նրանց՝ ովքեր առաջին անգամ էին խորամուխ լինում նրա երանգապնակի բազմահարուստ լուսավոր շերտերին եւ նրա խորհրդանշանների մեջ...



# Լուսավորվել են սահմանապահ գյուղերից եւս մեկի հիմնական փողոցները



Արդեն երեք տարի, Տավուշի մարզի սահմանապահ Բերդավան գյուղում, Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը (FPWC) եւ ՎիվաՍել-ՄՏՍ-ն արդյունավետ գործընկերություն են ծավալում՝ «Այլընտրանքային էներգիա» նախագծի շրջանակում: Կողմերն իրականացրել են արտաքին լուսավորության համակարգի կառուցման երկու ծրագիր, որի արդյունքում լուսավորվել են համայնքի հիմնական փողոցները, գյուղի սահմանային եզրը, դեպի մանկապարտեզ, դպրոց եւ համայնքային նշանակության այլ կառույցներ տանող փողոցները:

Դեռեւս 2016թ.-ի աշնանը Բերդավանում տեղակայվել էր 175 LED լուսարձակ՝ լուսավորելով 5425մ երկարությամբ տարածք: Ընթացիկ տարում, ծրագրի երկրորդ փուլով, էներգախնայող արտաքին լուսավորության LED լուսարձակների թիվն ավելացել է եւս 27-ով, ինչի արդյունքում լուսավորվել է հիմնական փողոցներից մնացած 900մ-ը: Երկու ծրագրի արդյունքում ընդհանուր առմամբ տեղակայվել է 202 LED լուսարձակ, լուսավորվել 6325մ տարածություն:

Համակարգի գործարկմանը մասնակցել են ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը, FPWC հիմնադրամի գլխավոր ճարտարագետ, ծրագրի պատասխանատու Մարտին Մարալչյանը, Նոյեմբերյան համայնքի ղեկավար Կարեն Աբազյանը, Բերդավանի վարչական ղեկավար Սմբատ Մուղդուսյանը եւ համայնքի բնակիչները:

«Երկրի սահմաններն ամուր պահող գյուղացին թիկունք է մեզ համար: Կարեւոր է, որ նա ունենա փոխադարձության զգացողությունը: Իր խնդիրների մեջ մենակ մնալը կթուլացնի հողի մշակին: Իսկ երբ իրականացվեն կարեւոր, երկարաժամկետ արդյունք ենթադրող ծրագրեր, մեր հայրենակիցները կզգան, որ իրենք մենակ չեն, եւ որ մենք էլ թիկունք ենք իրենց համար: Եթե ցանկանում ենք կառուցել հզոր երկիր, պարտավոր ենք հիշել ամենակարեւորի մասին. անհրաժեշտ է լինել միասնական: Դա բոլորովին բարդ չէ»,- ասել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**:

Էներգախնայող տեխնոլոգիաների ներդրման ծրագիրը հնարավորություն է տալիս թեթեւացնելու համայնքի ֆինանսական բեռը, աշխուժացնելու համայնքային կյանքը, լուծելու օրվա ուշ ժամերին անվտանգ քայլելու ու երթեւեկելու խնդիրները, ինչն առավել կարեւոր է սահմանամերձ գյուղերում: LED լուսարձակների բնապահպանական բաղադրիչն էլ ապահովում է կայուն եւ մաքուր շրջակա միջավայր:

Ի տարբերություն այլ լամպերի, LED լամպերն առավել արդյունավետ ու դիմացկուն են, կարող են անհամեմատ ավելի երկար ծառայել՝ սպառելով 80%-ով պակաս էլեկտրաէներգիա: Բերդավանի փողոցները կլուսավորեն ամռանը 21:00-ից մինչեւ 02:00, իսկ ձմռանը՝ 18:00-ից մինչեւ 01:00: Տոնական օրերին լուսավորություն կապահովվի նաեւ ամբողջ գիշեր:

VIVACELL MTS

## ՎիվաՍել-ՄՏՍ. «iPhone 8»-ի եւ «iPhone 8 Plus»-ի վաճառքի մեկնարկն արդեն տրված է



ՎիվաՍել-ՄՏՍ-ը տեղեկացնում է, որ «iPhone 8» եւ «iPhone 8 Plus» նոր սերնդի սմարթֆոններն արդեն հնարավոր է ձեռք բերել ընկերության սպասարկման կենտրոններից:

«iPhone 8»-ի գինը 459 900 դրամ է, իսկ «iPhone 8 Plus»-ի գինը՝ 509 900 դրամ: Սարքերը կարելի է գնել թե՛ կանխիկ, եւ թե՛ ապառիկ եղանակով:

Սմարթֆոնների առջեւի եւ հետեւի դիզայնի համար օգտագործվել է սմարթֆոնների արտադրությունում երբեւէ օգտագործված ամենադիմացկուն ջրակայուն ապակին, որը կայուն է նաեւ փոշու նկատմամբ: Նոր սերնդի այս սմարթֆոնների առանձնահատկություններից է նաեւ անլար լիցքավորման հնարավորությունը: «iPhone 8» եւ «iPhone 8 Plus» սմարթֆոնների մանրամասն բնութագրությանը կարելի է ծանոթանալ ՎիվաՍել-ՄՏՍ-ի պաշտոնական կայքում:

Մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարելի է օգտվել www.mts.am կայքից, զանգահարել 111 անվճար հեռախոսահամարով, հաղորդակցվել մեզ հետ «111 օնլայն» պորտալի միջոցով, կամ այցելել մեր սպասարկման կենտրոններից որեւէ մեկը: Մեր նորություններին մշտապես ծանոթ լինելու համար միացեք մեզ Ֆեյսբուքում՝ https://www.facebook.com/MTSArmenia/

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԵ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Weekly
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 0010

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 25.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 5.10.2017, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2:

AZG NEW MSHAKUIT.QXD 04/10/2017 20:57 Page 1

Ազգ
ՀԱՎԵԼՎԱԾ
ՄՇԱԿՈՒՅԹ
Թիվ 37(349)
6 ՀՈԿՏԵՄԲԵՐ
2017

# ԵՐԵՔ ԽՆՁՈՐՆԵՐԻ ՓՈԽԱՐԵՆ

**Նաիր ՏԱՆ**

Կինոռեժիսոր Ռուբեն Գեւորգյանցը 14 տարի եղել է Հայաստանի կինեմատոգրաֆիստների միության նախագահը: Նրա մահից կարճ ժամանակ անց շշուկով ու բարձրաձայն քննարկվում էր՝ ով է լինելու միության հաջորդ նախագահը: Նախ շրջանառվում էր Ռուբեն Գեւորգյանցի որդու՝ կինոռեժիսոր Վահե Գեւորգյանցի անունը: Ասում էին, թե նա է ուզում փոխարինել հորը:

Վերջին մեկ-երկու ամսվա ընթացքում կարծես հող էր նախապատրաստվում, որ Վահե Գեւորգյանցից բացի, կինոմիության նախագահի այլ թեկնածուներ էլ առաջադրվեն: Դեռ անցյալ տարվանից էր շրջանառվում Հայաստանի ազգային կինոկենտրոնի տնօրեն Գեւորգ Գեւորգյանին պաշտոնից հեռացնելու՝ մշակույթի նախարար Արմեն Ամիրյանի մտադրությունը: Այդպես էլ եղավ. մոտ երկու ամիս առաջ նախարարը ներկայացրեց կինոկենտրոնի նոր ղեկավարին՝ Շուշանիկ Միրզախանյանին. Գեւորգ Գեւորգյանի գործունեությունը որակվեց անարդյունավետ ու թերի: Նա առաջադրվեց կինոմիության նախագահի թեկնածու, վաղը՝ հոկտեմբերի 7-ին տեղի ունենալիք ընտրություններում:

Այնուհետեւ հայտարարվեց, որ Հարություն Խաչատրյանն այլեւս չի ստանձնելու «Ոսկե ծիրան» կինոփառատոնի տնօրենի պաշտոնը. այն հանձնվել է փառատոնի գեղարվեստական ղեկավար Սուսաննա Հարությունյանին: Հարություն Խաչատրյանը տեղեկացրեց, որ մտադիր է իր թեկնածությունն առաջադրել կինոմիության նախագահի ընտրություններում:

Եվ այսպես, Հայաստանի կինեմատոգրաֆիստների միությունը նախագահի երեք թեկնածու ունի: Մինչեւ հիմա միության նախագահը մեկ թեկնածու է ունեցել՝ հանգուցյալ Ռուբեն Գեւորգյանցը: Կինոռեժիսոր **Արամ Շահբազյանը** պատմում է. «Ես ինչքան ինձ հիշում եմ, համագումարների ժամանակ պարտիական տոմսի պես կարմիր գրքույկս բարձրացրել եմ, ընտրել Ռուբեն Գեւորգյանցին ու խելոք գնացել տուն: Բացի նրանից, ուրիշ թեկնածու չի էլ եղել, որ մտածեի՝ ո՛ր մեկին ընտրեմ: Քվեարկությունն անցել է միաձայն»:

Նրա սերնդակից կինոռեժիսոր **Արման Երիցյանի** կարծիքով՝ ստեղծագործական բոլոր միությունները, այդ թվում՝ կինեգործիչներինը, պետք է վաղուց լուծարված լինեին որպես սովետական մնացորդներ: Իսկ եթե չեն փակվել, ուրեմն կինոմիությունը պետք է լուրջ ու ծանրակշիռ տեղ ունենար, նրա հենքի վրա պիտի կինոդպրոց ունենայինք, կինոմթնոլորտ ստեղծվեր: Մինչդեռ կինոյի մարդիկ չեն էլ հիշում, թե վերջին անգամ երբ են եղել կինոմիությունում, առավել եւս՝ բացել դահլիճի դուռը: Մինչդեռ այդ նույն դահլիճում ժամանակին քննարկումներ, կինոդիտումներ են կազմակերպվել: Նոր նկարահանված յուրաքանչյուր ֆիլմ առաջինն այդ էկրանին է ցուցադրվել, որպեսզի նախ և առաջ ոլորտի մասնագետները տեսնեն ու գնահատեն թարմ աշխատանքը: Ցավալի է, բայց փաստ. կինեմատոգրաֆիստներից ոչ ոք մեկը մյուսի ֆիլմով չի հետաքրքրվում, անգամ տեղյակ չեն, թե ով ինչ կինո է նկարել: Իրենք իրենց ֆիլմերը նայելուց բացի, այլ ֆիլմեր չեն նայում: Նույն իրավիճակն է կինոգետների ու կինոքննադատների շրջանում: Նախ սկսենք նրանից, որ քչերն են տեղյակ լինում, թե ո՞վ ֆիլմի ի՞նչ նախագիծ է ներկայացրել, երբ է սկսել ֆիլմի նկարահանումներն ու ինչ ֆիլմ է առհասարակ: Ո՞վ եւ ի՞նչ սկզբունքով է ընտրում սցենարներն ու որոշում, թե ո՞րն է արժանի նկարահանման, որը՝ ոչ: Իսկ եթե նկարահանվելուց հետո պարզվում է, որ ոչ թե կինո է, այլ ուղղակի խայտառակություն, ո՞վ է պատասխան տալիս դրա համար, ո՞վ է պատասխանատվության ենթարկվում մսխված, վատնված միլիոնների համար:



Բայց քանի որ առաջիկայում կինեմատոգրաֆիստների միության նախագահի ընտրություններն են, կենտրոնանանք ֆիլմարտադրության, կինոյի ոլորտի խնդիրների վրա: Թող որեւէ մեկը հիշի, թե պետական փողերով նկարահանված արժեքավոր, միջազգային փառատոներում մրցունակ, հանդիսատես հավաքած ու հանրային հնչեղություն ստացած ինչ ֆիլմ է տեսել: Ժամանակ առ ժամանակ կարող է կինոազդագիր աչքներովս ընկած լինի: Լավագույն դեպքում ֆիլմի պրեմիերան է տեղի ունենում, հետո դահլիճի լույսերն անջատվում են, հանդիսատեսը քոռուփոշման դուրս է գալիս. ո՛չ նա ասելիք ունի, ո՛չ լրատվամիջոցները, ո՛չ էլ հասուկենտ երեւացող կինոգետները: Ինչպես ֆիլմն աննկատ նկարվեց, այնպես աննկատ էլ ցուցադրվեց ու այդպիսով ավարտվեց նրա էկրանային կյանքը: Անցանք հաջորդին... հաջորդն էլ է նույնը, ու այդպես քսան-երեսուն տարի: Էկրանային թանկարժեք խոտանի համար ո՞վ է ենթարկվել պատասխանատվության. ոչ ոք: Ոչ սցենարը հաստատողը, ոչ փող տվողը, ոչ էլ նկարահանողը: Մեռնեմ օրենքին. որտե՞ղ է օրենքը, օրենք ունե՞նք, որ մեղավորներին պատժի ու անտաղանդին հովանավորող ձեռքը մեկընդմիշտ մոտ չթողնի պետական գանձարանին: Կինոքննադատություն ունե՞նք, որ անտաղանդի ապաշնորհությունը ճակատին շրխկացնի, մուր քսի երեսին: Ընդհակառակը, ապաշնորհին էլ, նրան փող տվողն էլ տապալված ֆիլմից հետո այնպես հպարտ են քայլում, ասես առնվազն «Օսկարի» հավակնորդ են:

Մինչեւ հիմա ի՞նչ է արել կինոգործիչների միությունն այս ախտածին երեւույթների դեմ պայքարելու համար, մինչեւ հիմա որեւէ մեկը որեւէ խնդրի մասին բարձրաձայնե՞լ, մտահոգություն, բողոք, ընդվզում հայտնե՞լ է: Ոչ, երբեք: Ու ոչ թե այն պատճառով, որ ոչ ոք չի ուզում վատամարդ դուրս գալ, արդար դատավոր լինել, այլ որովհետեւ մենք ազգովին ապրում ենք ամենավտանգավոր մթնոլորտում, որն է անտարբերությունը: Թքած ամեն ինչի վրա, ինչ լինում է, թող լինի: Եթե անտարբեր չլինեինք ու ամեն ինչի վրա թքած չունենայինք, կինոգործիչների միությունը տասը տարուց ավելի նախագահի մեկ թեկնածու չէր ունենա: Դրական տեղաշարժ անելու, գործ անելու, առաջ մղվելու բնական ձգտումով գոնե մեկ-երկու թեկնածուներ էլ առաջադրված կլինեին, բայց բացի Ռուբեն Գեւորգյանցից, այլ թեկնածու չի եղել: Որովհետեւ ոչ ոք պատրաստ չէ ազնիվ մղումներով առաջնորդվել ու աշխատել հանուն հայ կինոյի զարգացման, առաջընթացի. թե՛ եղած, թե՛ լինելիք ցանկացած նախագահ արեւի տակ իր տեղն ապահովելուց բացի, ուրիշ մտահոգություն չունի: Նշանակում է՝ ստեղծագործող մարդուն բնորոշ բնական ձգտումն անգամ չի եղել: Սա իսկապես ողբերգական է, նույնքան ողբերգական, որքան այն, որ երեսուն տարվա ընթացքում մեր կինոռեժիսորներն այդպես էլ չկարողացան գոնե մի ֆիլմ նկարել, որը միջազգային շուկայում, կինոփառատոներում մրցունակ լիներ կամ գոնե հետաքրքրեր մեր հասարակության բարձր ճաշակ ունեցող, կինոարվեստը գնահատող հատվածին: Սերիալային, սիթքոմային էժանագին ժանրը դարձել է մարտնչող ու թելադրող: Իսկ այլընտրանքը չկա ու չկա:

Մինչեւ հիմա կինոյի մասին օրենք չունենք. սա էլ մյուս թերությունն է: Կինոռեժիսորներն ասում են. «Եթե օրենք լիներ, այն կհամակարգեր դաշտը, թացը չորից կտարբերակեր, կինոարտադրողն իր իրավունքներն ու պարտականությունները կիմանար, պրոդյուսերն՝ իր, կինոթատրոնն՝ իր, դիստրիբյուտորն էլ՝ իր: Տարերային, չհամակարգված, ցաքուցրիվ իրավիճակում փողեր են մսխվել, անարժաններն ու ապաշնորհներն առաջին գծում են կանգնել, լավ սցենարներն էլ մնացել են փոշոտ դարակներում: Հիմա կինոյի մարդիկ մեծ հույսեր են կապում, թե իրենց թեկնածուն հենց որ միության նախագահ դառնա, օրենքին էլ է տեր կանգնելու, կինոյի տանն էլ, կինո նկարողին էլ: Համենայն դեպս նրանց հույս է ներշնչում այն, որ տասնամյակներ շարունակ արմատացած անտարբերությունը ցրվել է. նախագահի մեկ թեկնածուի փոխարեն երեքն ունենք: Այդպես կարծելու հիմքն այն է, որ բացի Ռուբեն Գեւորգյանցի որդուց, միության նախագահ դառնալու համար պայքարում են նաեւ Գեւորգ Գեւորգյանն ու Հարություն Խաչատրյանը: Ի դեպ, Հարություն Խաչատրյանի շանսերն անհամեմատ մեծ են. համենայն դեպս, կինոգործիչների մեծ մասը հայտարարում է, թե նրան է ընտրելու: Կինոգործիչները ցուցադրական հավատարմություն են արտահայտում նրա նկատմամբ:

Ի՞նչ է եղել մինչեւ հիմա: Մինչեւ հիմա ով ինչպես կարողացել է, ում ձեռքն ինչքան հասել է, ապրել ու արել է: Շատերի ոսկե տարիներն են անպտուղ անցել, մյուսների պարագայում, ընդհակառակը, հնարավորությունները ներքին պոտենցիալից ու շնորհից առաջ են անցել. ֆիլմոգրաֆիայում պոչ-պոչի բռնած, հնչեղ վերնագրերով, բայց դատարկ բովանդակությամբ ֆիլմերի շարք ունեն. երբ խոսեցնում ես՝ Փելեշյանն ու Փարաջանովը շատ հին ու հնացած են, իսկ իրենք սյուր, աբստրակտ, ավանգարդ մտածողությամբ ռեժիսորներ են, որոնց հանճարեղ գլխում ամեն Աստծո օր մի նոր, ֆանտաստիկ ֆիլմի գաղափար է ծնվում: Միայն թե պետությունը տեր չի կանգնում իրենց նման բացառիկ հանճարներին, ու ընդամենը երկու տարին մեկ են պետական գանձարանի դռները բացվում: Եթե համակարգն ու օրենքն այնպիսին լինեին, որ ֆիլմի հեղինակները ստիպված լինեին վատ, անհաջողության դատապարտված էկրանային խոտանի բոլոր ծախսերը կոպեկ առ կոպեկ վերադարձնել պետությանը, եթե բացի ֆինանսական տույժից, նրանց «աշխատանքը» գրաքննական հոդվածներով, ելույթներով որակազրկվեր, շատերը չէին համարձակվի մտքի ծայրով անգամ անց կացնել ֆիլմ նկարելու գաղափարը: Եթե այդպես լիներ, տեղից վեր կացողը ռեժիսոր, օպերատոր, սցենարիստ չէր դառնա ու մեզ կրակը գցեր: Եթե այդպես լիներ, չէր լինի այնպես, որ կինոարտադրություն, կինորավեստ չունենք, բայց միջազգային կինոփառատոն ունենք, դրսից բերած ֆիլմերը նայում ենք ու ինքներս մեզ հարց տալիս՝ լավ, իսկ ինչո՞ւ մենք չենք կարողանում այսպիսի ֆիլմ նկարել:

Չկա Ա կարգի մի փառատոն, որտեղ Վրաստանը երեք-չորս ֆիլմով չներկայանա: Մերոնք ասում են. «Մեր օրենքի նախագիծը, որ օնլայն քննարկման է դրված, թերի է, պաշտպանում է ոչ թե հայրենի, այլ դրսից եկած կինոարտադրողի շահերը, նրա համար հրաշալի պայմաններ է ստեղծում: Այդ օրենքը չի խթանում ազգային կինոն: Եկեք վրացիների օրենքը թարգմանենք ու օգտագործենք. փորձված, իրեն արդարեցրած օրենք է»:

Մերոնք օրենքի հետ են հույսերը կապում, կամ՝ կինոմիության ընտրվելիք նախագահի: Մտածում են, թե միգուցե ֆիլմարտադրության գործընթացում հեղաշրջում լինի. կինոնախագծերն ընդունեն ու կարդան պրոֆեսիոնալները, գնահատվեն ու ֆինանսավորվեն ըստ արժանվույն, մտածում են՝ ի վերջո կհստակեցվի՞՝ կինոկենտրոնը ֆո՞նդ է, թե ֆիլմարտադրող: Մտածում են՝ կինոսցենարների քննարկումները բաց ու թափանցի՞կ կլինեն, թե՞ էլի ներքին կարգով, փայ մտնելով, ծանոթ-բարեկամին փող տալով, իսկ ոչ յուրայինին մերժելու արմատացած սկզբունքով կնկարահանվեն ֆիլմերը: Մտածում են՝ կարո՞ղ է այնպես լինել, որ կինոթատրոնները մեկ օրվա կյանք ունեցող ֆիլմերից բացի, պարտավորված լինեն ցուցադրել պետբյուջեով նկարահանված, հազար քննություն անցած ու որակ ապահոված ֆիլմեր, ու նույնն անեն նաեւ հեռուստաընկերությունները: Մտածում են...

Մենք էլ մտածելու շատ բան ունենք: Օրինակ՝ երկնքից երեք խնձորի փոխարեն երեք տաղանդավոր ռեժիսոր ընկներ, երեք տաղանդավոր սցենարիստ, երեք տաղանդավոր կինոօպերատոր: Այդ դեպքում միջակություններն ու ապաշնորհները կինոմիության ապագա նախագահի քաղցր ժպիտին արժանանալու համար հրապարակավ ելույթներով միավորներ հավաքելու փորձ չէին անի: Ու նրանք, ովքեր ոչ վաղ անցյալում պաստերի տակ քչփչում ու օձիք էին թափ տալիս:

AZG NEW MSHAKUIT.QXD 04/10/2017 20:57 Page 2



Արդի մեր արվեստի եւ գրականության տարտամ ու հեղհեղուկ վիճակը, մեր այսօրվա արվեստի բացարձակապես անդեմ լինելը, Արեւմուտքի զանազան քամիներին փարելու եւ պարզվելու ակնհայտ ու անժխտելի մղումը, հայրենական մշակույթի ու ազգային մտածողության ավանդույթից ամեն կերպ հեռանալու, վանվելու եւ արեւմտյան մշակույթի երեւույթները նմանակելու, դրանք կրկնելու, դրանց նմանվելու հիվանդագին ձգտումը ոչ միայն տխուր խոհեր, այլեւ լուրջ տագնապ են առաջացնում: Մեր թշվառ պոպրիշչինները այսօր էլ դեռ այն խելքին են, որ լուսինը, իրոք, Համբուրգում են սարքում:

Մեր այսօրվա մշակույթի բացարձակ անդիմությունը, ասելիքից զուրկ լինելը, պարզապես ասելիք չունենալը ինձ դրդեցին հիշելու տասնյակ տարիներ առաջ գրված շատ կարեւոր մի հոդված, որի հեղինակը արվեստաբան, մշակութաբան եւ փիլիսոփա Միխայիլ Լիֆշիցն է (1905-1983), որին համարում են «սովետական դարաշրջանի ամենախորհրդավոր, առեղծվածային մտածողներից մեկը» (Վալենտին Տոլստիխ): Չմանրամասնելով մշակութաբանի եւ փիլիսոփայի աշխարհայացքի եւ մտածողության ինքնօրինակ համակարգի առանձնահատկությունները, ասեմ, որ իր ուսումնասիրությունները եւ հոդվածները, որոնք հանգամանորեն վերլուծում եւ համոզիչ ներկայացնում են արեւմտյան արվեստի ու մշակույթի իսկական վիճակն ու ծանր ճգնաժամը, այսօր էլ շատ արդիական են եւ ստիպում են մտածել կարեւորագույն հարցերի շուրջ: «Ինչո՞ւ ես մոդեռնիստ չեմ» հոդվածը դրանցից մեկն է: Այն գրվել է 1963 թվականին եւ տպագրվել չեխական «Estetika» ամսագրում (1964, N 4) եւ ապա գերմանական «Forum» հանդեսում (1966, N 6): Սովետական «Литературная газета»-ն («Գրական թերթ») այն տպագրել է 1966 թվականին (8 հոկտեմբերի): Հետաքրքրական է, որ մարքսիստական գաղափարներ ունեցող փիլիսոփային («վերջին մարքսիստը», Բենեդիկտ Սարնով) սովետական երկրում վերաբերվում էին շատ վերապահորեն, բայց սա արդեն այլ խոսակցության նյութ է:

60-ական թվականների հայ կերպարվեստը, հայ նկարչությունը միանգամից ճանաչելի էր կայսրության բոլոր ցուցահանդեսներում: Այսօրվա հայ նկարչությունը կորցրել է իր ամենամեծ հատկանիշը, որ իր մեծագույն արժանիքն էր՝ խորապես հայկական աշխարհընկալումը եւ աշխարհը տեսնելու իր կերպը: Այսօրվա հայ գեղանկարչությունը անդեմ եւ ամորֆ, արհեստի վերածված նկարչություն է:

2007 թ., Հայաստանի տարվա առիթով, Փարիզում, Լյուքսեմբուրգյան պալատում, բացվել էր հայ կերպարվեստի ցուցահանդես: Ես ցուցահանդես այցելեցի մի քանի անգամ: Մի անգամ ցուցահանդես այցելեցի նշանավոր «Մոնդ» թերթի աշխատակիցների հետ: Նրանցից մեկը, արդի հայ նկարչությունը դիտելուց հետո, դարձավ ու ասաց. «Այս ի՞նչ եք բերել Փարիզ: Սրանցից այստեղ շատ կա եւ շատ ավելի բարձրորակ եւ ավելի բարձրաճաշակ: Այ դուք՝ հայերդ, գեղանկարչորեն ինչպե՞ս եք մտածում, որո՞նք են հայ նկարչության հիմնական այն սկզբունքներն ու դրսեւորումները, որոնք նրան տարբերում են ուրիշ ժողովուրդների նկարչությունից, ո՞րն է, ի վերջո, արդի զուտ հայկական նկարչությունը»:

Ցավալի էր, բայց ես պատասխան չունեի: Այսօր էլ չեմ կարող պատասխանել այդ հարցերին եւ չեմ կարծում, թե որեւէ մեկն ունի այս հարցերի պատասխանները:

Հետո այդ ցուցահանդեսը բերեցին Երեւան, արդի հայ նկարչության ցուցահանդեսը կազմակերպեցին Ազգային պատկերասրահի դահլիճներում եւ գրավոր ու բանավոր պարծանքով հայտարարում էին, թե արդի հայ նկարչությունը նվաճել է Փարիզը:

60-ական թվականների մեր գրականությունը ջանում էր վերագտնել կորսված ավանդները, գրականություն մուծել ազգային ինքնության գիտակցություն, վերադառնալ հայ բառի եւ հայոց լեզվի բանաստեղծական արվեստին, այսօրվա հայ գրականությունը հիմնականում նմանակում է եւ դրա համար էլ թվում է (ընկալվում է) իբրեւ օտար լեզվից կատարված վատ, երբեմն՝ ուղղակի անգրագետ, թարգմանություն: Դրանք պարզապես հայոց լեզվի բանաստեղծություն չեն:

Այսօրվա հայ գրականությունն ու արվեստը պարզապես ասելիք չունեն: Եվ այստեղից էլ՝ մեր մեծագույն ճգնաժամը:

Փոքրաթիվ մեր ժողովրդի այսօրվա մեծագույն խնդիրը, մեծագույն հոգսը համաշխարհային անկասելի ցնցումների, անկումների ու փլուզումների ահեղ շրջապտույտի մեջ մեր ազգային ինքնության, մեր էության պահպանումն է: Իսկ մեր էության, մեր ինքնության մեծագույն նշանը մեր լեզուն է (Վահան Տերյան), լեզուն մեծ իմաստով, մեր Լոգոսը, մեր մշակույթի, մեր արվեստի, մեր հոգեւոր հարստության եւ մեր հոգեւոր նկարագրի լեզուն: Մենք այսօր ոչ միայն պարտավոր ենք, այլեւ ստիպված ենք դողալու մեր ազգային մտածողության, ազգային մշակույթի անվթար ու անաղարտ պահպանության վրա:

Կարծում եմ, որ Միխայիլ Լիֆշիցի «Ինչո՞ւ ես մոդեռնիստ չեմ» հոդվածը, որ ընթերցողին է ներկայացվում որոշ կրճատումներով, լիովին արժանի է առանձնակի ուշադրության: Փայլուն տրամաբանությամբ եւ մտածողության հետաքրքրական ոճով եւ արտահայտիչ լեզվով շարադրված հոդվածում փիլիսոփան, ի վերջո, մերժում է ուժի եւ բռնության պաշտամունքը, կործանելու, խորտակելու, ավերելու բերկրանքը, դաժանության հանդեպ սերը, անմիտ, անիմաստ, անբովանդակ կյանքի ծարավը եւ զանգվածային, հոտային, բնազդային վերաբերմունքը կյանքի եւ իրականության հանդեպ, ինչը հանգեցնում է խոնարհ համակերպումի եւ կույր հնազանդության:

Առաջին հնարավորության դեպքում ընթերցողին կներկայացնեմ փիլիսոփայի «Պահածոյի տուփի ֆենոմենոլոգիան» (1966) ուշագրավ հոդվածը նույնպես:

Երվանդ ՏԵՐ-ԽԱՉԱՏՐՅԱՆ

## Միխայիլ ԼԻՖՇԻՑ

# ԻՆՉՈ՞Ւ ԵՍ

Գրելով Բերտրան Ռասելի ոճով այս վերնագիրը, ես պետք է գտնեմ նույնքան կարճառոտ պատասխանի բանաձեւումը: Չի խանգարի, եթե իմ պատասխանը ունենա հարանունորեն սուր բնույթ: Հարկավոր է հետեւել ժանրի օրենքներին:

Այսպես, ուրեմն, ինչո՞ւ ես մոդեռնիստ չեմ, ինչո՞ւ արվեստում եւ փիլիսոփայության մեջ նման գաղափարների ամեն մի երանգը իմ մեջ ներքին ընդվզում է առաջացնում:

Որովհետեւ իմ հայացքով, իմ ըմբռնումով մոդեռնիզմը կապված է մեր ժամանակի ամենամռայլ հոգեբանական փաստերի հետ: Դրանց թվում են ուժի պաշտամունքը, ոչնչացնելու բերկրանքը, դաժանության սերը, անմիտ կյանքի ծարավը, կույր համակերպումն ու հնազանդությունը:

Միգուցե ես քսաներորդ դարի մահացու մեղքերի այս ցուցակում կարեւոր ինչ-որ բան մոռացա, բաց թողեցի, բայց իմ պատասխանն առանց այն էլ երկար էր հարցից: Ինձ թվում է, որ մոդեռնիզմը մեծագույն դավաճանությունն է հոգեւոր ասպարեզի ծառայողների, մշակույթի մանդարինների, ֆրանսիական



գրողի հայտնի արտահայտությամբ՝ la tradisor de clercs: Պրոֆեսորների ու գրականության մարդկանց քաղքենի հարմարումը իմպերիալիստական պետությունների հետադիմական քաղաքականությանը ընդամենը մանրուք է՝ համեմատած նոր բարբարոսականության այն ավետարանականության հետ, որ բովանդակում են մոդեռնիստների ամենաանկեղծ եւ ամենաանմեղ որոնումները: Քանզի եթե դրանցից առաջինը այսպես ասած պաշտոնական եկեղեցին է, որ հիմնված է ավանդական ծեսերի ու ծիսակատարությունների պահպանության հիման վրա, ապա երկրորդը հասարակական շարժումն է, կամավոր խավարամտությունը, ժամանակակից միստիկան: Երկու կարծիք չի կարող լինել, թե դրանցից ո՞րն է ավելի վտանգավոր մարդկանց համար:

Հեղինակը, որ հանդգնություն ունի այդ նյութի մասին գրելու այսպիսի շիտակությամբ, պետք է պատրաստ լինի կտրուկ առարկությունների:

- Ի՞նչ: Դուք նկարել եք գերմանացի գրոհայինի կամ իտալացի սեւշապիկավորի դիմանկարը եւ ուզում եք մեզ հավատացնե՞լ, որ դա մերձավորագույն ազգականն է հրայրքոտ Մատիսի, նուրբ Մոդիլիանիի կամ թե մռայլ Պիկասսոյի:

- Ոչ, իհարկե ոչ: Ես ոչինչ չունեմ այս անձանց բարոյական հարգի դեմ: Եվ այնուամենայնիվ, մեզանից մի՛ խլեք պատմական երեւույթների մասին դատելու հնարավորությունը, անկախ այս կամ այն գործչի անձի գնահատությունից:

- Այնուամենայնիվ, Հիտլերը հետապնդում էր այսպես կոչված ժամանակակից արվեստը, այն համարելով վարակ ու այլասերում: Մի՞թե ձեզ հայտնի չէ, որ ավանգարդիստական նուրբ գեղագիտական մշակույթի կրողները նացիստներից փախան Արեւմուտք:

- Ինձ, իհարկե, դա հայտնի է: Եվ այնուամենայնիվ, թույլ տվեք ձեր հուզումը մարել նույն կյանքից առնված առակավոր մի փոքրիկ պատմությամբ: 1932 թվականին Անհալթի նացիոնալ-սոցիալիստական կառավարությունը Դեսաուում փակեց Բաուհաուսը, արվեստում «նոր ոգու» հայտնի տնկարանը: Այդ քայլը երրորդ կայսրության առաջիկա քաղաքականության բավական վառ նախանշանն էր: Եվ այդ ժամանակ Փարիզի «Cahiers d'art» ամսագիրը, որ հրատարակում էր կուբիզմի եւ հետագա հոսանքների ազդեցիկ ջատագով Կրիստիան Զեւրոսը, Գերմանիայից եկած տխուր նորությանը պատասխանեց հետեւյալ դիտարկումով (NN 6-7). «Նացիոնալ-սոցիալիստական կուսակցությունը, մեզ անհասկանալի պատճառներով, վճռական թշնամություն է դրսեւորում իսկական ժամանակակից արվեստի հանդեպ: Այսպիսի դիրքորոշումը թվում է առավել քան հարանունային, քանի որ այդ կուսակցությունը ուզում է ամենից առաջ դեպի իրեն գրավել երիտասարդությանը: Թույլատրելի է խանդավառությամբ, տարերային ուժով, ստեղծագործական կարողություններով համակել պատանիներին, որպեսզի հետո նորից նետես հնացած ավանդույթների գիրկը»:

Ահ, դու չե՞ս հասկանում, ստոր արարած: Դե, Ֆրից, Հայնց, բացատրեք դրան:

Եվ նրանք բացատրում էին:

Ահա ձեզ եվրոպական բարքերի իրական պատկերը հիտլերյան վալպուրգյան գիշերվա նախօրեին: Ի՜նչ ստորաքարշություն է հոտում այդ գրությունից եւ ի՜նչ ճիշտ է այն ցույց տալիս ծնկածալ խոնարհումը բարբարոսների երեւութական պատանեկության առջեւ, ինչը հասցրեց երեսունական թվականների հոգեկան-հոգեւոր Մյունխենին: Իրենց հոգու խորքում «իսկական ժամանակակից արվեստի» կողմնակիցները բռնված էին տարերայնության, տարերային ուժի նույն պաշտամունքով, եւ նույն քամին էլ նրան տարավ հեռու «տասնիններորդ դարի լիբերալ-մարքսիստական» ափերից:

Ես հասկանում եմ, որ փարիզյան ամսագրի հրատարակիչները նուրբ մարդիկ են, հեռու էժանագին դեմագոգիայից, որ կարիք ունի տնայնագործական Heimatkunst-ի դասերին: Միգուցե նրանք աշխարհի երիտասարդությունը պատկերացնում էին բոլորովին այլ կերպ, ազատ՝ կանոններից ու նորմերից: Եվ, հասկանալի է, նրանք ամենեւին չէին սպասում այնպիսի շրջադարձին իշխանության եկած գրական բոհեմի մանր դեւերի եւ բուլվարային գրողների, որոնք քսաներորդ դարի միթոսը պատմում էին Նիցշեի եւ Շպենգլերի լեզվով, խառնելով դրան կատաղած շան լորձունքը:

Ինքը՝ Նիցշեն, հակակրանք էր տածում գարեջրային քաղաքական գործիչների պլեբեյական անճաշակության հանդեպ, եւ նա, անկասկած, կհրաժարվեր իր հոգեւոր զավակներից, իսկ Շպենգլերը իր կյանքի ընթացքում հասցրեց հրաժարվել նրանցից առավել շքեղ բուրժուական կեսարականության տեսանկյունից... Բայց իրերի տրամաբանությունը գործում է ինքնին: Եվ գոյություն ունի դաժան վրիժառություն, ինչը Մարքսն ու Էնգելսը, Հեգելի ոճով, անվանել են պատմության հեգնանք:

Դուք տարերային ուժ էիք ուզում, դուք կշտացել էիք քաղաքակրթությունից, դուք ատում էիք զանգվածներին մշակույթի տարրական հիմքերին ձգտելու համար, դուք մեծամասնությունից պահանջում էիք կույր ենթարկություն գերմարդու իռացիոնալ կանչին: Դե ինչ, համեցեք խնդրեմ, լիովին ստացեք այն, ինչ ձեզ հասնում է:

Ահա եւս մի տարօրինակ պատմություն: 1940 թվականին խոր ծերության հասած Անրի Բերգսոնը, հիվանդապահուհու ուղեկցությամբ, ուղեւորվում է Փարիզի գերմանական պարետատուն՝ նշագրանցվելու: Ասում են, որ դա տնից դուրս գալու իր վերջին ելքն էր. համաշխարհային ճանաչում ունեցող մտածողը վախճանվում է՝ չսպասելով իր Օսվենցիմին: Ո՞վ կարող է ասել, որ այդ մարդը տաղանդավոր չէր եւ յուրովի՝ ազնիվ: Վերջինն ապացուցված է, ի միջի այլոց, այն բանով, որ նա ցանկացավ կիսել իր ցեղակիցների ճակատագիրը, թեեւ վաղուց հեռացել էր հրեականությունից:

Եվ այնուամենայնիվ, գոյություն ունի մի անհերքելի փաստ: Անրի Բերգսոնը առաջատարն էր փիլիսոփայական նոր ուղղության, որը դարասկզբին իրագործեց արժեքների՝ հեռուն տանող վերագնահատություն: Նա բոլորից շուտ «շախ» հայտարարեց արքային. դրեց բանականության՝ իր ժառանգական իրավունքներից հրաժարվելու հարցը: Այդ ժամանակից էլ ամեն ինչ փոխվեց գաղափարների աշխարհում: Բեմառաջ ելան տարերային ուժի եւ կենսական ակտիվության բարոնները: Տառապանքի գինը ընկավ, արժեզրկվեց, դաժանությունը դարձավ բարեծնության նշան: Բերգսոնի եւ Ջեմսի անթիվ երկրպագուները առաջին համաշխարհային պատերազմից առաջ արդեն հասունացել էին բռնություն

AZG NEW MSHAKUIT.QXD 04/10/2017 20:57 Page 3



# ՄՈԴԵՌՆԻՍՏ ՉԵՄ

գաղափարների համար: Առջեւում արդեն ուրիշ կերպարանքներ էին երեւում: Մոնտերլանի վեպերից մեկի («Le Songe», 1922, «Երազ») հերոսը «խելքի ու սրտի բացառման» որոնումներում կրակում է առաջին իսկ պատահած գերմանացու դեմքին, որը ձեռքերը վեր է բարձրացնում:

Ինքնին հասկանալի է, որ այս ամենը զուտ ֆրանսիական հայտնագործություն չէր: Ընդհակառակը, Հռենոսի այն ափին ավելի մռայլ զարգացում էր տեղի ունենում: Ոչ ոքի մտքով չէր անցնում՝ դեկադենտ մտածողների ողորմելի «կամք առ իշխանություն»-ը կարող է հասցնել այնպիսի իրականության, ինչպիսին Երրորդ կայսրության ցեղային (ռասայական) օրենքներն էին: Ի՞նչ դիվականություն խառնվեց այդ խաղին: Մեր գործը չէ. այն էլ բավական է, որ դա տեղի ունեցավ:

Իհարկե, փիլիսոփաները չեն ստեղծում իրադարձությունները, այլ՝ իրադարձություններն են փիլիսոփաներ ստեղծում, այլապես սրանց մեղքը չափից դուրս մեծ կլիներ: Եվ այնուամենայնիվ մեղքի բաժին կա: Հին հույները ողբերգական կուրացումը անվանում էին հատուկ աստվածուհու՝ սարսափելի Ատեի անունով: Երբ փիլիսոփայությունը իր սկզբունքն է դարձնում կուրությունը եւ ոչ թե տեսողությունը, երբ նա դաշինք է փնտրում գիշերվա մութ ուժերի հետ, նա իրավունք չունի աշխարհից գանգատվելու: Դուք ընդունել եք խնդրի պայմանները. լուծումը արդեն ձեզանից կախված չէ: Ահա թե ինչու Անրի Բերգսոնի վերջին օրերը եղան պատմության դաժան կատակ:

Կարելի է բերել ուրիշ շատ օրինակներ, բայց մեր պատմական սյուժեին առավել մոտ է գերմանացի մտածող Թեոդոր Լեսսինգի ճակատագիրը, որին սպանեցին գերմանական նացիստները 1933 թվականի օգոստոսին: Իր անձնական հայացքներով նա, հասկանալի է, հեռու էր նացիզմից եւ նրանց հետ ոչինչ ընդհանուր չէր կարող ունենալ: Եվ այնուամենայնիվ Լեսսինգի պատմության փիլիսոփայությունը, փաստերի եւ ուժերի անմիտ հոսքի նրա գաղափարը, նրա բանավեճը առարկայական (օբյեկտիվ) ճշմարտության դեմ եւ բացահայտ միթոսաստեղծման կոչը - այս բոլորը յուրովի տեղ գտան հիտլերյան Գերմանիայի նախապատմության մեջ: Դու դա էիր ուզում, դժբախտ Ժորժ Դանդեն:

Կարող են ասել, որ Թեոդոր Լեսսինգի ուսմունքի եւ մարդասպանի գնդակի միջեւ անմիջական կապ չկա: Բնականաբար, չկա: Հիմա ոչ ոք չի հավատում իմաստուն նախախնամությանը, որ մեզ տանում է դեպի բարձրագույն նպատակ պարգեւների եւ պատիժների միջոցով: Դրանք մանկական հեքիաթներ են: Փաստերի աշխարհում ամեն ինչ ընթանում է բնական-պատմական անհրաժեշտության օրենքներով: Բայց կրոնական երեւակայությունը այնուամենայնիվ ունի իր պատճառները. այն իրական հարաբերությունների վատ պատճենումն է: Նախախնամություն չկա, բայց իրերի բնականոն կապը, որ զերծ չէ բարոյական իմաստից, կա: Եվ երբ այն անակնկալ ձեւով արտահայտվում է ժողովուրդների եւ առանձին անձանց ճակատագրի մեջ, մենք ականատեսն ենք դառնում ողբերգության կամ, առավել հաճախ, ողբերգա-կատակերգության ծնունդին:

Ինձ կասեն, որ մեծ տարբերություն կա ինտելեկտի անսահման իշխանության դեմ առանձնասենյակային գիտնականի նուրբ, ինչ-որ տեղ արդարացվող բանավեճի եւ նացիստական գրող Յոստի դրամայի հերոս Շլագետերի հայտնի դարձվածի միջեւ. «Երբ ես լսում եմ «մշակույթ» բառը, ես հանում եմ իմ ատրճանակի արգելափակիչը»: Իսկապես, տարբերություն կա: Ամեն ինչ շատ բարդ է այս աշխարհում, աշխարհներից ամենաբարդում: Արվեստի եւ փիլիսոփայության մեջ «նոր ոգու» (esprit nouvaeu) ստեղծողների մի մասը բացահայտ համակրում էր ֆաշիզմին նրա բոլոր դրսեւորումներում. անունները բավական հայտնի են, սկսած Մարինետտիից: Մյուս մասը ճակատագրի բերումով իր վրա զգաց ֆաշիզմի թաթի ծանրությունը: Մենք գիտենք նաեւ, որ հետ մնացած ժողովուրդների ազգային վերելքը երբեմն համադրվում է գեղարվեստական նոր հոսանքների «գրոհի եւ փոթորկի» հետ: Անկարելի է ժխտել այդքան ակնհայտ փաստերը: Մոդեռնիստների մեջ լինում են ներքին անսովոր մաքրության մարդիկ՝ տառապյալներ, նույնիսկ՝ հերոսներ: Մի խոսքով, լինում են լավ մոդեռնիստներ, բայց չի լինում լավ մոդեռնիզմ:

Դրա համար մի շտապեք ոչնչացնելու Վերածնության եւ տասնիններորդ դարի ազատ մտքի ժառանգությունը: Մի կրկնեք ժամանակակից քաղքենիների ամբոխի հետ, թե դրանք հազարամյակների մթին գիշերվա մեջ ճահճային կրակներ են եւ ոչ թե փայլակներ, որոնք լուսավորում են ապագայի ճանապարհը: Մի՛ շրջեք ձեր հայացքը դեպի նոր միջնադարը, նման հետընթացի մարգարեներին, կամ՝ մի՛ բողոքեք, եթե ձեզ հարկադրեն հավատալ անհեթեթությանը եւ մատնացույց անեն, թե ինչը պետք է համարել գեղեցիկ, մահակից ավելի վատ ինչ-որ բանից խուսափելու համար: Չէ՞ որ հենց դա է հոգեւոր պարզունակության աշխարհը:

Կարող են առարկել, թե իմ օրինակները վերաբերում են տեսություն ստեղծող վարպետներին, իսկ այդ մարդիկ այսօր ավելի պակաս հարգելի են, քան արվեստագետները: Դե ինչ, դառնանք արվեստագետներին:

Պիկասսոն դժգոհ էր այն բանից, որ հեղափոխական երկրներում մեծ նշանակություն են տալիս թանգարաններին եւ ընդհանրապես լայն զանգվածներին դասական արվեստի ոգով լուսավորելուն: Նա 1935 թվականին ասել է Կրիստիան Զեւրոսին. «Մեր թանգարանները համատարած կեղծիք են, մարդիկ, որոնք արվեստով են զբաղվում, մեծամասնությամբ խաբեբաներ են: Չեմ հասկանում, ինչո՞ւ հեղափոխական երկրներում արվեստի շուրջ ավելի շատ նախապաշարումներ կան, քան անկյալ երկրներում: Մենք թանգարաններում կախված նկարներին ենք ուղղել մեր ամբողջ հիմարությունը, մեր բոլոր սխալները, մեր ամբողջ անկարողությունը: Մենք դրանք դարձրել ենք խղճալի ու ծիծաղելի բան: Մենք կառչում ենք չեղած բաներից, փոխանակ զգալու ներքին կյանքը նրանց, որոնք ստեղծել են այդ նկարները: Անհրաժեշտ է համատարած բռնապետություն... Արվեստագետների բռնապետություն... Մեկ-միակ արվեստագետի բռնապետություն... Որպեսզի ոչնչացնենք նրանց, որոնք խաբել են մեզ, ոչնչացնենք խեղկատակությունը, ոչնչացնենք խաբեության առարկաները, ոչնչացնենք սովորույթները, ոչնչացնենք հմայվածությունը, սքանչանքը, ոչնչացնենք պատմությունը եւ մնացյալ ողջ անպետքության շեղջը: Բայց առողջ մտածողությունը միշտ հաղթում է: Եվ ամենից առաջ պետք է հեղափոխություն անել դրա դեմ: Իսկական բռնապետին կհաղթի առողջ մտքի բռնապետությունը... Հնարավոր է, ոչ միշտ»:

Տխուր է այս տողերը կարդալը, եթե հիշենք, որ 1935 թվականին լիակատար բռնապետը արդեն հայտնվել էր: Դա նկարիչ-բռնապետ էր կամ թե՝ ձախողված նկարիչ, ի վերջո, մեկ է: Ես նկատի ունեմ Հիտլերին, չէ՞ որ նրա կենսագրությունը այդ է: Չգիտեմ ինչու, բոլոր բռնապետերը, Ներոնից սկսած, երեւակայում են, թե իրենք շատ ուժեղ են արվեստում:

Ինձ կասեն՝ Պիկասսոն այլ բան էր ուզում: Հասկանալի է, ո՞վ է դրան կասկածում: Վստահ եղեք, որ ես գնահատում եմ Պիկասսոյի քաղաքական հայացքները եւ իր գաղափարների բարեշնորհությունը: Ինչ վերաբերում է աշխարհայացքին, ապա նա, ծայրահեղ դեպքում, զգուշավոր չէ իր մտքերում:

Ամեն մի դիմումը ուժին, որ ընդունակ է բութ զանգվածին երկաթե մահակով նոր գեղեցկության թագավորությունը մղելու, ճշմարիտ, իր սեփական օգտի համար, վտանգավոր բան է: Լուսավորյալ բռնատիրություն չի լինում, բռնատիրությունը միշտ խավարամիտ է: Սրանից բացի, փայտը երկու ծայր ունի. դա էլ չպետք է մոռանալ: Եթե «հեղափոխական երկիր» ասելով Պիկասսոն նկատի ուներ Խորհրդային Միությունը, ապա, փառք աստծո, մեր երկրում արվեստի մարզում «ամբողջատիրական բռնապետության» երազանքը չի ընդունվել: Քանի որ այդօրինակ մի քանի երեւույթներ հայտնի են անցյալում, ասեմ, որ դրանք կապ չունեն սոցիալիստական կարգի սկզբունքների հետ եւ իշխանության չարաշահության հետեւանք են, ինչպես որ մյուս անօրինականությունները:

Իմ պատանեկության տարիներին մոդեռնիստները շատ ուժեղ էին հեղափոխական Ռուսաստանում, եւ նրանք հաճախ էին մահակը գործադրում, չմտածելով, թե դա իրենց համար ինչ կդառնա ապագայում: Ժողովրդական կոմիսար Լունաչարսկին դժվարությամբ էր զսպում ծայրահեղ ձախակողմյանների ճնշումն ու գրոհը, հետեւելով Լենինի ուղղակի պահանջներին, եւ Լենինը դեռ հանդիմանում էր նրան՝ բավականաչափ կոշտություն չունենալու համար: Իլյա Էրենբուրգը ինչ-որ տարաձայնություններ է ունենում Մեյերխոլդի՝ հայտնի ձախ ռեժիսորի հետ, որն հեղափոխության սկզբում Լուսավորության ժողովրդական կոմիսարիատի թատերական բաժնի գլուխն էր: Էրենբուրգի գեղագիտական հայացքներից դժգոհ Մեյերխոլդը, առանց երկար-բարակ մտածելու, կանչում է պարետին եւ նրան հրամայում է ձերբակալել իր զրուցակցին: Պարետը հրաժարվում է, իրավունք չունենալով մարդ ձերբակալելու: Իլյա Էրենբուրգը իր հուշերում պատմում է այս մասին իբրեւ անուշ կատակ, պարուրված անցյալի մշուշով, իսկ ինձ համար դա ահալի էր ու սահմռկեցուցիչ: Ես Մեյերխոլդին հիշում եմ ուրիշ, առավել ուշ մի ժամանակ, երբ սուրը արդեն կախված էր իր գլխին - խորը, անկեղծորեն, ամբողջ սրտով ափսոս մարդուն եւ արվեստագետին: Որքան ողբերգություններ եւ որքան դառն իմաստ կա դրանց մեջ: «Տառապանքից ենք սովորում». խորհրդածում է երգչախումբը Էսքիլոսի «Օրեստես»-ում:

*Շարունակությունը՝ հաջորդիվ*

ԿԱՐՄԵՆ ԱՀԱՐՈՆՅԱՆ

# ԺԻՐԱՅՐ ՓԱՓԱԶՅԱՆ
## Վարպետության դասեր

***Սեպտեմբերի 23-ին Երեւանի Հենրիկ Մալյանի անվան կինոդերասանի թատրոնում տեղի ունեցավ հանդիպում ֆրանսահայ սիրված դերասան, բեմադրիչ, թատերագետ Ժիրայր Փափազյանի հետ: Հանդիպմանը ներկա էին Երեւանի Թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի, ինչպես նաեւ Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի ռեժիսուրայի ֆակուլտետի ուսանողներ, թատրոնի աշխատակիցներ, հյուրեր:***



Հանդիպման առաջին մասում Ժիրայր Փափազյանը պատմեց իր անցած դերասանական ուղու մասին՝ սկսած բեմական առաջին փորձերից՝ Կահիրեի հայկական սիրողական թատրոնում, մինչեւ մեծ բեմեր՝ Փարիզի Իրինա Բրուկի թատրոն, որտեղ նա խաղում եւ միաժամանակ ներկայացումներ է բեմադրում 2003 թվականից: Դեռեւս մանկուց Ժիրայր Փափազյանը հաճախում էր Կահիրեի հայկական գաղութի սիրողական թատրոն, որտեղ նրա մայրը դերասանուհի էր: 14 տարեկանից պատանի Ժիրայրը հայերեն թարգմանում էր մանրապատումներ եւ խաղում իր հասակակիցների համար: Նա սիրով ու հպարտությամբ է հիշում այն տարիները, երբ մեծ խանդավառությամբ եկավ հայրենիք եւ իր դերասանական կրթությունը ստացավ Երեւանի՝ այն ժամանակվա Գեղարվեստաթատերական ինստիտուտի թատերական բաժնում՝ անվանի բեմադրիչ Մարատ Մարինոսյանի կուրսում:

Հանդիպման երկրորդ մասում Ժիրայր Փափազյանը վարպետության դասեր տվեց ապագա դերասաններին: Բեմի վրա ճիշտ շարժվելու, բեմական տարածությունը եւ խաղընկերներին զգալու վարպետությանը տիրապետելու համար փորձված դերասանը ուսանողներին սովորեցրեց վարժանքներ կատարել երկար փայտիկների օգնությամբ: Ուսանողները լսեցին նաեւ վարպետի բեմական խոսքը: Կենդանի խոսքի մեջ վարպետանալու, խոսքի արվեստին տիրապետելու համար Ժիրայր Փափազյանը ուսանողներին խորհուրդ տվեց խոսել պարզ ու անմիջական: Նա կարդաց հատվածներ հայ դասական արձակից եւ չափածոյից՝ ուսանողներին ուղղորդելով հնարավորինս բնականին մոտ շեշտադրությամբ եւ հնչերանգով խոսել, պատմել դերը եւ ոչ թե վերամբարձ տոնով ասմունքել: Բեմադրիչը պատասխանեց նաեւ ուսանողների հարցերին:

Ժիրայր Փափազյանը այս տարի երկար ժամանակով է վերադարձել Հայաստան եւ համագործակցում է հայկական թատրոնների եւ հատկապես Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ակադեմիական թատրոնի հետ, որտեղ Ժիրայր Փափազյանին վստահվել է գեղարվեստական ղեկավար Կոնստանտին Օրբելյանի՝ բեմադրական հարցերով խորհրդատուի առաքելությունը:

Ժիրայր Փափազյանի բեմադրությամբ եւ բնագրի նոր մեկնաբանությամբ այս տարվա հոկտեմբերի 10-ին Հենրիկ Մալյանի անվան կինոդերասանի թատրոնում տեղի կունենա հայ դասական դրամատուրգ Հակոբ Պարոնյանի «Ատամնաբույժն արեւելյան» կատակերգության առաջնախաղը: Դերերում՝ Սամվել Թոփալյան, Վահագն Գասպարյան, Աստղիկ Աբաջյան, Ալլա Սահակյան, Գեորգի Հովակիմյան, Լեւոն Ղազարյան, Վալենտինա Զուլհակյան, Աննա Զաքարյան, Պողոս Գույումջյան: Հաջողություն մաղթենք բեմադրիչին եւ դերասանական խմբին:

# Բեթհովենը հայ պոեզիայում

Արծվի ԲԱԽՉԻՆՅԱՆ

Այս տարի լրանում է գերմանացի երաժշտական հանճարներից Լյուդվիգ վան Բեթհովենի մահվան 190-ամյակը: Այս առթիվ ավելորդ չենք համարում ի մի բերել մեր պրպտումների ժամանակ ի հայտ բերած քիչ ծանոթ փաստեր մի ուշագրավ իրողության՝ Բեթհովենով հայ բանաստեղծների ներշնչումների վերաբերյալ՝ ամբողջությամբ հղելով ժամանակի մամուլում մնացած այդ գործերից երկուսը:

Իսկ առհասարակ, «Բեթհովենը հայ իրականության մեջ» թեման կարոտ է ուսումնասիրության: Երբվանի՞ց են հայ ժողովրդի զավակները ծանոթացել հանճարեղ կոմպոզիտորի երկերին: Մի կողմ թողնելով այն փաստը, որ թիֆլիսահայ (հետագայում՝ Հայաստանում հաստատված) ականավոր երաժշտագետ Վասիլի Կորգանովը (Ղորղանյան) առաջինն է ռուսերենով մենագրություն հրատարակել Բեթհովենի մասին, հիշենք, որ 1919-ին կովկասահայ թերթերը գրել են չորսամյա հայ դաշնակահար Ռոբերտ Անդրեասյանի մասին: Չնայած իր փոքր տարիքին՝ այդ կրակոտ եւ հարցասեր մանուկը բավական անուն է հանել՝ վաղ հասակում արդեն ճանաչելով Բեթհովենին, Լիստին եւ երաժշտության մյուս դեմքերին (1): Ռոբերտ Անդրեասյանը (1912-1971) հետագայում դարձել է ճանաչված երգահան, դաշնակահար եւ մանկավարժ: Իսկ 1920-ին գրվել է, որ Երեւանում նախատեսվել է Թիֆլիսի կոնսերվատորիայի պրոֆեսոր Ս. Մ. Չեմոդանովայի համերգը, որտեղ, ի թիվս այլ երկերի, պետք է հնչեր նաեւ Բեթհովենի «Լուսնի սոնատը» (2): 1927 թվականին Բեթհովենի մահվան 100-ամյակի առթիվ համերգներ են կազմակերպվել Բուլղարիայի հայ համայնքում, Ֆիլիպեում (3) եւ Վառնայում, որտեղ Ազգային Միության մասնաճյուղի մշակութային հանձնախմբի կազմակերպած համերգին Բեթհովենի մասին խոսք է ասել Էսթեր Ամիրխանյանը (4): Հիրավի, բացառիկ երեւույթ է՝ գերմանական դասական կոմպոզիտորի ոգեկոչումը Ցեղասպանության արհավիրքները նոր կրած եւ առօրյա հոգսերով ապրող հայ գաղթականության շրջանում...

Իսկ հայ բանաստեղծներից առաջինը, որքանով կարողացել ենք պարզել, Բեթհովենին անդրադարձել է մեծանուն **Վահան Թեքեյանը**, որը բանաստեղծության եւ բարձր արվեստի համար բնավ ոչ նպաստավոր մի ժամանակաշրջանում՝ 1919 թվականին, պոլսահայ «Ճակատամարտ» օրաթերթում, հրատարակել է Բեթհովենի մենուետից ներշնչված «Պէթովէնի մընիւէն» բանաստեղծությունը՝ նվիրված իր բարեկամ, գրող-խմբագիր Շավարշ Միսաքյանին, որը բերում ենք ստորեւ.

*Գարնան աղուոր գիշեր է,*
*Հովն ըղձանքներ կը բերէ:*
*Ճըկուն մարմնով՝ անըրջային, յուլաբար*
*Կը տատանի փետուրի պէս հողմավար,*
*Տեսիլքներու պէս ըզգըլխիչ՝ տարփագին*
*Գգուանքի պէս, ու հոգեզմայլ պատանին*
*Հազիւ դըպած անոր քնքոյշ մասներուն*
*Ձայն կը վառէ երանութեամբ դողդոջուն:*
*Այլ ոլորկուած տախտակին*
*Վըրայ, ուր մեղք կը սահին:*
*Քայլերն անոր՝ փափկիկ թեւեր տատրակի,*
*Արփինըլուայ առարկայ մը կը գլորի.*
*Որ մերթ կու գայ պաշտամունքով*
*տալ համբոյր,*
*Սընդուսէ նուրբ կօշիկներուն ձիւնաթոյր,*
*Մերթ կը հեծէ նուագին մօտ հեշտալէս...*
*Փոքրիկ ոտներն զայն կը ճզմեն առաթուր*
*Մահն հեռացնել զայն կը ջանայ... այլ*
*ի զուր...*
*Գարնան աղուոր գիշեր է*
*Հովն հեշտանքներ կը բերէ:*
*Կը փայփայեն դալուկ շողերը լուսնին*
*Բլրակին վրայ թարմ հողակոյս մ առանձին,*
*Ու սոխակն ալ մացառներուն մէջ թաքուն*
*Կու լայ տանջանքն ամէն անբաղդ*
*սէրերուն:*
*Գարնան աղուոր գիշեր է (5):*

Բեթհովենն, ըստ երեւույթին, եղել է իր պոեզիայում Միքելանջելոյին, Շեքսպիրին, Վեռլենին հիշող Թեքեյանի նախասիրած կոմպոզիտորը: Դրա արտահայտությունն է նաեւ «Պէթովընի սոնաթին վրայ» երեք մասից բաղկացած բանաստեղծական գլուխգործոցը, որն ընթերցողը կարող է գտնել (ի տարբերություն նախորդի) 2012-ին Երեւանում հրատարակված Վահան Թեքեյանի «Բանաստեղծութիւններու հատընտիր» ժողովածուում:

Նույն «Ճակատամարտ» թերթում 1924 թվականին «Պէթովէն» բանաստեղծությամբ հանդես է եկել **Վ. Գեւորգյանը** Բուխարեստից: Խոսքը հավանաբար Վարդան Գեւորգյանի (1892-1979) մասին է: Այն եւս ներկայացնենք ամբողջությամբ.

*Ծաղիկներն ալ կոյսերու պէս ըզգալով,*
*Կը սարսռան ցօղունին վրայ սիրախռով.*
*Բարտիներէն լուսնին շողերը մաղուած*
*Կը փայփայեն գուրգուրանքով՝ սգազգեաց*
*Դամբանն անշուք՝ սիրոյ զոհուած քերթողին.*
*Թաւ ճիւղերուն մէջէն սոխակ մ առանձին*
*Մահանուագներ կ երգէ տրտում, դալկահեր*
*Ուռիներէն կը կաթկըթին արցունքներ...*
*Սըրահին մէջ լուսողող*
*Թեթեւ նուագ մը գգուող*
*Թունդ կը հանէ հոգիները երազուն,*
*Ճառագայթները բազմաճրագ ջահերուն*
*Շողակներու բոցերուն հետ կը կռուին.*
*Շուշաններն ալ անօթին մէջ թանկագին*
*Կը դալկանան բուրումներով նըւաղուն,*
*Կոչնականներն անշարժ յենած սիւներուն*
*Կը դիտեն զոյգ մ որ կը պարէ հմայուած*
*Դաշնակութեամբը ջութակին սիրարծած:*
*Մարգարտափիւռ ու ճերմակ*
*Շըղարշներու մէջ համակ:*
*Աղջիկն աղուոր, ճակտին վարսերը ոսկի*
*Ուրկից թերթեր կը թափթըփին յասմիկի*
*Անմահութիւնն իր հոգւոյն մէջ*
*կը թաւալի,*
*Աստղերն ինչպէս Արարչի մը ոտքերուն տակ,*
*Իր սիրտն աղբիւր երգի, սիրոյ*
*եւ տարփանքի,*
*Այլ ճակատագիրն է դժնդակ:*

*Խաւարն յանկարծ կատարի պէս*
*կ՚իջնէ վրան*
*Գանկին. ու լուռ՝ կը մթագնի երազն*
*հոգւոյն,*
*Կոհակն իղձի կ ըլլայ երգ մը*
*թաղմանական,*
*Լճակին մէջ սիրոյ տմոյն...*

*Եւ հանճարը հաւալուսին զերդ՝*
*կ՚արբենայ*
*Իր հոգիին խոնջ երազով եւ արիւնով*
*Սրտի՛ն, սրտի՛ն, որ խորհուրդի ծովին վրայ*
*Կ ըլլայ արեւ մը լուսածոր...*



***Բեթհովենի գծանկարը՝ Սուրեն Գալստյանի***

*Կ ըլլայ տեսիլք, կ ըլլայ ճախրանք*
*երկնահզօր*
*Մտածումին եւ իր երգին աստուածային,*
*Կաթիլ-կաթիլ կը հալի սիրտը մինչեւ որ*
*Ցուրտ ծոցին մէջ մութ դամբանին (6)...*

Իսկ նույն ժամանակաշրջանում, խորհրդային դարձած Հայաստանում Բեթհովենին այլ կերպ են անդրադարձել.

*Բեթհովեն մի ստվեր է անուժ*
*մեր վաղվա երգերի դեմ հսկա....*

ամենայն անպատասխանատվությամբ հայտարարեց պրոլետբանաստեղծ **Ազատ Վշտունին** իր «Մենք» բանաստեղծության մեջ (7):

Բեթհովենը պարբերաբար եղել է հայ մեծանուն գրող **Կոստան Զարյանի** (1885-1969) գրական մտասեւեռումների կենտրոնում: Նապոլեոնի մահվան 100-ամյակի առթիվ նա գրել է «Նապոլեոն, Բեթհովեն, Դանտե» հոդվածը (8), որտեղ մեկ ընդհանուր հայեցակարգի մեջ դիտարկել է մարդկության այդ երեք եւ միմյանց հետ կապ չունեցող ականավոր անձանց: Կյանքի վերջում էլ «Լիտերատուրնայա գազետային» տված հարցազրույցում Զարյանն ասել է. «Հիշեցե՛ք Ռոմեն Ռոլանին: Դժվար տարիներին նա դիմեց Բեթհովենի կյանքին, լավատեսություն եւ մարդկայնության աղբյուր գտավ այնտեղ» (9): Հայտնի է նաեւ, որ Կոստան Զարյանի գրած վերջին բանաստեղծությունը, 1969-ին, նվիրված էր Բեթհովենին, որը, սակայն, մնացել է անավարտ (10):

21-րդ դարում եւս հայ բանաստեղծը ներշնչվել է Բեթհովենի երաժշտությամբ: Խոսքը պոլսահայ հանրահայտ բանաստեղծ **Զարեհ Խրախունու** (1926-2015) մասին է, որը 2006-ին գրած իր «Մեկնաքերթուածներ» շարքում ընդգրկել է նաեւ «Հարց առ երկնաւորին» բանաստեղծությունը (11): Այն ունի «Մեկնութեան փորձ՝ ԼՈՒՏՎԻԿ վան ՊԷԹՕՎԷՆԻ դաշնամուրի 4-րդ քոնչէրթոյի (Օփուս 58) երկրորդ մասին» ենթավերնագիրը: Իր ծավալի եւ, ի տարբերություն նախորդ մեջբերված գործերի, երեւանյան մատչելի հրատարակության մեջ ընդգրկված լինելու պատճառով այն այստեղ չենք ներկայացնում:

Հայ բանաստեղծության անդաստանում թերեւս կլինեն այլ ստեղծագործություններ եւս, որոնցում հիշված կլինի գերմանացի հանճարեղ կոմպոզիտորի անունը: Սույն ակնարկով պարզապես ցանկացանք ոգեկոչել մեծ կոմպոզիտորի մահվան 190 տարին եւ գրականագետներին ու երաժշտագետներին հուշել այս հետաքրքրական ու չուսումնասիրված թեման...

### Ծանոթագրություններ

*1 Տես՝ Չորս տարեկան հայ դաշնակահար մը, «Ժողովուրդ», Թիֆլիս, 1.08.1919:*
*2 Տես՝ «Յառաջ», Երեւան, 31.07.1920:*
*3 Տես՝ Հայկ. Նուագահանդէս մը ի պատիւ Պէթհովէնի, «Պուլկարահայ ձայն», Սոֆիա, 16.04.1927:*
*4 Ալ. Պալատանով, Պէթհովէն կամ անմահ սէրը, նույն տեղում:*
*5 «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 29.05.1919:*
*6 Նույն տեղում, 28.09.1924:*
*7 Ազատ Վշտունի, Հուզանք ու զանգ, Ալեքպոլ, 1923, էջ 45:*
*8 Տես՝ «Հայկաշէն տարեգիրք գրականութեանց եւ գիտութեանց», կազմեց Յակոբ Սարգիսեան, Ա. տարի, 1922, Կ.Պոլիս, էջ 247-261:*
*9 Կոնստանտին Սերեբրյակով, Շարժման իմաստությունը, Երեւան, 1977, էջ 119:*
*10 Տես՝ Թորոս Թորանեան, Կոստան Զարեան (կեանքը եւ գործը), «Նայիրի», Պէյրութ, 15.03.1970:*
*11 Զարեհ Խրախունի, Տօնականչ, Երեւան, 2010, էջ 280-282:*

## «Ակնառու պաշտպանի» մրցանակ Թաներ Աքչամին

Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային ճանաչման արժանացած, ամերիկյան Քլարկ համալսարանի Հայոց ցեղասպանության ուսումնասիրությունների ամբիոնի վարիչ Թաներ Աքչամը 2018-ի մայիսին Մինեապոլիսում կայանալիք տարեկան միջոցառման ժամանակ պարգեւատրվելու է «Աշխարհն առանց ցեղասպանությունների» կազմակերպության «Ակնառու պաշտպան» մրցանակով՝ հանուն արդարության եւ օրինականության հաստատման իր երկարամյա պայքարի համար: Նա առաջին թուրք մտավորականն է, որ դեռեւս Անկարայի «Middle East» տեխնիկական համալսարանում ուսանելու տարիներից սկսել է բացահայտորեն խոսել Հայոց ցեղասպանության, ժողովրդավարության եւ ազատ արտահայտվելու իրավունքի մասին: Այս մասին տեղեկացնում է «Արմինյն Միրոր-Սփեքթեյթր» շաբաթաթերթը:

Հ. Ծ.

## «Նրանք ինձ Մուսթաֆա անվանեցին» գիրքն այժմ «Kindle-ի» եւ «Nook-ի» միջոցով

Ուոթերթաունում գործող «**Օհան**» հրատարակչատունը հայտնում է, որ **Խաչատուր (Արչի) Փիլիպոսյանի** 1999-ին լույս տեսած «**Նրանք ինձ Մուսթաֆա անվանեցին: Ներգաղթյալի հուշերը**» (They Called Me Mustafa: Memoir of an Immigrant) հատորն այժմ ընթերցողին հասանելի է նաեւ էլեկտրոնային տարբերակով «Amazon.com» եւ «Barnesandnoble.com» կայքերից համապատասխանաբար «Kindle» եւ «Nook» սարքերի միջոցով:

Հատորը խմբագրել եւ հավելյալ տեղեկություններով հարստացրել է **Հելեն Փիլիպոսյանը**: Մեկնաբանություններով հանդես է եկել նաեւ ճանաչված մտավորական **Երվանդ Ազատյանը**:

Հիշեցնենք, որ գիրքը Խաչատուրի ոդիսականն է, որին առեւանգում են քուրդերը 1915-ի Ցեղասպանության օրերին: Գերեվարությունից տարիներ անց փոքրիկին հաջողվում է փախչել եւ տեղափոխվել Ամերիկա: Հեղինակը նկարագրում է իր ծննդավայր Խարբերդը եւ Ուոթերթաունում (Մասաչուսեթս) ներգաղթյալների վաղ շրջանի կյանքը: Հետաքրքրական տեղեկություններ կան գրքում Ուոթերթաունում առաջին «Star Market-ի», որտեղ Խաչատուրը որոշ ժամանակ աշխատել է, նկարիչ Արշիլ Գորկու եւ երգիչ Ենովք Տեր-Հակոբյանի մասին:




Գրքի երկրորդ մասում ներկայացված են հեղինակի պատմվածքների եւ պոեմների թարգմանությունները անգլերեն լեզվով՝ կատարված **Հակոբ Սարգսյանի** եւ **Հելեն Փիլիպոսյանի** կողմից: Ընդգրկված են նաեւ հայրենաբաղձության նկարներ:

Հ. Ծ.

Ներդիրը հրատարակված է ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ: